

ՍՈՒՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ



SONA HAROUTYUNIAN

**IL TEMA DEL GENOCIDIO ARMENO
NELLA LETTERATURA ITALIANA**

Yerevan State University Press
YEREVAN 2015

ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
ԻՏԱԼԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ԵՊՀ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2015



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորված է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից

Հետազոտությունը կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության տրամադրած դրամաշնորհով

ՀՏԴ 821.131.1.0

ԳՄԴ 83.3(4Իս)

Հ 422

Հարությունյան Ս.

Հ 422 Հայոց Ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ/
Ս. Հարությունյան.—Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2015. — 128 էջ:

ՀՏԴ 821.131.1.0

ԳՄԴ 83.3(4Իս)

ISBN 978-5-8084-1970-4

© Ս. Հարությունյան, 2015

© ՀՀ սփյուռքի նախարարություն, 2015

«Թուրքի հունձքը»

Հնձում է թուրքը:

Հայի գլուխներն էին,

որ երեկ ընկան կեռ յաթաղանի տակ...

Ջ. Կարդուչի
1897

ԱՌԱՋԱԲԱՆ

Անտարակույս, Հայոց Ցեղասպանությունը շատ առումներով օրինակ ծառայեց մյուս ցեղասպանությունների համար: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի ազգայնամոլ բռնապետության թիրախ դարձան հայերն ու այլ քրիստոնյա փոքրամասնությունները, որոնց ենթարկեցին զանգվածային կոտորածների ու տեղահանությունների: Օսմանյան կայսրության իսլամական վարչակարգը քրիստոնյա հայերին մշտապես համարել է ստորադաս և խտրականություն ցուցաբերել նրանց նկատմամբ: Տասնիններորդ դարի վերջին ու քսաներորդ դարի սկզբին խաղաղ հայ բնակչությունը ենթարկվեց Օսմանյան պետության կողմից իրականացված ջարդերին, որոնք պատճառ դարձան հարյուր հազարավոր հայերի մահվան: Զանգվածային սպանություններ իրականացնող հանցագործները մնացին անպատիժ, որը և մեծացրեց նման վայրագությունների կրկնվելու հավանականությունը՝ խլելով շատ ավելի մեծ թվով մարդկային կյանքեր:

Հայոց Ցեղասպանությունը գլխավորապես իրագործվեց 1915 թվականից սկսած, թեև երիտթուրքերն ավելի վաղ էին մշակել իրենց գաղտնի ծրագրերը: 1915 թվականի փետրվարից օսմանյան բանակի հայ զինծառայողներին զինաթափեցին, այնուհետև կամ սպանեցին, կամ էլ ուղարկեցին հարկադիր աշխատանքի գումարտակներ, որտեղ նրանցից շատերը մահացան հյուժող աշխատանքից, օթևան չունենալուց և սննդի պակասից: Դրանից հետո սպանեցին նաև այն սակավաթիվ մարդկանց, ովքեր դիմակայել էին այդ դաժան պայմաններին: Ապրիլի 24-ից Կոստանդնուպոլսում ձերբակալեցին, բանտարկեցին, խոշտանգեցին ու կարճ ժամանակ անց սպանեցին անվանի հայերի: Հայազգի հասարակական, կրոնական, քաղաքական վերնախավին ոչնչացնելու այս եղանակը տարածվեց ողջ Օսմանյան կայսրությունում: Հայ ընտանիքների ունեցվածքը զանգվածայնորեն առգրավվեց պետության կողմից: Արագորեն հայաթափվեցին հայկական գյուղերն ու քաղաքները:

Կանանց, երեխաներին ու ծերերին հրամայեցին մի քանի ժամվա կամ առավելագույնը մի քանի օրվա ընթացքում հավաքվել կենտրոնական հրապարակներում, որտեղից սկսվելու էին բռնի տեղահանությունները դեպի Սիրիայի անապատ: Բավարար սննդի, ջրի ու հագուստի բացակայությունը «մահվան քարավաններին» անասելի տառապանքներ պատճառեց՝ սով, ջրազրկում, բնակլիմայական պայմանների բացասական ազդեցություն: Երիտասարդ կանայք բռնաբարվում և առևանգվում էին թուրք ոստիկանների ու տեղի ցեղերի կողմից: Աննկարագրելի սարսափներ կրած կանանց, երեխաների ու ծերերի մեծ մասը ողջ չմնաց¹:

Հայոց Ցեղասպանության արդյունքում կոտորվեց մեկուկես միլիոն մարդ, հարյուր հազարավոր հայեր դարձան գաղթական, որբացան հարյուր հազարից ավելի երեխաներ: Սպանվածների թիվն ահռելի էր: Հայ բնակչության բռնի տեղահանությունները պատճառ դարձան Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի զանգվածային արտագաղթին դեպի հարևան երկրներ:

Հայոց Ցեղասպանությունից փրկվածների համար Իտալիան դարձավ այս հանգրվաններից մեկը: Նոր երկրում գոյատևելու համար հոգեկան տառապանքներ կրած ներգաղթյալները, ըստ Մասլովի «կարիքների սանդղակի»², պետք է նախ և առաջ ձեռք բերեին սնունդ, օթևան, այնուհետև՝ աշխատանք: Հաջորդ քայլը նոր երկրին, նոր մշակույթին հարմարվելն էր և նրա լեզուն սովորելը:

Չնայած վիթխարի կորուստներին, շարունակվող մղձավանջներին, սարսափելի փորձությունները վերապրելու մեծ ցավին՝ ոմանք սկսեցին գրել իրենց աղետալի չարչարանքների ու ողբերգական ճակատագրի մասին: Նրանք հիմնականում գրում էին իրենց մայրենի լեզվով՝ հայերենով, սակայն կային վերապրյալներ, որոնք գրում էին այլ լեզվով, որ սովորել էին իրենց հայրենիքում կամ նոր՝ որդեգրյալ երկրում: Շատ հաճախ այս գրառումները կցկտուր էին,

¹ A. Whitehorn (ed.). The Armenian Genocide: The Essential Reference Guide. Santa Barbara, ABC-CLIO, 2015.

² A. Maslow. "A theory of human motivation". Psychological Review 50 (4) 370–96, 1943.

անավարտ և մնում էին չհրատարակված: Երբեմն դրանք հրատարակվում էին հայերեն՝ փոքր տպաքանակով, որոնք հայ համայնքից դուրս քչերին էին հայտնի դառնում: Երբեմն պատահում էր, որ գրվածքները հրատարակվում և հասու էին դառնում ընթերցողների առավել լայն շրջանակներին, երբեմն թարգմանում էին օտար լեզուներով և հազվադեպ՝ նաև ֆիլմ նկարահանում:

Անտոնիա Արսլանի «Արտույտների ազարակը» հայ-իտալական գրականության ուշագրավ օրինակներից է: Այն հուզիչ ու զորավոր վեպ է հեղինակի ազգականների տառապալից ողիսականի մասին:

Այսօրինակ կենսագրությունները, ականատեսների հիշողություններն ու գրական ստեղծագործությունները կարևոր վկայություններ են և կարող են ծառայել որպես առանցքային դիվանային փաստաթղթեր Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի բռնապետության օրոք իրականացված հայերի զանգվածային տեղահանությունների ու ջարդերի անհատական, ընտանեկան ու ազգային փորձության մասին³: Վերոհիշյալ գրվածքների հանրագումարը լրացնում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի մարդկության հանդեպ գործած հանցանքների մասին հայոց զոհերի անհամար ապացույցներն ու վկայությունները:

Մի շարք երկրներում սփյուռքահայերը ի մի են բերել ու վերապատմել իրենց ահասարսուռ պատմությունները: Թե՛ առաջին տասնամյակների և թե՛ վերջին տարիների ընթացքում նրանք երբեմն նաև հրատարակել են այդ հուշերի ժողովածուները:

Սույն գրքում Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Սոնա Հարությունյանը ներկայացնում և գրական, լեզվաբանական ու հոգեբանական տեսանկյուններից բժախնդիր վերլուծում է Հայոց Ցեղասպանության վերապրյալների վկայությունները, ականատեսների հիշողություններն ու Իտալիայում լույս տեսած գեղարվեստական գրականությունը:

³ Տե՛ս Վերժինե Սվազլյանի՝ իր տեսակի մեջ առաջին կոթողային աշխատությունը՝ V. Svazlian. The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors. Gitutium, Yerevan, 2011:

Սա Իտալիային անդրադարձող առաջին համապարփակ աշխատությունն է և, որպես այդպիսին, նշանակալից դեր ունի այս երկրում հանգրվանած հայ վերապրյալների և օտարազգի վկաների փորձառության ու հիշողությունների մասին մեր ըմբռնումը խորացնելու գործում: Մաղթենք, որ այս աշխատության օրինակին հետևեն մյուս երկրները և հրատարակեն համապատասխան ժողովածուներ: Այս ձևով հայկական սփյուռքի պատմության պատառիկները կմիահյուսվեն՝ ամբողջացնելու Հայոց Ցեղասպանության ընդհանուր նկարագիրը:

Ալան Ուայթհորն

*Քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր
Թագավորական ռազմական համալսարան, Կանտաբրի*

ՍԱՍՈՒՆՑԻ ԱՂԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ⁴
ՎԱՆԵՑԻՆԵՐ ՄԿՐՏԻՉ ԱԹՎՇՅԱՆԻ, ՔԱՐՄԻԼԵ ՊԱՐՈՆԻԿՅԱՆԻ⁵
ԵՎ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԲՈԼՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

⁴ Հայոց Ցեղասպանության վերապրյալ Աղասի (Ղազոյան) Հարությունյանը՝ հորս պապը, Սասնա գավառից մագապործ հասել էր Հայաստան և բնակություն հաստատել Թալինի շրջանում: 1920 թվականի սեպտեմբերին, երբ Մուսթաֆա Քեմալի հրահանգով թուրքական զորքերը Կարաբեքիրի գլխավորությամբ հարձակվեցին Հայաստանի Հանրապետության վրա, Աղասին իր եղբոր՝ Հարութիկի (եղել էր գորավար Անդրանիկի զինվորը) և զինակից ընկերների կողքին սկսեց քաջաբար մարտնչել ինքնապաշտպանական ջոկատներում: Կինը՝ Սոնան (ում անունը սիրով կրում եմ), հղի էր: Հոկտեմբերի վերջին, երբ իրավիճակն առավել սրվեց, Աղասին որոշեց ապահովության նպատակով կնոջը տեղափոխել հայրական տուն՝ Շիրակի շրջանի Հայրենյաց գյուղը: Ականատեսների վկայությամբ՝ հետդարձի ճանապարհին երկու թուրք հարձակվում են վրան: Աղասին նրանց հետ ձեռնամարտի է բռնվում, սակայն մի երրորդ թուրք թիկունքից հարվածում է նրան և գետին տապալում: Իրենց սև գործը վերջնական հաջողությամբ պսակելու համար թուրքերը գետինի ընկած արնաթաթախ Աղասիի գլուխը ձգում են ծանր քարով: Աղասիին բախտ չլիճակվեց տեսնելու որդու՝ Նիկոլի (պապիս) ծնվելը, որին Սոնան լույս աշխարհ պիտի բերեր երկու ամիս անց, որը պիտի վերապրեր թուրքերի վայրագություններից, որի բարուրը թուրքերը սվինով պետք է բացեին և որոշեին՝ սուրը փո՞րը խրել, թե՛ մանկանը նետել սառույցի վրա՝ մահկանացուն կնքելու: «Բարեսիրտ» գտնվեցին՝ նախապատվությունը տալով երկրորդ տարբերակին: Նիկոլը վերապրեց: 1924 թ. մահացավ նաև Սոնան: Չորս տարեկան Նիկոլը մորաքույրների հոգատար ձեռքերով մեծացավ, ընտանիք կազմեց, ԵՊՀ իրավաբանության ֆակուլտետն ավարտելուց հետո իր ողջ ուժն ու եռանդը դրեց ի սպաս հայրենիքի, վարեց տարբեր պաշտոններ, կուրծքը զարդարվեց շքանշաններով, դարձավ պատգամավոր: 1985 թվականին հավետ փակեց աչքերը՝ միանալու իր Աղասի և Սոնա ծնողներին:

⁵ Վանեցիներ Մկրտիչի և Քարմիլիկի՝ մորս պապի ու տատի պատմությունը տե՛ս սույն գրքի ներածության մեջ, էջ 16–17:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքի շատ համայնքներում Հայոց Ցեղասպանության հուշագրություններն ի հայտ եկան 1915 թ. ողբերգությունից բավականին ուշ, չնայած հայտնի են որոշ դեպքեր, երբ վերապրածներն անմիջապես վկայություն են տվել: Մասնավորապես 1916 թվականին անգլիական պետական, հասարակական–քաղաքական գործիչ Ջեյմս Վիսկոնտ Բրայսի խմբագրությամբ և ընդարձակ առաջաբանով Լոնդոնում լույս տեսավ «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915–1916 թթ.» վկայությունների ծավալուն ժողովածուն, որը սովորաբար կրճատ մեջբերվում է որպես «Կապույտ գիրք»: Այնտեղ գետեղված են հայերի կոտորածների ու տեղահանությունների առնչությամբ երիտթուրքերի քաղաքականությունը մերկացնող բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ: Գիրքը ներառում է Միացյալ Նահանգների հյուպատոսական ու միսիոներական աղբյուրներում առկա, ինչպես նաև գերմանացի, իտալացի, դանիացի, շվեդ, նորվեգացի, հույն, քուրդ ու հայականատեսների վկայությունները⁶: Այն Ուայթհորնի խոսքերով՝ «Նույնիսկ մեկ դար անց «Կապույտ գիրքը» մնում է Հայոց Ցեղասպանությունը վկայող սկզբնաղբյուրներից մեկը: Այն հզոր միջոց է պատմական եղելությունը հերքողների դեմ»⁷:

⁶ J. Bryce, A. Toynbee. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1915: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce. Taderon Press, Gomidas Institute, London, 2000. Առաջին հրատարակության մեջ բազմաթիվ մարդկանց անուններ և տեղանուններ միտումնավոր բաց էին թողնված: Դրանք թողարկված մնացին նաև հետագա տարիների վերահրատարակություններում: Ինը տասնամյակ անց առաջին հատորը վերահրատարակվեց Լոնդոնի Կոմիտաս ինստիտուտի կողմից՝ Ա. Սարաֆյանի ներածականով, որի մեջ վերջինս հերքում է թուրք ազգայնական հեղինակների կրկնվող պնդումներն այն մասին, որ «Կապույտ գիրքն» ընդամենը բրիտանական քարոզչական մեքենայի հորինվածքն է: Հրատարակության մեջ Սարաֆյանը վերականգնել է գաղտնի պահված անունները, ինչպես նաև վերհանել աշխատության ստեղծման պատմությունը՝ ձշգրտորեն ցույց տալով, թե ինչպես են վկայությունները հավաքվել, ստուգվել ու այնուհետև տպագրվել:

⁷ A. Whitehorn (ed.). The Armenian Genocide: The Essential Reference Guide. ABC-CLIO, Santa Barbara, 2015.

Կրած սարսափներն արտացոլվել են նաև Եղեռնից փրկված և ցիրուցան եղած ընտանիքների վերամիավորմանն աջակցող մարդասիրական կազմակերպություններին հանձնված նամակներում ու գրություններում: Վերջիններս, ի թիվս այլոց, հավաքվել են Պետրոս Տոնապետյանի կողմից և 1922 թ. մասնավոր միջոցներով հրատարակվել Լոնդոնում «Ձայն տառապելոց» վերնագրով⁸:

Հայոց Ցեղասպանությունը վկայված է նաև արևմտյան միսիոներների կողմից արված անհամար լուսանկարներում: Այսօր Արմին Վեգների լուսանկարները կազմում են «Ցեղասպանությունը վկայող փաստաթղթերի հիմքը»⁹: Կարևոր նշանակություն ունեն նաև ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի՝ Վաշինգտոն ուղարկած հաղորդագրությունները¹⁰:

Միջազգային հեղինակավոր «New York Times» լրագիրը ևս լայնորեն լուսաբանել է հայերի կոտորածները¹¹: Ինչպես նշում է Ա. Ուայթհորնը, լրագիրը գործածել է տարբեր բառեր և արտահայտություններ՝ զարհուրելի տեսարաններն ու արարքները նկարագրելու համար, այդ թվում՝ «թալան», «մեծ արտագաղթ», «մեծ տեղահանություն», «ամբողջովին ամայացած», «զանգվածային տեղահանություններ», «պարբերաբար բնաջնջում էին», «տեղի բնակչության զանգվածային բնաջնջում», «երիտասարդ կանայք

⁸ Պ. Տոնապետեան, Ձայն տառապելոց, Փարիզ, տպ. Յակոբ Բ. Թիրապետան, 1922, վերատպ. Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2008: Հատորը ներկայումս թարգմանվում է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և թուրքերեն:

⁹ P. Balakian. *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*. HarperCollins, New York, 2003, p. 258–259, տես նաև AA. VV. Armin T. Wegner e gli Armeni in Anatolia, 1915 – Immagini e testimonianze. Guerini, Milano, 1996, Дж. Гвайта, Крик с Арапата. Армин Вегнер и Геноцид армян, Юнистрой СК, Москва, 2005:

¹⁰ H. Morgenthau. *Ambassador Morgenthau's Story*. Doubleday, Page & Company, New York, 1918. 1918 թվականին Նյու Յորքում հրատարակվում է «Դեսպան Մորգենթաուի պատմությունը» գիրքը, որն ընդգրկում է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը: 1918 թվականից ի վեր գիրքը բազմիցս վերահրատարակվել և թարգմանվել է մի շարք լեզուներով:

¹¹ V. Mekhitarian, V. Rev. Ohanian (Eds.). *Armenians At The Twilight Of The Ottoman Era. News Reports From The International Press. Vol. I. The New York Times 1890–1914. Genocide Documentation & Research Center, Yerevan, 2011.*

ու աղջիկներ, որոնց թուրքերը սեփականացնում էին, նետում հարեմներ, ոտնձգություններ կատարում նրանց նկատմամբ կամ էլ վաճառում ամենաթանկ վճարողին», «երեխաների մասսայական առևանգումներ», «գեղեցկադեմ երիտասարդ աղջիկների առևանգումներ», «բռնաբարություն», «անօրինակ դաժանություն», «զարհուրելի արարքներ», «սպանություն, բռնաբարություն և այլ բարբարոսություններ», «կրում են սարսափելի տանջանքներ», «նողկալի կտտանքներ», «կրծքերը կտրված են, եղունգները հանված, ոտքի թաթերը կտրված», «մուրճով մեխ էին խփում կրունկների մեջ այնպես, ինչպես պայտում են ձիերին», «ողջակիզում էին», «անօգնական կանայք ու երեխաները խորովվում էին կրակի վրա», «վայրագություններ», «աներևակայելի գազանություններ», «պարբերաբար սպանում էին տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին քշում էին անապատ, որտեղ հազարավորները սովամահ էին լինում», «զանգվածային ջարդեր», «զանգվածային կոտորածներ», «դժոխային ջարդեր», «ջարդը պլանավորված էր», «այս երկրի ամենահանգամանորեն կազմակերպված ու նպատակաուղղված ջարդերը», «բնաջնջման քաղաքականությունը», «քրիստոնեությունն արմատախիլ անելու ծրագիր՝ հայազգի քրիստոնյաներին կոտորելու միջոցով», «ողջ հայ ժողովրդին ոչնչացնելու ծրագիր», «միտումնավոր բնաջնջում էին», «տառացիորեն ողջ ազգը ոչնչացվեց», «մի ողջ ժողովրդի ոչնչացում», «թալանի, տեղահանությունների, զանգվածային սպանությունների և ջարդերի կազմակերպված համակարգ», «կողոպուտ, բռնաբարություն, սպանություն, զանգվածային վտարումներ և տեղահանություններ, ջարդեր», «Թուրքիայի իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու կանոնավոր, լիազորված ու հուսահատ ջանքեր», «ազգի նպատակադրված կոտորած», «բնաջնջման պատերազմ», «ռասայի բնաջնջում», «միտում կար ոչնչացնելու հայկական ռասան», «Հայաստանն առանց հայերի», «Հայաստանին սպառնում է ոչնչացումը», «Հայաստանի մահը», «տեղահանության հրամանը և դրան հաջորդող կոտորածը», «նպատակը Արևելյան Թուրքիայի ոչ մահմեդական ազգերի

իսպառ ոչնչացումն է» և «հանցագործություններ՝ քաղաքակրթության ու բարոյականության դեմ»: Գրանցված է առնվազն տասն օրինակ (հինգը՝ նախքան 1915 թ., մնացած հինգը՝ դրանից հետո), որտեղ աստվածաշնչյան «ողջակեզ» (հոլոքոստ) բառը լայն իմաստով գործածվում է հայերի ողջակիզումը, քրիստոնյաների կոտորածները կամ հայ ժողովրդի բնաջնջումը նկարագրելու համար¹²: Ակնհայտ է, որ հեղինակները փորձում էին գտնել այնպիսի բառեր, որոնցով հնարավոր լիներ արտահայտել ահասարսուռ տեսարանների ու բարբարոս արարքների չափերը:

Չնայած կողմնակի անձինք իրենց տեսածից ցնցված էին ու մեծապես վրդովված, այնուամենայնիվ կարողանում էին դեպքերը փաստագրել հաղորդագրությունների, լուսանկարների միջոցով: Մինչդեռ անասելի տառապանքների բեռը կրող Ցեղասպանության վերապրյալներն արտահայտվելու երկարատև հոգեբանական խնդիրներ ունեին, և նրանց համար ծայրաստիճան դժվար էր, երբեմն էլ անհնար՝ բարձրաձայնել կամ մանրամասնել կրած աննկարագրելի տառապանքները, ուստի ջանում էին ձնշել հիշողությունները:

Ինչպես ընդգծում է Ռ. Փիրումյանը, «Հոգեբանական արգելքը պատճառներից մեկն էր, որ առաջին սերունդը հարուստ վկայություն չթողեց: Հայ գրականության հսկաները, որոնք պիտի կարողանային իրենց անձնական փորձը հավիտենականությանը հանձնել, նահատակվեցին, իսկ փրկվողներից քչերը փորձեցին դժոխքի կրակից արվեստ ստեղծել: Հարվածը մեծ էր ու անմիջական. ժամանակի ու տարածության որոշակի հեռավորություն էր պետք»¹³:

¹² A. Whitehorn (ed.). *The Armenian Genocide: The Essential Reference Guide*. ABC-CLIO, Santa Barbara, 2015, p. 110–111. Տևն նաև V. Mekhitarian, V. Rev. Ohanian (Eds.). *Armenians At The Twilight Of The Ottoman Era. News Reports From The International Press. Vol. I. The New York Times 1890–1914. Genocide Documentation & Research Center, Yerevan, 2011.*

¹³ R. Perroomian. *The Armenian Genocide in Literature: Perceptions of Those Who Lived Through the Years of Calamity*. The Armenian Genocide Museum–Institute, Yerevan, 2012, p. 424.

Վերապրյալները հաճախ այն կարծիքին էին, որ «[...] իրենց կյանքն ընտանիքից ու մոտ ընկերներից բացի ոչ ոքի հետաքրքիր չէ»¹⁴:

Վանեցիներ Մկրտիչ Աթաշյանն ու Քարմիլե Պարոնիկյանը՝ մորս պապն ու տատը, ում հիշատակին, ի թիվս այլոց, նվիրվում է այս գիրքը, գերծ չէին այդ խոչընդոտից: Նրանց պատմությունը, որն առաջին անգամ է հրատարակվում, գալիս է հաստատելու վերը նշվածը. նրանք ևս, շատերի նման, մանրամասնելու փոխարեն սահմանափակվել են՝ պատմելով միայն որոշ «զտված» հատվածներ իրենց անցյալից:

1915 թվականին Մկրտիչն ութ տարեկան էր, իսկ Քարմիլեն՝ չորս: Երկուսն էլ Վանից էին, բայց միմյանց հանդիպել էին Երևանի որբանոցում և ամուսնացել, երբ Քարմիլեն տակավին 15 տարեկան էր: Շատերի նման նրանք էլ երբեք չպատմեցին իրենց փրկվելու պատմությունը: Միակ բանը, որ Մկրտիչը կրկնել է, հետևյալն է եղել. «Մեր ոսկու կճուճն էն ա տանձի ծառի տակը խորած ի, էգուց մէկ էլ օր կերթաք, կհանէք»: Երբեմն էլ ասել է. «Մեր պալնիս (բանալին) էն ա դռան վերեն ի, էգուց մէկ էլ օր կերթանք, մեր տուռ կպացենք»: Նաև պատմել է, որ հայրը, իմանալով, որ թուրքերը մտել են իրենց այգին խնձոր գողանալու, սաստիկ զայրացել է, վերցրել կացինն ու սկսել ձյուղերը կտրել՝ ասելով, որ ավելի լավ է կտրի, քան թե պտուղը թուրքերին հասնի: Թուրքերը, «այս մարդը արեշ¹⁵ է» ասելով, փախել են: Այդտեղից էլ՝ նրա սերունդների Աթաշյան ազգանունը: Մինչ Քարմիլեն երբեմն հիշել է իրենց տունը՝ Վանի մեծահարուստների Այգեստան թաղամասում, որտեղ բոլորին բարոն են անվանել (այստեղից էլ՝ նրանց Պարոնիկյան ազգանունը): Մտաբերել է իրենց պարտեզը, որը հարևան պարտեզներից ցանկապատի

¹⁴ S. Garna. «Come il cielo semi coperto, il sole si intravede di tanto in tanto, così la mia memoria» I bambini nel Metz Yeghérn armeno. DEP (Deportate, Esuli, Profughe. Rivista telematica di studi sulla memoria femminile), n. 3, 2005, 1.

¹⁵ Պարսկ.՝ կրակ:

փոխարեն բաժանված է եղել սերկևիլի ծառերով, և որտեղ հայրը՝ Վանի մեծահարուստ Ստեփան աղան, ջորիով է ման եկել: Միայն այսքանը, ոչ մի բառ ջարդերի մասին: Հարցերին սահմանափակվում էին պատասխանելով, որ իրենք Վանից դուրս էին եկել «այդ դեպքերից» մեկ տարի առաջ: Հարազատները չէին ցանկանում լրացուցիչ հոգեբանական ցնցում պատճառել հարցադրումներով: Մյուս կողմից՝ խորհրդային իշխանության շրջան էր, և մարդիկ վախենում էին խոսելուց¹⁶:

Վերապրյալները հաճախ հրաժարվում էին պատմելուց՝ նշելով, որ նրանց «սիրտը չի կարող տանել ողբերգական փորձառությանը կրկին անդրադառնալը»¹⁷, կամ, ինչպես Դանտեն կասեր, որի «հուշն անգամ նորոգում է երկյուղս» (Դժոխք, Ա, 6):

Այնուամենայնիվ, նրանցից շատերը որոշեցին հաղթահարել հոգեբանական ճնշվածությունը և թղթին հանձնել այն, ինչի մասին պետք է աշխարհն իմանար: Վերապրածների հուշերն ի հայտ եկան մեծ դժվարությամբ, հաճախ մեկուսացման մեջ, փոքր տպաքանակով: Դրանք աշխարհ եկան տարբեր պայմաններում և վայրերում, որոնք այսօր բնութագրում են համայն Սփյուռքը: Երբեմն էլ այս հուշերը մնացին իբրև անտիպ ձեռագրեր և որոշ դեպքերում հրատարակվեցին միայն տարիներ անց վերապրյալների զավակների միջամտությամբ:

Մինչև 1970-ականները Հայոց Ցեղասպանությամբ զբաղվող գիտնականի ուշադրությունը վճռականորեն ու բացառապես կենտրոնացած էր փաստաթղթերի, վիճակագրության ու տվյալների վրա: Բանավոր պատմությունն ու հուշագրությունները համարյա ուշադրության չէին արժանանում երկու հիմնական պատճառով: Առաջինը գաղափարական է, քանի որ գիտնականները զբաղված էին հիմնական փաստերը հերքողներին առձակատելով

¹⁶ Մանրամասների համար շնորհակալ եմ վերապրյալների դուստր Սեդմար Աթաշյանից:

¹⁷ Վերապրյալ Արշակունի Պետրոսյանի վկայությունը (ծնվ. 1903 Յոզգաթում), տե՛ս V. Svazlian. The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors. Gitutian, Yerevan, 2011, p. 351:

և ապացուցելով Հայոց Ցեղասպանության իրողությունը: Հանուն գիտական անաչառության հաճախ թերագնահատվել է հայկական աղբյուրների կարևորությունը Հայոց Ցեղասպանության պատմության վերականգնման գործում, քանի որ ժխտողական քաղաքականություն վարողների պնդմամբ՝ այդ աղբյուրները, լինելով տուժած կողմի վկայություններ, օբյեկտիվության բացակայության հետևանքով չէին կարող համարվել արժեքավոր և հուսալի պատմական փաստաթղթեր: Հետևելով այս տրամաբանությանը՝ որոշ հայ պատմաբաններ կանոնավոր կերպով հրաժարվել են հայկական աղբյուրների օգտագործումից, որպեսզի նրանց գիտական գործունեությունը կողմնակալ չհամարվեր միջազգային պատմաբանների կամ թուրք գիտնականների կողմից:

Երկրորդ պատճառը գործնական է. ժամանակին ընդունված չէր բանավոր պատմությունների հավաքագրումը կամ հուշագրությունների վերլուծությունը: Այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանագիտությունը նկարագրականից հետզհետե դարձավ վերլուծական՝ ընդգրկելով ոչ միայն պատմության, այլև մշակույթի ոլորտները՝ այդպիսով կարևորելով հուշագրությունների, ականատեսների վկայությունների, ինչպես նաև գրականության դերը պատմական եղելությունը առավել խոր ըմբռնելու, լուսաբանելու և տարածելու գործընթացում¹⁸:

¹⁸ Ազգագրագետ ու բանահավաք Վ. Սվազլյանը կես դարից ավելի Հայոց Ցեղասպանությունը վերապրած հայրենադարձներից ձայնագրել ու հետազայում հրատարակել է նրանց վկայություններն ու երգերը՝ վերջիններս փրկելով անդարձ կորստից (տես Svazlian, 2011): 1970–ականներին Ռ. Հովհաննիսյանը ձեռնարկել է հայկական համայնքի բանավոր պատմության ամենամեծ նախագիծը՝ հարցազրույց անցկացնելով վերապրածների հետ ու ձայնագրելով նրանց պատմությունները: 2005 թվականը դարձավ շրջադարձային, քանի որ թվայնացվեցին բոլոր 800 հարցազրույցները: Ուսումնական ֆիլմերի ռեժիսոր Մ. Հակոբյանը ավելի քան քառասուն տարի հավաքել է Հայոց Ցեղասպանության վերապրածների ու ականատեսների հետ անցկացրած չորս հարյուր հարցազրույց՝ վճռական նպատակ ունենալով պահպանելու անցյալը հանուն ապագայի: Այժմ Մ. Հակոբյանի դիվանը պահվում է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի «Շոա» հիմնադրամ–ինստիտուտում: 1983 թ. «Զորյան» ինստիտուտը ձեռնամուխ եղավ բանավոր պատմության մեծածավալ ծրագրի, որի նպատակը Հայոց Ցեղասպանության վերապրածների հուշերի տեսադարանի ստեղծումն էր: Նրանք հավատացած էին, որ վկայությունների վավերականությունն ու պատմական արժեքը մեծապես կշահեն,

Այսօր՝ Եղեռնից մեկ դար անց, ցավոք, դեռևս չունենք առանձին պետություններում հուշագրությունները, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության մասին գեղարվեստական գրականությունն ամփոփող աշխատությունների ամբողջական պատկերը:

Սույն աշխատությունը ներկայացնում է Իտալիայում լույս տեսած հուշագրություններին և գեղարվեստական գրականությանն անդրադարձող առավել ընդարձակ գիտական հետազոտության առաջին արդյունքները: Հաշվի առնելով, որ առաջին անգամ է իրականացվում նման հետազոտություն, կատարվել է ընդգրկվելիք նյութի որոշակի ընտրություն: Այս հետազոտությունը կարող է տիպային օրինակ համարվել ուսումնասիրելու մյուս երկրների Հայոց Ցեղասպանության գրականության պատկերը՝ դառնալով անհրաժեշտ գործիք հետագա համեմատական աշխատանքի համար, որի արդյունքում հնարավորություն կունենանք ստանալու հետցեղասպանական Սփյուռքի առավել լիարժեք պատկերը:

Ուսումնասիրության առաջին գլուխը քննության է առնում Իտալիայում Հայոց Ցեղասպանության թեմայով հրատարակված հուշագրություններն ու որոշ գեղարվեստական գրքեր: Հուշագրություններից մեջբերումներն իտալերենից թարգմանված են արևմտահայերեն՝ թե՛ խոսքին բնականություն հաղորդելու և թե՛ Մեծ Եղեռնի սերնդի լեզուն վերապրեցնելու միջոցով ևս մեկ անգամ վերապրյալներին ու նահատակներին հարգանքի տուրք մատուցելու նպատակով: Գլխի վերջում ներկայացված է նաև Մեծ Եղեռնի թեմայով այլ պետություններում լույս տեսած և իտալերեն թարգմանված ստեղծագործությունների մատենագիտությունը:

Երկրորդ գլուխը քննարկում է գրական ժանրը՝ որպես Հայոց

Եթե ականատեսի ձայնին գումարվի վերջինիս պատկերը: Վերոնշյալ ու այլ բանավոր պատմությունների ծրագրերը գերկարևոր են, քանի որ արդեն գործընթացի ժամանակ աշխարհում մնացել էին սակավաթիվ վերապրյալներ: Առանց հիշյալ ճիգերի բոլոր այս ականատեսների վկայություններն իսպառ մոռացության կմատնվեն՝ անհետ կորչելով պատմության թատերաբեմից: Հաջորդը, ով իր մեծ ներդրումն է ունեցել այս գործում, Ռ. Փիրուլյանն է: 1990–ականներին նա սկիզբ դրեց Ցեղասպանության գեղարվեստական գրականության ուսումնասիրմանը: Տե՛ս Peroomian (1993, 2003, էջ 314–322, 2008, 2012):

Ցեղասպանության պատմական հիշողությունն առավել ուշագրավ դարձնող միջոց՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով իտալահայ նշանավոր վիպագիր Անտոնիա Արսլանի՝ Մեծ Եղեռնին նվիրված ստեղծագործությունները: Գլխում շեշտվում է նաև թարգմանության ուժը՝ որպես միջմշակության, միջլեզվական կամուրջ, և ներկայացվում են «Արտույտների ագարակը» վեպի բազմաթիվ լեզուներով թարգմանությունները, ինչպես նաև բացառիկ հարցազրույցներ թարգմանիչների հետ: Գլխի վերջում անդրադարձ է կատարվում իտալացի կինոբեմադրիչներ Տավիանի եղբայրների կողմից նկարահանված «Արտույտների ագարակը» վեպի էկրանավորված տարբերակին: Առաջին անգամ ներկայացված են նաև աշխարհի տարբեր համալսարաններում մեր բազմաթիվ քննարկումների արդյունքում կինոգետներից և ուսանողներից ստացված պատասխանները «Արտույտների ագարակը» վեպի և համանուն ֆիլմի վերաբերյալ:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Հայոց Ցեղասպանության թեմայով Իտալիայում լույս տեսած հուշագրությունների և գեղարվեստական գրականության պատկերը, ինչպես նաև վերլուծել Մեծ Եղեռնի թեման լուսաբանող միջոցների (գրականություն, թարգմանություն, կինո) ազդեցությունն ընթերցողի ու հանդիսատեսի վրա, միջոցներից յուրաքանչյուրի հնարավորության սահմանները, և թե ինչպես են այս բոլորը տարբեր ճանապարհներով լուսաբանում, առավել ուշադրության արժանացնում Մեծ Եղեռնի պատմական երևույթը:

Ուսումնասիրության մեջ գրականությունը ներկայացված է որպես կամուրջ սփյուռքագիտության և ցեղասպանագիտության միջև:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Սույն հրատարակությունը հնարավոր դարձավ շնորհիվ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում ՀՀ սիյուռքի նախարարության տրամադրած դրամաշնորհի, որի համար հայտնում եմ երախտագիտությունս նախարար տիկին Հրանուշ Հակոբյանին:

Աշխատության առաջին արդյունքները հասունացել են Կալիֆոռնիայի պետական համալսարանի (Ֆրեզնո) «Henry Kazanjian visiting professorship» ծրագրի շրջանակում 2013 թվականին դասավանդած «Հայոց Յեղասպանության թեման գրականության և թարգմանության մեջ» դասընթացի ժամանակ, որի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը Բարլո Տեր-Սկրտչյանին (Ֆրեզնոյի համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ) և Սերջո Լա Պորտային (Ֆրեզնոյի համալսարանի «Հայկ և Իզաբել Բերբերյանների» անվան պրոֆեսոր)՝ այդ առիթն ինձ ընձեռելու և ջերմ ընդունելության համար:

Նախնական արդյունքները ներկայացվել են նաև աշխարհի զանազան համալսարաններում և գիտական հաստատություններում տրված զեկուցումների ընթացքում, այդ թվում՝ Կալիֆոռնիայի պետական համալսարան (CSUF, Ֆրեզնո, 2013 թ.), Հարավային Կալիֆոռնիայի համալսարան (USC, Լոս Անջելես, 2013 թ.), Ամերիկայի Հրեական համալսարան (AJU, Լոս Անջելես, 2014 թ.), ՀՀ ԳԱԱ (Երևան, 2014 թ.), Կա'Ֆոսկարի համալսարան (Վենետիկ, 2014 թ.), Կալիֆոռնիայի համալսարան (UCSB, Սանտա Բարբարա, 2015 թ.), որի համար շնորհակալություն եմ հայտնում «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության Հայկական համայնքների բաժանմունքին, Հայագիտական ուսմանց և հետազոտությունների համագգային ընկերությանը (NAASR, ԱՄՆ), «Վարդանի Ասպետներ» Հայագիտական ուսումնասիրությունների հիմնադ-

րամին (ԱՄՆ), Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությանը (SAS, ԱՄՆ)՝ վերջին տարիների ընթացքում տրամադրած հետազոտական դրամաշնորհների համար, որոնք ծնունդ տվեցին նոր ուսումնասիրությունների: Սույն թեմային տարբեր տեսանկյուններից անդրադարձել ենք նաև մեր մի շարք հրատարակություններում, այդ թվում՝ «Echoes of the Armenian Genocide in Literature and Cinema» (Annali di Ca' Foscari, Վենետիկ, 2015), «Armenian Genocide and Translation» (Նյու Յորք, 2015), «Narrating The Armenian Genocide: An Italian Perspective» (Լոս Անջելես, 2015) և «Women and the Armenian Genocide», որն ընդգրկված է Կանադայում լույս տեսնող Հայոց, հնչպես նաև Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի ցեղասպանություններին և Հոլոքոստին նվիրված *Women and Genocide* հատորյակի մեջ (2015):

Իմ առանձնահատուկ շնորհակալությունը ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանին և ԵՊՀ գիտական խորհրդին սույն գրքի հրատարակությունը երաշխավորելու համար, Մխիթարյան Միաբան Հ. Վահան ծ. վրդ. Օհանյանին՝ արևմտահայերեն թարգմանություններին սիրահոժար աշխատակցության համար, ԵՊՀ եգիպտագիտության կենտրոնի գիտաշխատող Արմենուհի Առաքելյանին և «Զանգակ» հրատարակչատան աշխատակից Լիանա Միքայելյանին՝ արդյունավետ համագործակցության համար, իտալահայ գրող, իմ լավ բարեկամ Անտոնիա Արսլանին, Կանադայի թագավորական ռազմական համալսարանի քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր Ալան Ուայթհորնին, Նյու Յորքի «Սարա Լորենս» և Մասսաչուսեթսի (Ամհերսթ) համալսարանների համեմատական գրականության և թարգմանաբանության պրոֆեսորներ Բելլա Բրոդսկիին և Էդվին Գենցլերին, Իսպանիայի «Ռովիրա ի Վիրխիլի» համալսարանի և Նյու Յորքի «Նայդա» հաստատության թարգմանաբանության պրոֆեսորներ Էնթրին Փիմին և Ռոբերտ Հոջսոնին վերջին տարիների բեղմնավոր քննարկումների և դիտարկումների համար:

Երախտապարտ եմ ծնողներիս, ամուսնուս՝ սույն հրատարակությունը քաջալերելու համար, կյանքս խինդով լցնող զավակներիս՝ Մարիամին, Նարեկին, և զարմուհուս՝ Նարեին:

Շնորհակալություն ԵՊՀ և «Զանգակ» հրատարակչությունների աշխատակիցներին և բոլոր նրանց, ովքեր ինչ-որ կերպ նպաստեցին այս գրքի լույսընծայմանը, որի միակ պատասխանատուն, սակայն, հեղինակն է:

Հուշագրություններ

Քսաներորդ դարի առաջին մեծ ողբերգության՝ Հայոց Ցեղասպանության վերապրածներն Իտալիա հասան Առաջին աշխարհամարտից հետո, սակայն Եղեռնի արձագանքներն ի հայտ եկան միայն տասնամյակներ անց:

1965 թ. Փրանկիսկյան կրոնավոր Հովհաննես Կյուրեղ Զոհրայանը Պալերմոյում հրատարակում է իր «Միսիոներական կյանքի հուշեր» երկհատորյակը¹⁹: Հ. Կյուրեղը ծնվել է 1881 թ. Էրզրումում, կրոնավորական և քահանայական կրթությունը ստացել է Արևելյան առաքելական հաստատությունում, ապա դարձել առաքելական քարոզիչ Փոքր Ասիայում, ապրել է յուրօրինակ պարագաների մեջ և ականատես է եղել հայ ազգի մարտիրոսությանն ու Պոնտոսի քրիստոնյա համայնքների կոտորածին և տեղահանությանը:

Նախախնամութիւնը զիս դրած էր այդ զարհուրելի ողբերգութիւններու կեդրոնը՝ յանձնարարելով ինծի կատարել դժուարին գործեր, մինչ արմինս կը տառապէր թուրքերու կողմէ ստացած խոշտանգումներու պատճառով, գրում է Հայր Կյուրեղն իր հուշագրության սկզբում²⁰:

Հայր Կյուրեղը մնում է Անատոլիայում մինչև 1923 թ., երբ Տրապիզոնի դատարանը նրա հանդեպ մահապատժի վճիռ է կայացնում՝ կախաղանի միջոցով: Պատճառը հետևյալն էր. Տրապիզոնի իշխանությունները փնտրում էին Մեսրոպ Սահակ անունով մեկին, որն իբրև թե օգնել էր հույներին ապստամբելու թուրքերի դեմ: Քանի որ Հ. Կյուրեղն իր առաքելության ընթացքում ջանացել էր միշտ օգտակար լինել նաև հույներին, թուրք իշխանությունների թյուր

¹⁹ C. G. Zohrabian, Memorie di vita missionaria, 2 voll., Convento Cappuccini, Palermo, 1965. Երրորդ հատորը հրատարակվել է 1976 թ.:

²⁰ Կիւրեղ եպս. Զոհրապեան, Յուշեր, թարգմ. Մ. Վ. Ղազարեան, Վենետիկ, Սբ. Ղազար, 2007, էջ 5:

կարծիքով՝ հենց նա էր Մեսրոպ Սահակը, որը ծպտում էր ինքնությունը քահանայական հագուստներով: Ոստիկանապետ Թահսին Բեյը Հասարակաց անվտանգության տնօրենի ստորագրությունը կրող մի հաշվետվություն էր ստացել, որի մեջ ասվում էր, որ բոլոր փաստերը կային հաստատելու, որ, այսպես կոչված, Փափազ Կյուրեղ Օհաննեսը՝ հանգուցյալ Վարդան Զոհրապյանի որդին, Պոնտոսի հունական հանձնախմբի պարագլուխներից մեկն էր, նույն ինքը՝ հեղափոխական Մեսրոպ Սարգիսը:

Կտրուկ կերպով ժխտեցի յունական կազմակերպություններուն անդամակից ըլլալուս մեղադրանքը, գրում է Հ. Կյուրեղը, որովհետև ո՛չ միայն քաղաքականութեամբ երբեք չէի գբաղած, այլ բնաւ չէի ուզած անգամ գիտնալ քաղաքականութեան ինչ ըլլալը: Իսկ յոյներուն օգնած ըլլալս պէտք չէ, որ զարմանք պատճառէր որեւէ մէկուն, քանի որ բոլորն ալ գիտէին, որ սովորութիւնը ունիմ օգնելու դրոշմ բախող բոլոր կարիքաւորներուն՝ անոնցմէ երբեք չպահանջելով ինքնութեան վկայականը²¹:

Նույն ոստիկանապետը ժամանակին զգուշացրել էր Հ. Կյուրեղին հեռու մնալ հոյսներից՝ ասելով.

Հեռու կեցէք յոյներէն. նենգ ժողովուրդ են, մի՛ վատահիք անոնց: Մեր թշնամիներն են: Աղքատ են: Ձգեցէք՝ որ սովէն սատկին: Կը ցաւիմ ըսելու՝ որ եթէ շարունակէք կերակրել զանոնք եւ օգնել իրենց, Ձեր վերջը գէշ պիտի ըլլայ²²:

Իրոք, շատ չանցած՝ սկսվում են վանականի վատ օրերը: Այսպես է նկարագրում Հ. Կյուրեղն իր ձերբակալությունն ու կտտանքները.

Ոստիկան մը, անցագիրս տեսնելով, հրաւիրեց գիս հետեւելու իրեն դէպի անցագրային գրասենեակ: Հոն սպասեցի եօթը ժամ: Վերջ ի վերջոյ, գրասենեակին տնօրէնը եկաւ ինձի հարցնելու՝ թէ արդեօք անունս Մեսրոպ Սարգիս է: Ստանալով ժխտական պատասխան, որուն անելցուցի իրական անունս, ըսաւ՝ որ այդ գիշեր պէտք է հսկողութեան տակ անցընէի, եւ վաղը կը գիտնային՝ թէ ինչ պէտք է

²¹ Նույն տեղում, էջ 141:

²² Նույն տեղում:

ընդհին: Ֆրանսական Դեսպանատունը, ամենայն հաւանականութեամբ Տիկ. Պաղաշէն տեղեկացուած ըլլալով, սպայ մը դրկեց պահանջելու համար իմ անյապաղ ազատ արձակումս, քանի որ կաթողիկէ քահանայ մը ըլլալով՝ ես ֆրանսական կառավարութեան պաշտպանութեան տակ էի: «Նոյնիսկ եթէ մէկ միլիոն զինուոր դրկէք հոս», պատասխանեց թուրք պաշտօնեան, «ձեր Դեսպանատունը պիտի չկարենայ մեր ձեռքէն խլել այս փափագը: Ան մեր ձեռքով պիտի մեռնի, որովհետեւ գլխաւորած է յունական ապստամբութիւնը, որուն նպատակն էր կործանել մեր կայսրութիւնը»²³: Կէսգիշերին մօտ զիս նաակ մը նստեցուցին եւ տարին Ստամպուլի ուղղութեամբ: Նաակէն դուրս ելլելով, ժամ մը ոտքով քալել տուին, ճամպրուկս սաւանով մը վիզէն կախուած: Ուժասպառ էի եւ հագի կը քալէի, իսկ զինուորները, ցաւակցելու փոխարէն, քայլերս կ'արագցնէին բռունցքի հարուածներով, ապտակներով, աքացիներով ու անարգական խօսքերով: «Սառկէ, անհատաւ շունի զաւակ», — կը պոռային²⁴:

Նրան զինված պահակախմբի ուղեկցությամբ տանում են Կոստանդնուպոլսի բանտը, ուր ենթարկվում է թուրքական ֆալախայի կտտանքներին՝ հինգ անգամ եղեգի վաթսունական հարված կրունկներին (*մնացած կյանքի ընթացքում Հ. Կյորեղը ստիպված կլինէր քայլել հողաթափերով, քանի որ ոտքերն այդ հարվածներից տձևացել էին*):

Սահմանուած վայրը հասանք զիշերուան ժամը 1ին: Ոստիկան մը զիս փոքրիկ սենեակ մը մտցուց, նստեցաւ, ձեռքը վերցուց ինծի վերաբերող թղթապանակը, քանի մը էջ դարձուց, ապա հայեացքը դէմքիս լաւ մը սեւեռելով՝ հարցուց անունս: Պատասխանս զինք կատողեցուց դիւահարի մը նման եւ այնքան ուժգին ապտակ մը իջեցուց երեսիս՝ որ բոլոր ակռաներս տեղէն շարժեցան: Իրեն համար ակնյայտ էր՝ որ ես սուտ կը խօսէի եւ որ իմ իրական անունս թղթապանակին մէջ գրուածն էր. «Անունը. Մետրոպ Սարգիս: Ազգութիւնը. հայ: Դրկուած է Սեւ Ծովու քաղաքներու մէջ յունական շարժումին օգնելու համար: Եղած է Պաթումի մէջ: Կովկասի մէջ հազարաւոր մահմետականներ սպաննելէ յետոյ Տրապիզոն եկած է ռուսական բանակին հետ միասին»: Ինքը լիովին համոզուած էր՝ որ ես սպաննած էի թուրքերը, թալանած էի զիրենք, բռնաբարած էի մահմետական աղջիկներն ու կիները: Որքան աւելի կը փորձէի ինքզինքս պաշտպանել, այնքան աւելի

²³ Նոյն տեղում, էջ 143:

²⁴ Նոյն տեղում:

ինքը կը կատողէր ու վրաս հարուածներ կ'իջեցներ: Վերջաւորութեան ձեռքերուս ձեռնակապէր անցուց եւ ոտքով այնքան ուժգին զարկաւ ստամոքսիս, որ գետինն փռուեցայ:

Գիշերուան ժամը 3ին, միշտ ոտքով եւ ճամպորուկս վիզէս կախուած, զիս տեղափոխեցին Սերապքերայի բանտը, այսինքն՝ զինուորական ատեան: Կրնաք երեւակայել վիճակս, բայց դաւաճաններու համար գթութիւն չկայ եւ զիս խուցի մը մէջ նետեցին: Այդ խուցէն զիս դուրս հանեցին ժամը 8ին: Երկու զինուորներ առաջնորդեցին զիս սրահ մը, ուր բաւականին մեծ թիով սպաներ հաւաքուած էին: Անոնցմէ մէկը աթոռի մը վրայ նստեցաւ եւ սկսաւ թերթել ինծի վերաբերող թղթապանակը. ծանր շնչառութիւնը ցոյց կու տար անոր անհանգիստ վիճակը: Ի վերջոյ խոր շունչ մը քաշեց եւ արտասանեց դատավճիռը. «Յանուն Աստուծոյ: Մեսրոպ Սարգիսը, որ յայտնի է Կիւրեղ Օհաննէս Փափազ Ձորապետան կեղծ անունով, գիտակից կերպով գործած է մարդասպանութիւններ, զողութիւններ, բռնութիւններ եւ պատկանած է փառահեղ օսմանցիներու հայրենիքի նենգ հպատակներ յոյներու ապստամբ յանձնախումբին: Դատապարտուած է կախաղան հանուելու ամսոյս 14ի առաւօտեան»: «Կ'երդնում, որ ամէն բան կեղծ է», բացականչեցի: Զինուորներէն մէկը ապտակ մը իջեցուց երեսիս, հրամայելով՝ որ լռեմ: Ներկաները զինուորական ողջոյնի կեցան եւ լռելեայն հեռացան: Դատաւորը մօտեցաւ ինծի, զիս պահակախումբի զինուորներուն յանձնեց եւ ականջիս կամացուկ մը ըսաւ՝ որ ուշադիր ըլլամ ճամպորուկիս եւ չձգեմ որ որեւէ մէկը իրերուս դպչի: Ուրիշ տեղ մը տարին զիս: Ոտքի կենալու ոյժ չունէի, նետուեցայ յատակին վրայ ու քնացայ: [...] Ուրիշ հարցաքննումի մըն ալ ենթարկուեցայ: Դատաւորը կ'ուզէր որ խոստովանեի՝ թէ ես էի Մեսրոպ Սարգիսը, եւ այդ խոստովանութիւնը բերանէս դուրս քաշելու նպատակով հրամայեց ենթարկել զիս ֆալսխայի կտտանքներուն: Զիս սեղանի մը վրայ հանեցին եւ հրամայեցին ծունկի գալ, այնպէս՝ որ ոտքերուս թաթերը դուրս մնային, եւ զինուորներէն երկուքը սկսան եզան ջիղով մտրակել ներքաններս: Անոնցմէ իւրաքանչիւրը երեսուն հարուած կու տար: Երկու ուրիշ զինուորներ թմբուկ կը զարնէին, հեծեճանքներու ձայնը ծածկելու համար: Այդ կտտանքներուն ենթարկուեցայ հինգ անգամ, այսինքն՝ այդ օրուան յաջորդող երկու օրերուն նոյնպէս, օրական երկու անգամ: Երբ ստացայ առաջին հարուածները, Մարտ 12ին, ժամը մօտաւորապէս 19:30–ին, այնպիսի սոսկալի ցաւեր զգացի, որ կը կարծէի՝ թէ ուր որ է հոգիս պիտի աւանդեմ: Բայց այդ ցաւերը քանի մը ակնթարթ միայն տեսցին, ապա ինծի թուեցաւ՝ թէ երկինքը բացուեցաւ եւ տեսայ Ամենաարքուի Կոյս Աստուածածինը, հրեշտակներով ու սուրբերով շրջապատուած: Կը կարծեմ, որ այս յափշտակութիւնը շատ կարճ կը տեւէր, որովհետեւ ինծի այնպէս կը թուի՝ որ գիտակցութիւնս կորսնցուցած եմ քսաներորդ հարուածէն

յետոյ: Յաջորդ չորս անգամներուն յափշտակութեան մէջ կ'իյնայի հարուածները սկսելէն առաջ, այնպէս՝ որ ոչ մէկ ցաւ կը զգայի, թէ՛ւ գիտակցութիւնս հաւասարապէս կը կորսնցնէի, ինչպէս առաջին անգամ: Կրկին կը սթափէի հրամայուած վաթսուն հարուածները ստանալէ մէկուկէս կամ երկու ժամ ետք: Հարկ չկայ նկարագրելու՝ թէ ինչ վիճակի մէջ էին ոտքերուս ներբանները: Մինչեւ այսօր կը քաշեմ այդ կտտանքներուն հետեւանքները:

Առաջին մտրակումէս մօտաւորապէս երկու ժամ յետոյ կրկին տեղափոխեցին զիս ուրիշ բանտ մը: Ստամպուլի փողոցներով անցած ատեն, հայեացքս շարունակ աջ ու ձախ կը դարձնէի, յուսալով ծանօթի մը հանդիպիլ: Տեսայ մայրապետ մը, որ կարեկից հայեացքով զիս կը դիտէր: Փորձեցի քանի մը բառ ըսել, բայց ընկերացող զինուորը արգիլեց, աքացի մըն ալ ոտքերուս իջեցնելով: Նոր բանտին մէջ հարիւրաւոր քաղաքական բանտարկեալներ կը սպասէին կախաղան ելլելու եւ ես դրուեցայ անոնց մէջ՝ որոնք առաջին հերթին պէտք է կրէին մահապատիժը: Հոն գտայ հինգ յոյն եւ չորս հայ տղամարդիկ եւ իսկոյն մտերիմ բարեկամներ դարձանք: Կէսօրին անոնց այցելութեան եկան իրենց ազգականները եւ առատ ուտելիք բերին: Երիտասարդներէն մէկը սեղան պատրաստեց, զինուորներուն տուաւ իրենց հասնելիք մասը եւ զիս ալ հրաւիրեց միանալու իրենց եւ օրհնելու սեղանը: Կիները տխուր ու արտասուալից աչքերով կը դիտէին մեզ, բայց մենք դատապարտեալներս ուրախ էինք ու հանդարտ: Յարմար վայրկեանն էր կրօնքի ու յախտենական կեանքի մասին խօսելու եւ իմ խօսքերս դրական արձագանգ գտան: Երիտասարդները յուզեցան եւ բոլորն ալ ինքնակամ խնդրեցին մատակարարել Ապաշխարութեան Խորհուրդը: Ճիշտ այն վայրկեանին, երբ այցելուները կը պատրաստուէին հեռանալու, պահակներէն մէկը եկաւ ըսելու՝ թէ բարի լուր ունէր մեզմէ մէկու մը համար, բայց բարի լուրը հաղորդելէն առաջ բոլորէս խոստում առա՝ որ բախտաւոր հասցեատէրը պէտք է աղուոր նուէր մը տար իրեն: Բախտաւորը ես չէի, ինչպէս բոլորը կը կարծէին, այլ պելճիքական ներկայացուցչութեան քով աշխատող մէկը, որուն ազատութիւն շնորհած էին: Անկէ խնդրեցի երկտող մը տանիլ Սուրբ Ստեփանոսի մեր վանքի մեծաւոր Հայր Լուիճիին: «Սիրելի Հայր Լուիճի», գրած էի այդ նամակին մէջ, «կը խնդրեմ Ձեզի, որ անյապաղ գաք ինծի այցելելու այն բանտին մէջ, որ Ձեզի պիտի ըսէ այս նամակը բերողը: Շատ բաներ ունիմ Ձեզի ըսելու եւ կախաղան ելլելէ առաջ կ'ուզեմ խոստովանիլ: Կը խնդրեմ այս բոլորին մասին տեղեկութիւններ չտալ ֆրանսական Դեսպանութեան, որովհետեւ անելի կը ծանրացնէ վիճակս: Յետուութիւն անդենական կեանքի մէջ, եթէ չկարենանք տեսնուիլ երկու օրուան ընթացքին»: Նախկին բանտակից բարեկամս հաւատարիմ կերպով կատարած էր խնդրանքս եւ երկտողս յանձնած էր Հայր Լուիճիին: Բայց ան, հազիւ կարդացած էր նամակս, իսկոյն

վազած էր ֆրանսական Դեսպանատուն: Թուրքերը իսկոյն հակազդեցին եւ ջանացին կորսնցնել տալ հետքերս: Ժամը 17ի ատենները ոստիկան մը մօտեցաւ ինծի եւ հրամայեց հետեւիլ իրեն, ըսելով. «Հոս եկուր, կախարդ, սատանայի որդի: Քու կախարդութիւններովդ տեղեկութիւններ կը հասցնես Դեսպանատուններուն, որպէսզի ազատեն քեզ կախադանէն: Գիտցիր, ուրեմն, որ առաջինը դուն պիտի կախադան ելլես»: Սանթա Սոֆիայի փողոցներով անցած ատեն հանդիպեցայ ծանօթներու եւ Անարատ Յղութեան Հայ Քոյրերէն մէկը բարձր ձայնով հարցուց՝ թէ արդեօք Հայր Կիրեղը չէ՞ր: «Այո՛, այո՛, ճիշտ Հայր Կիրեղն եմ», բացականչեցի: Ուրիշ ոչինչ կրցայ անելցնել, որովհետեւ զինուորները ուժեղ աքացիներով հեռացուցին զիս: Կամուրջին հասնելով, զինուորները զիս նաւակի մը մէջ նետեցին, որով տարին Գաղատիա: Նոր բանտը մօտ էր նաւահանգիստին: Արեւամուտէն ետք պաշտօնեայ մը այցելեց ինծի, որ անելի մեղմ ձայներանգով ըսաւ՝ որ ի գուր յամառօրէն կը թաքցնէի իրական ինքնութիւնս, քանի որ դատարանը Տրապիզոնի հասարակական անվտանգութեան գրասենեակէն երդումով հաստատուած տեղեկութիւն ստացած էր՝ որ ես էի շատոնց փնտռուած հայ յեղափոխական Մեսրոպ Սարգիսը: Դատաւորը կ'ուզէր զիս փրկել, բայց ասոր համար պէտք է խոստովանէի ինքնութիւնս: Երդում կ'ընէր յանուն Տէր Յիսուսի եւ Մոհամմետ մարգարէի: Ինչպէս կրնայի ստել: Պատասխանս լսելով, այդ պաշտօնեան հեզ գառնուկէ փոխակերպուեցաւ սարսափելի գազանի մը եւ ուժգին ապտակ մը զարկաւ ձախ այտիս, ըսելով. «Սատանային ծնօր զնա: Պիտի սատկիս կախադանին վրայ, քանի որ անելի յամառ եմ՝ քան քու հայրդ սատանան»: Վերադարձաւ Մարտ 14ին, ժամը մօտաւորապէս 19:30–ին: Զինք բարեկամական ժպիտով մը ընդունեցայ: «Ինչպէս Ձեզի ըսի երէկ», խօսքը կտրեցի, «եւ ուրիշ հազար անգամ ալ ըսի, կը կրկնեմ Աստուծոյ եւ մեր Սուրբերուն առջեւ, որ իմ անունս Մեսրոպ չէ: Աստուած զիս ստեղծած է Օհաննէս Փափագ Կիրեղ Զոհրապեան»:

Նախորդ օրուրնէ անելի կատղեցաւ եւ բռունցքի ու ոտքի հարուածներ կ'իջեցնէր վրաս տեղատարափ անձրեւի մը նման: Իսկոյն ֆալախայի հարուածներ հրամայեց: «Թանկագին Փաշա», ըսի իրեն սեղանի վրայ ծունկի գալէ առաջ, «եւ Ձեզի կը ներեմ այն չարիքը՝ որ կ'ընէք ինծի, որովհետեւ ո՛չ Դուք, ո՛չ ալ դատաւորը յանցաւոր էք ասոր համար: Դուք ձեր պարտականութիւնը կը կատարէք: Յանցանքը Տրապիզոնի ոստիկանապետինն է եւ հասարակական անվտանգութեան գրասենեակի պաշտօնեաներունը: Անոնք է՝ որ Աստուծոյ առջեւ պատասխան պիտի տան»: Եւ այսպէս, ստացայ ֆալախայի վերջին վաթսուն հարուածները, որոնք միասին հասան երեք հարիւրի:

Այդ վերջին կտտանքներէն երկուքուկէս ժամ յետոյ զիս կրկին դատարան տարին: Ժամը 20:30–ն էր եւ պէտք է որ վերջին լուամը ըլլար, որովհետեւ յաջորդ օրը ժամը 3–ին պէտք է կախադան բարձրանայի: Դատաւորը լաւ տրամադրու-

թեան մէջ էր: Կը զրուցէր քովը կեցած պարոնի մը հետ եւ հասկցայ՝ որ զրոյցին նիւթը ես էի: Տեսնելով, որ ոտքի չէի կրնար կենալ, թոյլատրեց՝ որ նստէի: Զիս քովի պարոնին ներկայացուց, ըսելով՝ որ պնդագլուխ հայ մըն էի, յանցագործ մը՝ որ կ'ուրանար իր իրական Մեսրոպ Սարգիս անունը եւ կը պնդէր՝ որ ինքը Հայր Կիրեղ Օհաննէս Զոհրապեանն է: Կախաղանէն խուսափելու համար ինծի բաւական էր խոստովանիլ ճշմարտութիւնը եւ խոստանալ ուղղուիլ: Բայց ո՞վ կրնար համոզել զիս ատիկա ընելու: Պարոնը, որուն ներկայացուցին զիս, ուշադիր գննեց եւ ըսաւ. «Հայ շուն շան որդի, սատանայէն աւելի խորամանկ: Մեսրոպը՝ կաթողիկէ փափագի մը նման հագուած: Չես մոռցած անգամ գլուխդ ածիլելու եւ վանականներուն յատուկ հողաթափեր հագուելու: Ուրկէ՞ գողցած ես այս հնամաշ հագուստները, վանական գօտին, վարդարանն ու հողաթափերը»: Ժամանակ չտուա՝ որ պատասխանեմ: Կրկին հարցուց՝ թէ իսկապէս կաթողիկէ քահանայ մըն էի: Արդեօք Կոստանդնուպոլսոյ մէջ յայտնի էի որպէս այդպիսին: Պատասխանեցի՝ որ Կոստանդնուպոլսոյ բոլոր կաթողիկէ քահանաները կը ձանձնային զիս: Ըսաւ. «Լսէ՛, Փափագ: Դատարորը քեզի պիտի դրկէ Գաղատիոյ եկեղեցին: Եթէ Պաշ Փափագը [այսինքն՝ Մեծաւորը] վկայէ՝ թէ կը ձանձնայ քեզ, դատարորը քեզ ազատ կ'արձակէ: Բայց եթէ անիկա, Աստուած չընէ, ըսէ՛ որ քեզ չի ձանձնար, այս երեկոյեան իսկ, Գաղատիայէն վերադարձիդ, կախաղան պիտի ելլես, առանց վաղը առաւօտեան սպասելու»: Զերմագին շնորհակալութիւն յայտնեցի այդ պարոնին եւ մաղթեցի իրեն երկնային ու երկրային բոլոր օրհնութիւնները, երկար կեանք, շնորհալի զաւակներ եւ Սողոմոն թագաւորին հարստութիւնները: «Եթէ զիս չձանձնան, եզրափակեցի, ես իմ ձեռքովս պարանը վիզս կ'անցընեմ»:

Զինուոր մը ուղեկցեցաւ ինծի դէպի Դոմինիկեան Հայրերուն վանքը: Խնդրեցի զինուորին քաշել դրան քովը կախուած պարանը եւ անատոլոցի այդ խեղճ գիւղացին ապշահար մնաց՝ երբ զանգակը հրնչեց դուռին միւս կողմէն: Դուռը բանալու եկաւ ինքնին վանքին Մեծաւորը, Հայր Իլարիոյ Մոնթին, որ զարմացած բացականչեց. «Օ՛հ, Հայր Կիրեղ: Այս ի՞նչ անակնկալ է: Ո՞ր քամին Ձեզ այս կողմերը բերաւ: Եւ ի՞նչ կը նշանակեն այս շղթաները»: «Մի՛ վախնաք», պատասխանեցի: «Դուք, Հայր, զիս կախաղանէն պիտի փրկէք: Եկէք ինծի հետ դատարան եւ երդումով վկայեցէք՝ որ կը ձանձնաք զիս որպէս կաթողիկէ վարդապետ»:

Հայր Իլարիոն պահ մը ապշած մնաց: Այնքան բարեսիրտ վարդապետ մըն էր, որ եթէ հարկաւոր ըլլար՝ զիս փրկելու համար իր կեանքն ալ պիտի զոհաբերէր: Մինչ Հայր Իլարիոն երդումով կը վկայէր իմ կաթողիկէ վարդապետ ըլլալս, ջիղերս այլեւ չդիմացան եւ յորդահոս արցունքները թրջեցին այտերս: Այդ պահուն, որ փաստուեցաւ իմ անմեղութիւնս, ինծի համար այլեւս ամբողջովին անկարելու էր՝ թէ պիտի կախեն զիս կամ ոչ: Հազիւ Հայր Իլարիոն երդումով հաստատեց

իր վկայութիւնը, դատաւորին բարեկամ պարոնը մօտեցաւ եւ ձեռքերս ազատեց կապանքներէն: Իսկ դատաւորը ինքը ըսաւ. «Պարոն Հայր Կիւրեղ Օհաննէս Զոհրապեան էրզրումցի, պէտք է շնորհակալութիւն յայտնէք Հայր Իլարիոյին: Մահապատիժի պիտի չենթարկուիք: Հալալ ըրէք մեզի այն մտրակումներուն համար, որուն ենթարկեցինք Ձեզ: Մեր կողմէ գործուած անարդարութեան պատասխանատուութիւնը թող իյնայ Տրապիզոնի իշխանութիւններու գլխուն: Այսուհանդերձ, քանի որ Դուք օգնած էք յոյներուն, որոնք մեր նենգ թշնամիներն են, Նորին Գերագանցութիւն Քեմալ Փաշան ընդմիշտ կ'արտաքսէ Ձեզի Թուրքիայէն: Պէտք է խոստանաք, որ պիտի մեկնիք մինչեւ գալ շաբաթ օրը, Մարտ 17ը»: Աջս վեր բարձրացուցի եւ խոստացայ²⁵:

Այսպիսով՝ մահապատիժն ի կատար չի ածվում, քանի որ Հ. Իլարիո վարդապետի վկայութեան շնորհիվ Հ. Կյուրեղը կարողանում է ապացուցել, որ ինքը թուրք իշխանութիւնների կողմից փնտրված Մեսրոպ Սահակը չէ: Այդուհանդերձ, նրան ցմահ աքսորում են Թուրքիայից՝ հույներին օգնելու պատճառով: Սկզբում նա գնում է Հունաստան, որտեղ մնում է 1923–1938 թթ. նախ որպէս Կերկիրայի (Քորֆուի) հայերի ծխական քահանա, այնուհետև՝ Հունաստանում ապրող բոլոր հայերի առաջնորդ: Ահա այսպէս է նկարագրում Հ. Կյուրեղը Հունաստան հասնելու իր առաջին տպավորութիւնները.

Երբեք չէի գտնուած քրիստոնէայ երկիրներու մէջ եւ 1923 թուականի Մարտ 19ի առաւօտեան՝ հայեացքս յուզմունքով լի կը հանգչէր Փիրէոյի հոյակերտ եկեղեցիներուն վրայ, որոնք իրենց գմբէթներուն վերեւ փառաւոր կերպով կը կրէին Խաչը: Ուրախութիւնս այնքան մեծ էր, որ նոյնիսկ նաւավարները, որոնք իրականին բաւական անփափկանկատ էին, ինծի մեծապէս համակրելի կը թուէին, քանի որ այդ վայրկեանին անոնց մէջ միմիայն Քրիստոսի արիւնով փրկուած եւ մկրտական աւազանին մէջ վերածնած եղբայրներ կը տեսնէի²⁶: [...] Տասնվեց երկար տարիներ անցուցի Յունաստան, հոն սպառնելով իմ ամբողջ կորովս՝ ի սպաս գաղթական եղբայրներու ծառայութեան: Տէրը օրինեց իմ ճակտիս քրտինքը եւ իմ արցունքներս, եւ կրցայ վայելել ինծի յանձնուած փոքրիկ այգիին հասունցած պտուղները: Մինչ նաւը կը հեռանար Փիրէայի նաւահանգիստէն, կը զգայի Յու-

²⁵ Նոյն տեղում, էջ 143–148:

²⁶ Նոյն տեղում, էջ 155:

նաստանի հայկական առաքելավայրէս բաժնուելու ամբողջ դառնութիւնը եւ յորդահոս արցունքներս կը հոսէին այտերէս վար²⁷:

1938 թ. նոյեմբերի քսանմեկին պատրիարք Աղաջանյանի նամակով նշանակվում է Սիրիայի Վերին Ջեզիրեյի պատրիարքական տեղապահ: Թեմական ծառայության այս ժամանակահատվածում (1938–1953 թթ.) Հ. Կյուրեղը հիմնականում վերահսկում է եկեղեցականներին, հիմնում է դպրոցներ, կրթում է երիտասարդներին, զբաղվում բարեգործությամբ: Մոտ ութսուն տարեկանում նրան հրավիրում են Հռոմ: Այստեղ Հ. Կյուրեղը շարունակում է ծառայել եկեղեցուն, եղբայրներին և համայնքին, ինչպէս նաև առաքելություններ է կատարում Եվրոպայով ու Լատինական Ամերիկայով մեկ սփռված հայկական գաղթօջախներում:

Հայր Կյուրեղը մահացավ 1972 թ. սեպտեմբերի քսանին և թաղվեց Պալերմոյի Փրանկիսկյանների եկեղեցում: 1983 թ. մարտի քսաներկուսին Պալերմոյի արքեպիսկոպոսի խնդրանքով Սրբադասման հանձնախումբը արտոնեց սկիզբ տալ նրա սրբադասման գործընթացին:

Ի տարբերություն այլ վկայությունների, ուր վերապրածները նկարագրում են իրենց մանկությունը, Հայր Կյուրեղի հուշերը վերաբերում են հասուն տարիքին: Հուշերը գրել է 1924 թ., սկզբում՝ ֆրանսերեն, այնուհետև շարադրել է ավելի ընդարձակ: «Յուշագրութեանս համար գործածեցի օրագրութիւններս, որոնք գրած էի ֆրանսերէնով: Անոնց մեջ սակայն շատ պակաս կետեր կան»²⁸: Սկզբում Հ. Կյուրեղն ամեննին միտք չունէր հուշերը տպագրելու, քանի որ վախենում էր թուրքական կառավարության ուշադրությունը գրավելուց, որն անպաշտպան քրիստոնյա բնակչության բնաջնջման հրահանգն արձակելուց հետո չէր հանդուրժի անգամ ամենաչնչին ակնարկ իր ոճրագործությունների մասին և վրեժ կլուծեր Անատոլիայում գործող կաթողիկե միսիոներներից:

²⁷ Նոյն տեղում, էջ 285:

²⁸ Նոյն տեղում, էջ 6:

Դիտաւորեալ կերպով զանց ըրած էի որոշ դրուագներ, որոնք վտանգաւոր նկատած էի տակաւին Թուրքիոյ մէջ ապրող քրիստոնէաներուն համար, - ավարտում է Հ. Կյուրեղը²⁹:

Իտալիայում հրատարակված մյուս հուշագրութիւնը պատկանում է 1904 թ. Կեմերեկում ծնված, Յեղասպանության վերապրյալ Խորեն Միրաքյանի գրչին: 1986 թվականին Պաղովայում հրատարակվում է վերջինիս «Հովվից բժիշկ» գիրքը: Հուշերում հեղինակը նկարագրում է իր ստրկական կյանքը թուրք ընտանիքներում, ապա իր թափառումները մի որբանոցից մյուսը՝ միշտ վախեցած ու քաղցած, և պատմում է, թե ինչպէս է «թուրք» Մուհամեդ հովվից դառնում Իտալիայում բնակվող ատամնաբույժ Խորեն Միրաքյան³⁰:

Օր մը՝ 1915 թուականին՝ նախքան հայերու տեղահանութիւնները, մայրս, խոշոր կապոցներ ձեռքին, տարաւ զիս թուրք ընտանիքի մը մօտ եւ չեմ գիտեր՝ ինչ ըսաւ: Այս տան մէջ ուշադրութիւնս գրաւեց երեսուն տարեկան մարդ մը, որ անթացույզ ունէր: Յետոյ իմացայ, որ Տարտանելի պատերազմի հաշմանդամ էր: Փոքր ու թուխ կիւն մը ունէր ու ծեր հայր մը՝ ալեհեր մօրուբով, կարմիր թասակով, վրան՝ ձերմակ փաթոց: Ամուսինները զաւակ չունէին: Այսպիսով՝ յայտնուեցայ անոնց տունը լրիւ միայնակ: Մայրս անհետացած էր, հաւանաբար որպէսզի լացս չտեսներ: Յաջորդ օրը ծերունին գլխուս կարմիր ֆես դրաւ, վրաս նետեց ձերմակ փաթոցն ու զիս կոչեց Մուհամմետ: Ատիկա իմ նոր անունս էր: Ընտանիքը աղքատ էր, ունէր վեց զառնուկ ու երկու այծ: Մարդը շատ ծեր էր, ամէն առաւօտ անասունները կը տանէր արածելու: Օր մը ուզեց, որ ես ալ հետը երթամ: Հաւանաբար միտքը կար, որ իրմէ յետոյ ես շարունակէի գործը: [...] Արդէն գիտէի արօտավայրերը: Տիրուհին առաւօտը կտոր մը հաց կու տար, որ պէտք է բաւականացներ ամբողջ օրը, բայց հազիւ գիւղէն դուրս եկած՝ արդէն կ'ուտէի-կը վերջացնէի: Օրուան մնացած մասը պէտք է գլխուս ձարը տեսնէի: Եւ այսպէս անցան օրեր, ամիսներ, կորսնցուցած էի կեանքի ու ժամանակի զգացողութիւնը: Լսած էի, որ պայթած էր պատերազմը, որ հայերը աքսորեր էին իրենց բնակավայրերէն ու սպաննած: Սկսած էի վախնալ: [...] Օր մը տէրերս ըսին. «Գնա՛, քեզի համար նոր կացարան փնտռէ՛»: Սկսայ լալ. ցուրտ, սով, ու՛ր կրնայի երթալ³¹:

²⁹ Նոյն տեղում:

³⁰ C. Mirachian. Da pastorello a medico. Editrice Stediv/Aquila, Padova, 1986.

³¹ Նոյն տեղում, էջ 21–22:

Երկար դեզերումներից հետո Խորենը հասնում է Զմյուռնիա, որտեղ մի հայ ընտանիք որդեգրում է նրան: Դժբախտաբար, պատանու հոգին կրկին պեղծվում է, երբ հետագա ջարդերի պատճառով կորցնում է նաև իրեն որդեգրած ծնողներին, որոնց ազգանունը հպարտորեն կրեց մինչև իր կյանքի վերջը: Կոտորածներից մազապուրծ՝ նավով մեկնում է Աթենք, ապա տեղափոխվում Կերկիրայի որբանոց, այնուհետև ընդունվում Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարան: Իր առաջաբանում Միրաքյանը նշում է.

Գիրքը գրելու առաջին նպատակը դուստրերուս ու թոռներուս բազում չարչարանքներով, պայքարով, ամեն տեսակի գրկանքներով լեցուն իմ անցեալս ծանօթացնելն է, որպէսզի անոնք պատրաստ ըլլան յաղթահարելու կեանքի անխուսափելի դժուարութիւնները: Միս նպատակը յատկապէս երիտասարդ յուսահատներուն օգտակար ըլլալն է, որպէսզի անոնք սորվին դիմակայել կեանքի ձախորդութիւնները³²:

Իտալահայ գրող Անտոնիա Արսւանը Յեղասպանությանը նվիրված իր «Զմյուռնիայի ճանապարհը» վեպում անդրադառնում է Զմյուռնիայում Միրաքյանի որդեգրման պատմությանը.

Նրանց թվում մի մենակյաց երեխա կար, որն ուսման մեջ լավ առաջադիմություն էր ցուցաբերում և ամբողջ ժամանակ սովորում էր կամ նայում հեռուները: Բարեհամբույր էր, ծառայելու պատրաստ, հարմարվող: Երբեք չէր վիճաբանում որևէ մեկի հետ, երբեք չէր մտերմանում որևէ մեկի հետ: Ո՛չ բարեկամ ուներ, ո՛չ թշնամի, միշտ միայնակ էր ու երբեմն մեղմ ժպտում էր՝ նայելով հեռու՝-հեռու՝ դատարկության մեջ: Մի օր նրան կանչեցին արքեպիսկոպոսարան: Նա այնքան լավ տպավորություն թողեց մի հարուստ ատամնաբույժի վրա, որը միայն դուստրեր ուներ և ցանկանում էր տղա որդեգրել: Տղան այնքան լուրջ, կիրթ, խոհուն երևաց, որ ատամնաբույժը ոգևորված նրան ընտրեց և տուն տարավ, որտեղ տղան, որի անունը Խորեն էր, բայց ազգանունը չգիտեր, պաշտոնապես որդեգրվեց, վերցրեց իր նոր ընտանիքի ազգանունը և իրեն այնքան լավ զգաց, որ որոշեց ինքն էլ բժիշկ դառնալ ու մեծանալով պաշտպան կանգնել նոր մորն ու քույրերին: Երեք տարի շարունակ փոքրիկ Խորենը եռանդով սերտեց և սկսեց օգնել նոր հայրիկին նրա համբավավոր ատամնաբուժարանում: Խելացի, ջանասեր պատանին արագ սո-

³² Նույն տեղում, էջ 7:

վորեց հիվանդներին տեղավորել ատամնաբուժական բազկաթոռին, փոխանցել գործիքներն ու ջուրը: Խոնարհ երախտագիտություն էր բխում նրա յուրաքանչյուր շարժումից. չէր մոռանում ո՛չ մի տարելից, ո՛չ մի ծննդյան տոն. քնքշությամբ օգնում էր քույրերին խաղերում և համբերատար տանում նրանց քմահաճույքները: Բայց Զմյուռնիայի ողբերգության ժամանակ Խորենը կորցրեց նաև երկրորդ ընտանիքը և ջարդից ու հրդեհից հրաշքով մազապուրծ՝ ապաստան գտավ Իտալիայում, որտեղ աշխատելով և գիշերը սովորելով՝ ի վերջո ատամնաբույժ դարձավ՝ իրագործելով իրեն որդեգրած հոր երազանքը³³:

Հաջորդ հուշագրության հեղինակը Ռաֆայել Ճանիկյանն է³⁴: Իր հուշերում նա նկարագրում է 1977 թվականին՝ յոթանասունմեկ տարեկան հասակում, Խոտորջուրի շրջանի հայրենի Գիսակ գյուղ կատարած իր ուխտագնացության մասին.

Ուխտագնաց մըն եմ, կ'երթամ փնտռելու հայրենիքս եօթանասուն տարուան բացակայութենէն յետոյ: Յուլիս 7-ին մեկնեցայ Թրիեստէն, անցայ Հարաւալաւիան, Յունաստանը, հասայ Ստամպուլ, ապա Անգարա ու կանգ առի Եոզկաթի մէջ: Յանկարծ լսեցի, որ մէկը գիս ողջունեց՝ «As-salamu aleykom»³⁵: «Aleykom as-Salam», պատասխանեցի: Թուրքը նստեցաւ կողքիս՝ նստարանին: Մագերն ու մօրուքը ձերմակ էին, հագուած էր գիւղացիի նման:

Գերմանացի գրօսաշրջիկ էք, ըսաւ ինծի անվարան:

Իտալացի գրօսաշրջիկ եմ, պատասխանեցի, կ'երթամ հայրենիքս տեսնելու երկար տարիներու բացակայութենէ յետոյ:

Ուրեմն թու՛րք էք:

Թուրք էի մինչև 1915 թուականի օգոստոսը:

Ermeni turk³⁶?

Այո, պատասխանեցի ես:

Մարդը խոստովանեցաւ, որ ինքն ալ հայ էր³⁷:

³³ Ա. Արսլանն անձամբ ձանաչել է Խորեն Միրաքյանին, երբ տակավին փոքրիկ աղջիկ՝ ընկերակցել է Անրիեթ հորաբրոջը բժշկի մոտ գնալիս: Տես Ա. Արսլան, Զմյուռնիայի ձանապարհը, թարգմ.՝ Ս. Հարությունյան, Զանգակ, Սահակ Պարթև, Երևան, 2012, էջ 195–197:

³⁴ R. Gianighian. Khodorciur. Viaggio di un Pellegrino alla ricerca della sua patria. Casa Editrice Armena, Venezia, 1992.

³⁵ Թրք.՝ խաղաղությունն ընդ ձեզ:

³⁶ Թրք. թուրքահայ:

³⁷ Gianighian Raffaele, op. cit. 1992, p. 11.

Հայոց Ցեղասպանության ժամանակ Ռաֆայելը ինը տարեկան է եղել: Բռնի կերպով ծննդավայրը լքելուց հետո չորս տարի ապրել է մահվան սարսափով՝ օրեցօր կորցնելով նախ հարազատներին ապա, ի վերջո, իր ինքնությունը: Ստանալով Աբդուլլա անունը ու թլպատվելով (որը, սակայն, նրան զերծ չպահեց քուրդ հասակակիցների բռնություններից)՝ նա կարողացավ գոյատևել ու հասնել Իտալիա՝ բնակություն հաստատելով Կորտինա դ'Ամպեցցոյում: Խոտորջուր ուխտագնացության նպատակն էր հավաքագրել պատմություններ 1915 թ. այնտեղ ապրած հայերի մասին: Տեղանքի վերաբերյալ նրա հիշողությունները վառ էին ու ճշգրիտ, բայց 1915 թ. Գիսակում ապրած հայերից որևէ հետք չէր մնացել: Տունը, որտեղ նա ծնվել էր, վերացել էր, հարևաններինը՝ ավերվել, մնացել էր միայն հոր դարբնոցի երեք սյունը: Գերեզմանոցը «ոչնչացուած էր ու վերածուած էր դաշտի: Ամէն ինչ բնաջնջուած էր, կարծես երկրաշարժն ատերած էր ամէն հնարաւոր բան»³⁸: Մի քանի տարի անց Ռաֆայելի որդին՝ Վարդանը, այցելում է հոր ծննդավայրը, այնուհետև վերախմբագրում նրա գիրքը, հարստացնում ծանոթագրություններով և ներկայացնում հայերի ու թուրքերի վերջին հարյուր տարվա պատմության որոշ կողմերը³⁹:

1996 թվականին հայ ճարտարապետության մեծ գիտակ Հարություն Գազանձյանն իր անձնական հուշերն ամփոփել է «Ութ գրամ կապար, կես կիլոգրամ պողպատ, կես լիտր հնոյուղ. հայ պատանու կյանքն ու արկածները» գրքում⁴⁰: 1909 թվականին Արտանուշում ծնված հեղինակն ականատես է եղել Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երեք շրջադարձային իրադարձությունների, ինչպիսին բոլշևիկյան հեղափոխությունն էր, Քեմալ Աթաթուրքի իշ-

³⁸ Նույն տեղում, էջ 5:

³⁹ V. Gianighian. Raffaella Gianighian, Khodorciur 100 anni dopo. CreateSpace Independent Publishing Platform, 2014.

⁴⁰ H. Kasangian. Otto grammi di piombo, mezzo chilo di acciaio, mezzo litro di olio di ricino. Vita e avventure di un ragazzo armeno, Ed. Il Poligrafo, Padova, 1996.

խանության գալը և Ֆաշիզմի ծնունդը: Այստեղից էլ՝ գրքի եզակի անվանումը, որն ակնարկում է բոլշևիկների հրացանների կապարը, քեմալականների սվինների պողպատը և հնդյուղը, որը ուժով ստիպում էին խմել Ֆաշիստական ռեժիմին դիմադրողներին:

2001 թ. Միլանում լույս է տեսնում Մանուկ Խանբեկյանի «Խաչն ու կիսալուսինը» երկը հեղինակի մահվանից համարյա քսան տարի անց⁴¹: 1895 թ. Տրապիզոնում ծնված Մանուկին հաջողվել էր փրկվել ջարդերից, քանի որ 1915 թ. ուսանում էր Վենետիկի հայտնի Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Ավագ եղբոր խորհրդով, որը Մխիթարյան միաբանության հայրերից էր, նա այդ ճակատագրական տարին տուն չի գնում ու ողբերգության սարսափներին հաղորդակից է դառնում հեռվից: Լսում է, որ երկու քույրերը գերադասել են տան պատուհանից դուրս նետվել՝ երիտթուրքերի ձեռքը չընկնելու համար⁴²: Խանբեկյանի պատմությունը նկարագրում է հեղինակի հայրենի Տրապիզոնը, որտեղ նա անցկացրել է իր մանկությունը և որտեղ այլևս երբեք չի վերադարձել: Նա ականատես չի եղել այն ողբերգական իրադարձությանը, որը վերջ է դրել իր ընտանիքի գոյությանը: Հ. Մանուկյանի խոսքերով. «Այս բարդ պատմությունը, որը նա շարադրեց իր կյանքի վերջին տարիներին, պետք է ընկալել իբրև ողբերգության վայրում անձնապես ներկա չլինելուն վերաբերող տագնապալից հիշողության վերարտադրման ցավագին գործընթաց»⁴³:

1909 թ. Սվազում ծնված Վարվառ Թաշճյանն իր հուշերը սկսել է գրել ֆրանսերենով և հայերենով, երբ արդեն յոթանասունն անց էր, ու շարունակել մինչև կյանքի վերջը: Նրա գրառումները գտնվել են մահից հետո՝ 1990 թ., բայց տպագրվել են ավել ուշ՝ 2003 թ., աղջկա՝ Ալիսի կողմից, իտալերենով: Գրքում Ալիսը մոր հուշերին միա-

⁴¹ M. Khanbeghian. La croce e la mezzaluna. Ed. Anna Maria Mungo, Milano, 2001.

⁴² Նույն տեղում, էջ 2:

⁴³ A. Manoukian. Presenza Armena in Italia, 1915–2000. Guerrini e Associati, Milano, 2014, p. 248.

հյուսում է իր հիշողությունները՝ այդպիսով հարստացնելով հրատարակությունը իրենց անձնական նամակագրության ու գրույցների հատվածներով:

Ահաբեկուած էինք թուրքերու դաժանութիւններէն,— գրում է Վարվառը:— Կը հասկնայինք, որ կ'ուզէն մեզ ոչնչացնել, բայց մինչ այդ կը հրձուէին՝ երեխաները սպաննելով մայրերու աչքին առջեւ, որոնք աւելի ցնորած վար կը նետուէին ժայռերէն: Թուրքերը կը պատռէին յղի կիներու փորը, եաթաղանը խրելով՝ կը հանէին նորածինները ու կը խեղդէին գետին մէջ: Անոնք նոյնիսկ կը հանէին դիակներուն հագուստները՝ վերավաճառելու նպատակով: [...] Մեր երկու ամսական երեխան կու լար, որովհետեւ անօթի էր, իսկ Հռիփսիմէն կուրծքերուն մէջ այլեւս կաթ չունէր: Կերածը ճանապարհի խոտն էր, որ անասելի փորագաւ կը յառաջացնէր թշուառ էակի՝ երեխայի մօտ, որ, միեւնոյն է, դատապարտուած էր մահուան՝ սովի, փորհարութեան կամ սուրի: Որպէսզի անոր լացի ձայնով մեզ ալ չյայտնաբերէին, մայրս ու քոյրս խեղդեցին նորածինը՝ սեղմելով զինք մէջքերու արանքը՝ առանց վրան նայելու: Ան մարեցաւ մոմի լոյսի պէս: Անմիջապէս յետոյ ծայրայեղ զգուշութեամբ անշունչ մարմնիկը տեղադրեցինք ծառի ճիւղերու վրայ, յուսալով որ թուրքերը զինք կը նկատէին ու կը թաղէին, չձգելով, որ փտէր երկրի երեսին, եւ նաեւ որպէսզի շուները չյօշոտէին զինք⁴⁴:

Իտալիայում ապաստանած Հայոց Ցեղասպանության վերաբերածների՝ Մխիթարյան միաբանության հայր Իգնատիոս Ադամյա-

⁴⁴ Իտալացի կինոբեմադրիչներ Տավիանի եղբայրները Անտոնիա Արպանի «Արտոյտների ազարակը» վեպի հիման վրա նկարահանած համանուն ֆիլմում պատկերել են այս ահասարսուռ տեսարանը, որը վերցրել են Թաշճյանի հուշագրության վերոնշյալ հատվածից, երբ երկու կին հարկադրված լռեցնում են նորածինին՝ խեղդելով նրան իրենց մեջքների արանքում (Tachdjian, 2003, էջ 94): Գիրքն առայժմ թարգմանված չէ հայերեն: Ալիսն ինձ դիմեց հուշագրության թարգմանության համար, բայց, ցավոք, ստիպված եղա նրան մերժել, քանի որ այդ ժամանակ (2006 թ.) աշխատում էի Ա. Արպանի «Արտոյտների ազարակը» վեպի հայերեն թարգմանության վրա, որը պետք է պատրաստ լինէր «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի բացմանը. այն մեկնարկելու էր Տավիանիների ֆիլմով: Այդուհանդերձ, Կալիֆոռնիայի համալսարանում դասավանդածս ժամանակ (2013 թ.) ուսանողների հետ Թաշճյանի գրքից մի հատված թարգմանեցինք անգլերեն և հրատարակության պատրաստեցինք Ֆրեզնոյի «Հայ շարժում» լրագրի համար: Նպատակս էր օտար և հայ ուսանողներին մասնակից դարձնել Ցեղասպանության գրականության թարգմանության գործընթացին:

նի, Զապել Շիրինյանի, Անահիտ Պզտիկյանի, Գառնիկ Նալբանդյանի, Հռիփսիմե և Հակոբ Գոնտաքճյանների, Օվսաննա Քյուլեյանի, Հրանտ Բամպակյանի վկայությունները գետեղվել են «Հուշեր» հատորակում⁴⁵: Գրքի խմբագիրներ Ա. Արսլանն ու Լ. Պիզանելլոն մի շարք վկայություններ են հավաքել ոչ միայն Իտալիայում բնակվող վերապրյալներից, այլև նրանց զավակներից, որոնց համար իրենց ծնողների թողած ժառանգությունը անգնահատելի, բայց ճնշող հիշողություն է, հիշողությունն այն ողբերգության, որ նրանց բաժին էր հասել դեռ մանուկ հասակում, երբ անկարող էին հասկանալ դրա պատճառները: Այս վերապրյալների հետ հարցազրույցներն ընդգրկված են նաև Ավետիս Օհանյանի «Հուշեր» փաստագրական ֆիլմում⁴⁶: Վկայությունները լի են մեծ արիությամբ ու կյանքի նկատմամբ անսահման սիրով: Ամենաապշեցուցիչը վատ ու լավ թուրքերին տարբերակելու կարողությունն է, որի շնորհիվ է, որ նրանք չկորցրին վստահությունը մարդկանց ու կյանքի նկատմամբ: Ստորև ներկայացված են այս վերապրյալների պատմությունները:

Ազնվականական ծագումով հարուստ ընտանիքի դուստր Զապել Շիրինյանը ծնվել է 1900 թ. Կեսարիայում:

Մեծ հայրս` Սերովբե Գույումճեանը, պատմում է Զապելը, կը զբաղէր մեծաբանակ առետտորով: Մեծ քանակութեամբ ապրանք կ'ուղարկէր Եւրոպա` մինչև Մարսել ու Ճենովա, ուր կը բնակէին մեծ մօրս եղբայրները` Միհրան եւ Կարապետ Թէքեանները: Անոնք բանաստեղծ Վահան Թէքեանի զարմիկներն էին: Յաճախած եմ Կեսարիոյ օրիորդաց վարժարանը: Ուսումս յաջողութեամբ աւարտելէ յետոյ վկայականս ստացայ 1915 թուականին⁴⁷:

⁴⁵ A. Arslan, L. Pisanello. La memoria – Voci italiane di sopravvissuti armeni. Ed. Guerini e Associati, Milano, 2001.

⁴⁶ Avetis Ohanian. Husher (Memoria). Fondazione Serapian, Milano, 1995, DVD.

⁴⁷ A. Arslan, L. Pisanello, op. cit., 2001, p. 31–32.

Մինչև 1915 թ. նկարագրող հուշերը գեղեցիկ են ու բազմազան, սակայն նույն թվականի օգոստոսից պատկերն արմատապես փոխվում է. կոտորած, տեղահանություն դեպի Սիրիա, ողջ ունեցվածքի կորուստ: Նոր կյանք սկսելու հույսով նրանք Դամասկոսից տեղափոխվում են Կոստանդնուպոլիս, բայց հասնելուն պես ամեն հույս ի դերն է լինում: Ինչևէ, Ջապելն ամուսնանում է, բայց քիչ անց, փոքրիկ Տիգրանը ձեռքին, այրիանում է: 1943 թվականը դառնում է շրջադարձային. Միլանում ապրող ազգականները հյուրընկալում են Տիգրանին՝ համալսարանում սովորելու նպատակով: Հետագայում Տիգրանը դառնալու էր իտալական սփյուռքի ականավոր գործիչներից մեկը:

Էրզրումցի Հռիփսիմե Գոնտաքճյանի պատմությունը լավ ավարտ ունեցող այն քիչ պատմություններից մեկն է: Նրան հաջողվել էր ամուսնու հետ փրկվել, հասնել Իտալիա և հաստատվել Պադովայում: Ունեցան զավակներ, որոնց Հռիփսիմեն կարողացավ փոխանցել կորուսյալ հայրենիքի մեծ սերը: Վկայության մեջ նա նշում է, որ օրեր շարունակ քայլել են հայերի դիակներով լի Եփրատի ափերով: Այն հարցին, թե ինչու տեղի ունեցավ Ցեղասպանությունը, Հռիփսիմեն պատասխանում է.

Անոցմէ հարցուցէք: Հայերուն միշտ ջարդած են, առաջ եւ յետոյ: Թալէաթը կը հպարտանար, որ Ապտուլ Համիտը իր ամբողջ իշխանութեան ժամանակ չէր կրցած այնքան հայ սպաննել, որքան ինքը՝ մէկ շունչով: Կը հպարտանար, որ հալաթափ ըրած էր ամբողջ բնակավայրեր⁴⁸:

Այն հարցին, թե ինչ զգացմունքներ ունի թուրքերի նկատմամբ, կինը պատասխանում է. «Շուններ, թող սաստկին»⁴⁹:

Մեկ այլ վերապրյալ Օվսաննա Քյոլեյանը պատմում է, որ իրեն մի քանի մանուկների հետ գտել են մահացածների միջից: Հետագայում

⁴⁸ A. Ohanian, cit., 1995, DVD.

⁴⁹ Նույն տեղում:

գայում որդեգրել են, և նա հաստատվել է իտալական Վարեզե քաղաքում: Մի ողջ կյանք ապրել է՝ առանց իմանալու, թե ով էր իր ընտանիքը, ուներ արդյոք քույր-եղբայր: Չգիտեր նաև իր իսկական անունը: «Ինչպիսի կրնաս թուրքերը չատել այս բոլորէն յետոյ, ինչ որ քեզի ըրեր են», ավարտում է Օվսաննան իր վկայությունը⁵⁰:

Իտալիայում հաստատված մյուս վերապրյալը՝ Գառնիկ Նալբանդյանը, ծնվել էր 1908 թվականին Խարբերդում:

Թէև ընդամենը վեց տարեկան էի, երբ սկսան ջարդերը, շատ դաժան տեսարաններ են անջնջելի կերպով գամուած ուղեղիս մէջ, որ ինծի երբեմն կը թուի, թէ կրկին կ'ապրին անոնք, պատմում է Գառնիկ Նալբանդյանը: Մինչդեռ ընտանիքէս շատ քիչ յուշեր ունիմ: Կորսնցուցի թէ հայրս, թէ մայրս եւ թէ եղբայրս: Որոշ տեղեկութիւններ ունիմ հորաքրոջս՝ քոյր Կարինէի շնորհիւ, զոր շատ պատահամաճ գտայ Կոստանդնուպոլսոյ մէջ մէկ վայրէն միւսը տեսական թափառումներու ժամանակ: [...] Կը պատկանէի բարեկեցիկ ընտանիքի մը: Մեծ հայրս ընդարձակ տնտեսութիւն ուներ, ուր կ'աշխատէին իր երեք զաւակները՝ հայրս՝ Պետրոսը, իր երկու եղբայրներուն՝ Գրիգորի եւ Գէորգի հետ: Վերջինս ամուսնացած էր եւ զաւակներ ուներ, մինչ Գրիգորը տակաւին միայնակ էր: Մեծ ազարակ ունէինք, մշակուած հողեր, ձիանոց, հացահատիկի պահեստներ [...] Երբ սկսան բախումները, Գրիգոր հորեղբայրս իր մարդոց հետ բարձրացաւ Խարբերդը շրջապատող լեռները: Օր մը, երբ կ'իջնէի վերապարենաւորման համար, թուրքերը կը շրջապատեն մեր տունը: Բայց ատրճանակի երկու կրակոցով կը յաջողի խոյս տալ եւ փախչիլ զինք հետապնդողներէն: [...] Եկաւ այն օրը, երբ սկսաւ մեր ընտանիքի ողբերգութիւնը: Նախ ոստիկանները հայրս տարին: Անոնցմէ այլեւս երկար ժամանակ լուր չունեցանք: Յետոյ ըսին, որ միւսներու հետ միասին իրեն ալ կրակած էին: Հօրմէս յետոյ մեր կարգն էր: Թուրքիոյ կառավարութիւնը քաղաքը լքելու հրաման արձակած էր: Ուստի ստիպուած եղանք ձգելու մեր սիրելի տունը՝ մօրս՝ Մարիամին, քրոջս՝ Ֆիլոմենային, եւ զոյգ եղբօրս՝ Ստեփանի հետ: Մինչդեռ մեծ եղբայրս՝ Ահարոնը, կը գտնուէր Ամերիկա: Սկսաւ անվերջանալի քայլքը: Յաջորդ օրը մօտեցան մինչեւ ակռաները զինուած թուրք զինուորներ եւ տարին բոլոր աղջիկները: Զիրենք այլեւս չտեսանք, բայց եզրակացուցինք անոնց ողբերգական վախճանը: [...] Ես տակաւին մօրս, քրոջս ու եղբօրս հետ էի, բայց այլեւս ուժ

⁵⁰ Նոյն տեղում:

չունէինք՝ դիմանալու տեսական սովին, յոգնութեան, այն բոլոր կտտանքներուն, որոնց կ'ենթարկուէինք: Օր մը մայրս զիս մխիթարելու համար սկսաւ ջուր փնտռել, որպէսզի թրջէր այրող ճակատս, մինչ քարաւանը առաջ կ'ընթանար: Ուրկէ ուր դուրս ցատկեց քիւրտ մը ու իր երկար սուրն աչքիս առջեւ խեղճ մօրս փորը խրեց: Մայրս արիւնաթաթախ ինկաւ, մինչդեռ քիւրտը, տակաւին չբաւարարուած իր վայրագութենէն, ետեւէս հասաւ եւ քերթեց ձեռքս: Ոստիկաններու ուղեկցութեամբ, արիւնլուայ, ահաբեկուած, լաթերու մէջ պարուրուած՝ շարունակեցի քալել եւ ետեւ նայելով տեսայ, թէ ինչպէս ազոռաները իջան մօրս անշունչ մարմնի վրայ, որ ծուէն-ծուէն ընէին ու վեր հանէին լափելու իրենց յատուկ վարպետութեամբ: [...] Երեկոյեան կողմ հասայ քրոջս ու եղբօրս, որոնք ինծի մօրս մասին հարցուցին: Մայրս այլեւս չկար⁵¹:

Հետո մահանում է նաև եղբայրը, մինչդեռ քույրը ամուսնանում է և մի շարք պատահականությունների շնորհիվ հայտնվում Ամերիկայում: Գառնիկ Նալբանդյանն անցել էր ջարդի ճանապարհը և 1919 թվականին հասել Վենետիկ՝ ապաստանելով Սուրբ Դավար կղզու Մխիթարյան Մայրավանքում:

Վայրը շատ գեղեցիկ էր: Իւրաքանչիւր Երեքշաբթի եւ Ուրբաթ մեզ կը տանէին Լիտոյ կղզին զբօսանքի: Օր մը ես ու ընկերս զացինք ծովափ՝ անցուղարձը ուսումնասիրելու: Տարօրինակ տխրութիւն մը կը պատէր զիս. տարիները կ'անցնէին, այլեւս փոքր չէի եւ քիչ մը ազատութիւն կը փափաքէի: Մինչեւ այդ պահը կեանքըս լի էր շարունակական զոհաբերութիւններով եւ նայելով ծովեզերքի անհոգ երեխաներուն՝ կը նախանձէի անոնց, որ դատապարտուած չէին եղած զրկանքներով լեցուն կեանքի⁵²:

Գառնիկն ամուսնացավ 1936 թվականին և հաստատվեց Վարեգեում: Իտալուիի կինը նրան պարզևեց երկու արու զավակ:

Ուրախ եմ, որ տղաքս իտալացի են: Թող Աստուած զիրենք հեռու պահէ փորձանքէ եւ չստիպէ անցնիլ իմ անցած հոգեվարքի ուղիի մէջէն, ավարտում է Նալբանդյանն իր վկայությունը⁵³:

⁵¹ A. Arslan, L. Pisanello, op. cit., 2001, p. 71–74:

⁵² Նոյն տեղում, էջ 77:

⁵³ Նոյն տեղում, էջ 79:

Մյուս վկայությունը մուսալեռցի Անահիտ Պզտիկյանի պատմությունն է.

Ես երեք տարեկան էի, երբ Մուսա լեռան ինքնապաշտպանության ճակատին վրայ տասնութը հոգի նահատակուեցան: Առաջիններէն էին հայրս եւ կնքահայրս: Այդ օրերուն թուրքերը բռնած էին նաեւ հօրական պապս եւ դառն չարչարանքներու ենթարկած: Հայրս Յովհաննէս Գոճանեան կը կոչուէր, ծանօթ էր նաեւ «Ֆենտ» կեղծանունով, երեսուն տարին նոր բոլորած: Որբացած էինք ես եւ եղբայրներս: Որպէս ապահով տեղ մօտակայ Անտիոք քաղաք փոխադրուեցանք, մեր Խտրպեկ գիւղը քարուքանդ եղած էր: Մեծ եղբայրս, որ մեր առօրեայ հացը կը հոգար, տասնութ տարեկան էր, գնաց մաս կազմելու Ֆրանսական կամաւորական գունդին «Հայկական Լէգիոնի» մէջ: Դամասկոսի ճակատին վրայ վթարի ենթարկուելով երկար չապրեցաւ եւ մահացաւ քսաներկու տարեկանին: Մուսա լեռան եօթը գիւղերուն հայությունը քաջաբար բայց անյոյս կը ճակատէր տասնեակ հազարաւոր թուրք բանակին եւ իսլամ խուժանին դէմ, երբ քառասուներորդ օրը ծովափին մօտերը շրջող Ֆրանսական մարտանաւեր նկատեցին մեր օգնութեան նշանները (սպիտակ սաւանի վրայ մեծ կարմիր խաչ մը) եւ ամբողջ բնակչությունը փոխադրեցին Եգիպտոս (Բորթ Սայիտ) ի աւագներուն վրայ վրանաքաղաք մը կառուցեցին, ուր ապրեցանք մինչեւ զինադադար⁵⁴:

Անահիտը տասնութ տարեկան էր, երբ ամուսնացավ իրենց համագյուղացի երիտասարդ Մովսէս Պզտիկյան–Թաւալքյանի հետ (որը նույնպէս կամավոր էր հայկական լեգիոնի մեջ): Մովսէսը ծառայում էր Բեյրութում, որտեղ էլ ունեցան հինգ զավակ՝ Վարդան, Մարի, Ժակ և Ժակլին երկվորյակներ և Ռոբերտ: Ավագ որդին դարձավ հայտնի դիզայներ նավթի ամերիկյան «Թափլայն» ընկերության մեջ, իսկ Ժակը՝ Վենետիկի Միխիթարյան միաբանության գործունյա անդամ Հ. Հարություն անվան տակ: Ընտանիքը մեծացավ և բազմացավ զավակներով և թոռներով, և Լիբանանի քաղաքական երկարատև պատերազմի պատճառով ցիրուցան եղած՝ Անահիտը միացավ իր ձարտարապետ որդուն՝ Ռոբերտին, Վենետիկում, ուր գտնվում էր նաև իր վարդապետ զավակը:

⁵⁴ Նույն տեղում, էջ 67–69: Վկայության որոշ մանրամասների համար շնորհակալ ենք տիկին Անահիտի որդուն՝ Հ. Հարություն վրդ. Պզտիկյանին:

1979–2001 թվականներին ապրեց իր առանձնատան մեջ՝ սիրված և շրջապատված սիրելիներով, և 90 տարեկանը բոլորած՝ գնաց միանալու երկնքի իր հարազատներին՝ միշտ զվարթ և կենսուրախ նկարագրով: Այժմ հանգչում է Ս. Ղազարի վանական գերեզմանատան մեջ՝ սուրբ վարդապետներով շրջապատված:

Հաջորդ վկայությունը Մխիթարյան միաբան Հ. Իգնատիոս Աղամյանինն է.

Տեղահանութենէն յետոյ մեր ընտանիքի եօթ անդամներէն մնացինք երկու հոգի՝ ես եւ քոյրս, զոր տարիներ անց պիտի գտնէի Արժանթինի մէջ: Բախտաւոր եղանք, քանի որ միս ընտանիքներուն մէջ բոլորը մեռան [...] Երբ մէկը իր ընտանիքը կը կորսնցնէ մանուկ հասակին, ոչինչ կը յիշէ: Ես ալ չեմ յիշեր: Վստահ, մայրս կորսնցնելէ յետոյ շատ լացած պէտք է ըլլամ: Բայց ոչինչ կը յիշեմ: Վստահ շատ լացած պէտք է ըլլամ⁵⁵:

Վարդապետն իր վկայությունն ավարտում է հետևյալ կերպ.

Երոպացիները հաանաբար լաւ չեն ճանչնար թուրքերը: Շատ չար են, բայց երբ իրենք զիրենք ուժեղ չեն զգար՝ ձեռք կը համբուրեն: «Այն ձեռքը, որ չես կրնար կտրել, պէտք է համբուրես»: Խաղալ գիտեն երոպացիներու հետ: Այն ամէն բան որ ըրին քիւրտերուն դէմ, արդէն ըրեր էին հայերուն դէմ: Այսօր հայերս հրեաներու պէս ենք. սփռուած ողջ աշխարհով մէկ⁵⁶:

Զմյուռնիայի հրդեհից մազապուրծ Հրանտ Բամպակյանն այսպէս է հիշում 1915 թվականը.

Հայրս դեղագործ էր, եւ մեր դեղատունը մեր տան նոյն շէնքին մէջ էր: Գիշերային հերթապահութիւն կ'ընէ, եւ յաճախորդները ուզած ժամուն կու գային: Անգամ մը՝ արեւածագին, դուռը թակեցին: Մեզ ստիպեցին բանալ եւ հրամայեցին պատրաստուիլ մեկնելու մէկ ժամ յետոյ: Մեր ընտանիքի բոլոր անդամները տարին շոգեկառքի կայարան եւ ուղարկեցին Աֆիոն–Քարահիսար, ուր կը հաւաքէին Զմիւռնիոյ տեղահանուածները: Ամէն օր ոստիկանները, ցուցակը ձեռքերնին, կու

⁵⁵ P. I. Adamian. «Il religioso dai molti nomi». In A. Arslan, L. Pisanello, op. cit., 2001, pp. 93–94.

⁵⁶ Նոյն տեղում, էջ 92:

գային եւ խումբ մը կ'աքսորէին դէպի անապատ: Օր մը եկաւ ոստիկանապետը ու մեզի ըսաւ, որ իրերը հաւաքենք: Մենք հարցուցինք պատճառն ու մեկնելու վայրը: Միայն պատասխանեց, որ կայարան պիտի երթայինք: Զմիռնիոյ երկաթուղին կը կառավարուէր ֆրանսական ընկերութեան մը կողմէ: Կայարաններու ղեկավարները քրիստոնեաներ էին՝ հայեր, յոյներ եւ մալթացիներ: Այդտեղի կայարանի ղեկավարը մտերմօրէն ըսաւ. «Դուք տուն կը վերադառնաք»: Մենք մեր փրկութեան համար պարտական ենք միմիայն Զմիռնիոյ զինուորական կառավարիչ, գերմանացի Լիման Ֆոն Սանտերսին, որ ստիպած էր Զմիռնիոյ թուրք հեղինակութիւնները հայ քսորեալներու անմիջապէս վերադարձը իրենց տուները⁵⁷:

Բամպակյանները վերադարձան տուն, սակայն տարիներ անց պետք է առձակատեին հայրենի Զմյուռնիայի Մեծ հրդեհը: Հրանտն ակննատես էր եղել հոր սպանութեանը, հետո ընտանիքով փախել էին Հունաստան, հետո Ավստրիա, ապա Իտալիա: Երկար ապրեց, իննսունհինգ տարեկան հասակում ենթարկվեց վիրահատության, որը, սակայն, չտվեց սպասված արդյունքը, և Հրանտը կուրացավ: Կտրվելով շրջակա աշխարհից՝ իննսունհինգամյա կույր ծերունուն վերադարձան անցյալի տեսիլքները⁵⁸:

Հրանտի եղբայրը՝ Վազգեն Բամպակյանը, ընդամենը երկու տարեկան էր, երբ բռնկվեց հրդեհը՝ ամբողջովին ավերելով հունական ու հայկական թաղամասերը: Ավագ եղբոր՝ Հրանտի, և Հարություն հորեղբոր վաղ տարիների հուշերով և իր իսկ փորձառությամբ ներհյուսված հուշագրության⁵⁹ մեջ Բամպակյանը փորձում է մանրամասն վերականգնել գոյատևման տառապալից հետևանքները: Դեղագործ հայրը սպանվում է թուրքերի կողմից, մայրը, երեք երեխաների հետ մազապուրծ, ապաստանում է Աթենքի ծայրամասում գտնվող փախստականների ճամբարում: Բամպակյանի հիշողությունները սկսվում են այս ետնախորշերից, որտեղ ապրեցին երկու տասնամյակ շարունակ՝ նախքան ընդմիշտ Իտալիա մեկնելը:

⁵⁷ H. Pambakian. «Il cieco che vede». In A. Arslan, L. Pisanello, op. cit., 2001, pp. 95–96.

⁵⁸ Նույն տեղում, էջ 95:

⁵⁹ V. Pambakian. Viaggiando nei miei ricordi. Private edition, Milano, 2010.

Վերապրյալների և նրանց սերունդների այս հուշերը չեն սահմանափակվում միայն հիշատակելով վերապրյալների մանկության և երիտասարդության, ինչպես նաև նրանց ընտանիքների վրա իրենց դրոշմը թողած ողբերգական եղելությունները, այլ մատնանշում են նաև այն ռազմավարությունները, զանազան միջոցները, որոնց օգնությամբ առճակատել են և փորձել շրջանցել խոչընդոտները՝ ի վերջո հաճախ հաջողելով լիարժեք ներգրավվել նոր հասարակության մեջ: Ինչպես նշում է Հ. Մանուկյանը.

Տեղի ու միջոցների այս ծայրաստիճան սուղ պայմաններում է, որ ի հայտ են գալիս նախաձեռնելու ու դիմակայելու անհատական ու ընդհանրական կարողությունները, որոնք թույլ կտային փախստականների այս փոքր համայնքին ոչ միայն գոյատևել, այլև հայթայթել տարրական միջոցներ՝ երեխաներին կրթության տալու և համայնքի ընթացիկ կյանքն ապահովելու համար⁶⁰:

Քսաներորդ դարի առաջին երկու տասնամյակի ջարդերը, բռնի տեղահանությունները, արտագաղթը, կողոպուտը, հապշտապ տեղափոխությունները լիովին խախտեցին ընտանիքներում տիրող կարգուկանոնը, խարխլեցին ընտանեկան կապերը, կորստի մատնեցին սեփականությունն ու ունեցվածքը: Այնուամենայնիվ, ամեն ընտանիք կարողացավ փրկել որոշ լուսանկարներ: Հուշագրությունների կողքին անցյալը վերաշարադրելու, վերաիմաստավորելու, վերարժևորելու գործում մեծ կարևորություն ունեն նաև վերապրյալների լուսանկարները՝ երբեմնի բարեկեցիկ կյանքի կենդանի վկաները, որոնք մասունքի նման փայփայվել և փոխանցվել են սերնդեսերունդ: Ըստ Դանիել Շերմանի՝ «տեսողությունը միակ զգայարանն է, որը կապող օղակ է իրենց հետ կատարվածի հիշողությունը ներսում կրող մարդկանց ու այդ փորձության միջով չանցած, բայց հիշողության մի մասը դառնալ ցանկացողների միջև»⁶¹: Իտալիայում ապաստանած վերապրյալների հուշերը պատմել են

⁶⁰ A. Manoukian. *Presenza Armena in Italia, 1915–2000*. Guerini e Associati, Milano, 2014, p. 251.

⁶¹ D. Sherman. *The Construction of Memory in Inter-war France*. University of Chicago Press, Chicago/London, 2002, p. 14.

նան այս լուսանկարների միջոցով, որոնք ամփոփված են «Հիշատակ»⁶² գրքի մեջ:

2000 թվականին Միլանում Պիետրո Քյուչուկյանը հրատարակում է «Ձայն անապատի» գիրքը: Հեղինակը նամակների, պատմությունների և հարցազրույցների միջոցով վերականգնում է Եղեռնի սարսափը և հարգանքի տուրք մատուցում այն օտարներին, ովքեր դատապարտեցին քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, ովքեր, իրենց կյանքը վտանգելով, փրկեցին հայ մանուկների, կանանց և տղամարդկանց՝ ընդդիմանալով օսմանյան կառավարության ոճրագործություններին⁶³: Քյուչուկյանն անդրադառնում է պարզ մարդկանց պատմություններին, ինչպիսին թուրք սպա Հասան Ամձան էր, որը հայերի տեղահանություններն ու ջարդերը դատապարտելու հետևանքով թուրքերի կողմից պիտակվել էր որպես ազգի դավաճան: Հատորը ամփոփում է մի շարք կարճ կենսագրություններ այն մարդկանց, ովքեր մասնակից դարձան անմիջականորեն իրենց չվերաբերող մի ողբերգության, որի մասին կարծես չախարհը մոռացել է, թեև այն շարունակում է մղձավանջներով լցնել վերապրյալների զավակների և թոռների գիշերները:

Եղեռնի թեման Իտալիայում պատմել են նաև պատկերապատումների միջոցով: Պաոլո Կոսին իր «Մեծ Եղեռն. մեծ չարիք» գրքում պատկերանկարների միջոցով նկարագրում է 1915 թվականի կոտորածներն ու դրանց հետևած տեղահանությունները՝ ոգեշնչվելով Մուսա լեռան հերոսամարտի պատմությունից, ինչպես նաև Արմին Վեզների և Սողոմոն Թեիլերյանի կերպարներից: Գծագրերն ու սեղմ նախադասությունները երևան են հանում ողջ սարսափը մի նահատակության, որ հայերին դարձրեց «բոլոր

⁶² A. Manoukian, F. Manoukian. Hishatak (1865–1930). Immagini e memorie: da album di famiglie armenie tra Ottocento e Novecento. Oemme Edizioni, Milano, 1999.

⁶³ P. Kuciukian. Voci nel deserto. Giusti e testimoni per gli armeni, Ed. Guerini e Associati, Milano, 2000.

հնարավոր մահերի» զոհ⁶⁴: Մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ Պաոլո Կոսին խոստովանեց.

Հայոց Ցեղասպանության մասին գործնականում ոչինչ չգիտեի: 2007 թվականին առաջին անգամ լսեցի իմ լավ բարեկամ Ազատ Վարդանյանից⁶⁵, որը հաճախ է ճանապարհորդում Թուրքիա՝ Արարատ լեռան վրա հնագիտական հետազոտություններ կատարելու: Երբ ինձ պատմեց, որ եղել են մոտ մեկուկես միլիոն զոհեր, ես մտածեցի, որ ուռձացնում է պատմությունը: Ինչպե՞ս է հնարավոր, որ այդքան մարդ է կոտորվել, իսկ պատմության գրքերում նույնիսկ մեկ տող չկա այդ մասին: Սկսեցի հետաքրքրվել, ուսումնասիրել, փաստաթղթեր հավաքել և ծանոթացա տխուր ճշմարտությանը: Եվ ահա այսպես որոշեցի գործի անցնել ու պատկերների միջոցով պատմել այս եղելությունը: Ծնվեց գիրքը, որը վերնագրեցի «Մեծ Եղեռն. մեծ չարիք»: Գիրքը թարգմանվել է և լույս տեսել բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում, Բելգիայում, Նիդերլանդներում, Իսպանիայում, Հունաստանում, Շվեյցարիայում և Կորեայում: Գիրքն արժանացել է նաև հանուն ժողովրդավարության՝ Ֆրանսիայի խորհրդարանի «Condorcet Aron» մրցանակի: Ինձ համար դա մեծ պատիվ էր, քանի որ առաջին անգամ էր, որ մրցանակը շնորհվում էր պատկերապատումի: Այս աշխատանքն ինձ թույլ տվեց առավել լավ ճանաչել Հայաստանն ու հայերին և առանձնահատուկ խանդավառություն զարգացնել այս ժողովրդի նկատմամբ: Եվ այսպես եղավ, որ ծնվեց մյուս նկարազարդ պատմությունը «Խորհրդավոր Արարատ լեռը»⁶⁶: Ինձնից բացի՝ շատ չեն պատկերապատողները, ովքեր անդրադարձել են հայոց պատմությանը: Անշուշտ, կարող եմ նշել Հյուգո Պրատի, Ջուզեպպե Պալումբոյի և, իհարկե, երևանաբնակ տաղանդաշատ ու բարեհոգի նկարիչ Տիգրան Մանգասարյանի անունները:

2011 թվականին Իտալիայում հրատարակվում է Ֆրանկա Ֆեսլիքենյանի «Ժայռը և Նուռը» գիրքը, որի նախաբանում հեղինակն ընդգծում է.

Գիրքը գրելուց առաջ երեսուն տարի մտածեցի: Ի վերջո այն հրատարակեցի 2000 թ.՝ առանց վերընթերցելու և առանց նույնիսկ սրբագրելու: Երբ բացվում են անցյալի էջերը, հիշողություններն անձրևի նման թափվում են գլխիդ և հիմնա-

⁶⁴ P. Cossi. Medz Yeghern. Il Grande Male. Hazard Edizioni, Milano, 2007.

⁶⁵ Ազատ Վարդանյանի իրական անունն է Տիտո դե Լուկա, որը իտալացի լեռնագնաց է և հեղինակել է «Արարատ՝ Նոյյան տապանի հետքերով» [Ararat. Sulle Tracce dell'Arca di Noe', Nuovi sentieri editore, Belluno, 2008] գիրքը:

⁶⁶ P. Cossi. «Ararat, la montagna del mistero». Hazard Edizioni, Milano, 2011.

կանում, որպես կանոն, դառն են: Այս վերատեսած բնագիրը նվիրում են իմ բոլոր մեռելներին ու ողջերին և նրանց, ովքեր հետո են աշխարհ գալու և ցանկանալու են ճանաչել իրենց արմատները⁶⁷:

Այն հարցին, թե ինչու է որոշել պատմել իր անցյալը, Ֆրանկան պատասխանել է.

Հարկավոր է հետևել Կոնֆուցիոսի բարձր խորհրդին՝ «երեխաներին պետք է թողնել արմատներ և թևեր»: Արմատներ՝ որպեսզի չնմանվեն քամու ուղղությամբ քշվող անապատի այն անարմատ բույսերին, որոնք սնունդ ստանալու համար չեն կառչում հողից: Թևեր՝ որպեսզի դրանցով սլանան դեպի ապագա՝ ուժեղ այն անցյալով, որ մեր ներսում է, հզոր, ինչպես մի ժայռ, որի վրա ամուր տնկված են նունեխները: [...] Քանի դեռ աշխարհում կլինեն երկու հայ, չի մարի մեր երկրի ու կոտորածի հիշատակը, ասում է Ֆրանկա Ֆեալիքենյանը և ավարտում. եթե չլինեք մեր Յեղասպանությունը, թերևս, չէր պատահի Հոլոքոստի ողբերգությունը:

Այստեղ, բնականաբար, հեղինակը նկատի ունի Հիտլերի հայտնի՝ «Ի վերջո ռվ է հիմա հիշում հայերի բնաջնջումը» արտահայտությունը⁶⁸ (*Wer redet heute noch von der Vernichtung der Armenier?*⁶⁹)

Մյուս գիրքը պատկանում է կինոբեմադրիչ Վազգեն Բերբերյանի գրչին: Հեղինակն իր առաջին⁷⁰ գրական փորձից հետո Միլանում հրատարակեց «Անտարբեր երկնքի տակ» պատմավեպը⁷¹, որի համար նրան շնորհվեց հեղինակավոր «Acqui Storia» մրցա-

⁶⁷ F. Feslikenian, *La roccia e il melograno*, Ed. Italia Press, 2011. Գիրքն առաջին անգամ հրատարակվել է Միլանի «Մուրսիա» հրատարակչատան կողմից 2000 թ.:

⁶⁸ «Հիտլերը և Հայոց Յեղասպանությունը» գրքում Գևորգ Բարդակյանը վերլուծում է Հիտլերի ձառը՝ հաստատելով «Ի վերջո ռվ է հիմա հիշում հայերի բնաջնջումը» արտահայտության վավերականությունը, տես Bardakjian Kevork, *Hitler and the Armenian Genocide*, Cambridge, Mass.: The Zoryan Institute, 1985: Գիրքը թարգմանվել է նաև հայերեն, Բարդակյան Գևորգ, *Հիտլերը և Հայոց Յեղասպանությունը*, Նշանակ, Երևան, 2005:

⁶⁹ «Akten zur Deutschen Auswärtigen Politik 1918–1945,» Serie D, Band VII, (Baden–Baden 1956), pp. 171–172.

⁷⁰ Վազգեն Բերբերյանը Սոնյա Ռաուլի հետ համահեղինակել էր «Come Sabbia nel Vento» [Ինչպես քամուն տրված ավազ] վեպը, որը ներկայացնում է Սպիտակի երկրաշարժից փրկված հայ կնոջ պատմությունը:

⁷¹ V. Berberian. «Sotto un cielo indifferente». Sperling & Kupfer, Milano, 2013.

նակը «Լավագույն պատմավեպ» անվանակարգում (2014 թ.):

Մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ Բերբերյանն ասաց.

«Անտարբեր երկնքի տակ» պատմավեպը ծնվել է մեծ պատմություն պատմելու ցանկությունից, պատմություն, որը կարողանա ընդգրկել բազմաթիվ այլ փոքր պատմություններ, որոնցով մեծացել եմ: Պատմություններ, որոնք լսել եմ մորիցս, տատ ու պապիցս, մյուս ազգականներիցս: Վառ փորձառություն, որն ապրել եմ առաջին դեմքով, որն իր անջնջելի հետքն է թողել հոգուս մեջ: Կցանկանայի, սակայն, ընդգծել, որ քանզի սա վեպ է, հիմնված չէ ինքնակենսագրական փաստերի վրա, ուստի նկարագրված դեպքերը ճշմարտանման են: Գրքի հրատարակությունը զուգադիպեց մորս մահվան հետ: Կարծես զգայի նրա վախճանը և ուզենայի հարգանքի տուրք մատուցել նրան ու նրա ընտանիքին: Նախքան գրելը շատերից հարցազրույց վերցրի Հունաստանում, Իտալիայում և Հայաստանում, այն մարդկանցից, ովքեր ապրել էին այնպիսի վայրերում և պայմաններում, որ ես ձգտում էի նկարագրել: Այս մարդկանց վկայություններն ինձ օգնեցին հասկանալու վեպիս էությունը, որի շուրջ օրեցօր հյուսեցի վերջնական տեքստը:

Բերբերյանի պատմությունը սկսվում է այնտեղ, որտեղ պատմությունների մեծ մասն ընդհանրապես ավարտվում է: Հեղինակը նկարագրում է հետեղեռնյան ժամանակաշրջանը:

Երեսունական թվականներն են: Հայ երիտասարդ մի զույգ Պատրասի փախստականների ճամբարում աշխարհի է բերում երկվորյակներ, որոնց հրեշտակների անունով կոչում է Միքայել և Գաբրիել: Կինը՝ Սաթենը, փրկվել է Զմյուռնիայի հրդեհից, որը կուլ է տվել նրա ողջ ընտանիքին, մինչդեռ ամուսինը՝ Սերոբը, Ադաբազարից է, որտեղից հեռացել է, երբ տակավին տասներկու տարեկան էր: Բերբերյանը նկարագրում է փախստականների ճամբարի իրականությունը, որտեղ տառապանքի, աղքատության, շահագործման կողքին տիրում է նաև մարդկային մեծահոգություն: Հեղինակն անդրադառնում է որդիներին նման դժվար միջավայրում մեծացնելու ծնողների համառ ջանքերին: Սերոբը, որը տարիներ շարունակ աշխատել էր տեքստիլ արդյունաբերության մեջ որպես բանվոր, հեռացվում է աշխատանքից: Ծայրը ծայրին հասցնելու համար սկսում է

դռնեղուռ ընկնել և հողաթափեր վաճառել, որոնք պատրաստում էր տանը կնոջ հետ միասին իրենց հին կարի մեքենայով: Այս ամենին գումարվում է Սաթենի հանկարծահաս հիվանդությունը: Ամուսինը, վախենալով կնոջը կորցնելուց, երկվորյակներից մեկին վաճառում է Աթենքի մի հարուստ հայ ընտանիքի:

Այստեղից բաժանվում են երկու եղբայրների կյանքի ուղիները, որոնք, առանց իմանալու միմյանց գոյության մասին, գաղտնի մի թելով կապված կլինեն, կարմիր մի թել, որը նրանց կուղեկցի տարբեր երկրներ. բարեկեցիկ պայմաններում մեծացող Միքայելին՝ ուսանելու Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում, իսկ կյանքի տառապանքների միջով անցած Գաբրիելին՝ ծնողների հետ միասին Խորհրդային Հայաստան, որտեղ նրան սպասում էին այլ դժվարություններ: Այդուհանդերձ, Միքայելը երջանիկ չէ: Նրան կարծես տանջում են եղբոր տառապանքները, որի գոյության մասին ընդհանրապես լուր չունի: Վեպն ունի շրջադարձային ավարտ:

Ստորև մեջբերված հատվածում Բերբերյանը նկարագրում է Հունաստան հասած առաջին հայ փախստականների հոգեվիճակն ու դժվարություններին դիմագրավելու նրանց կարողությունը.

Յուրաքանչյուր օրվա նպատակը մեկն էր՝ վերապրել և առաջ գնալ: Հաջողելու համար հարկավոր էր սովորել նոր լեզու, գտնել աշխատանք, խնամել հիվանդներին և դեռ ավելի դժվար՝ հոգ տանել անբուժելի կարոտախտից տառապողներին: Երբեմն պատահում էր, որ ինչ-որ մեկն արթնանար գիշերվա կեսին ու բղավեր թուրքերեն *«Bèn memlekèt ghidiorùm! Ես հայրենիք եմ վերադառնում»*: Եվ զարմանալի էր լսելը, որ «հայրենիք» էր կոչում այն երկիրը, որը նրան հալածել ու չարչարել էր⁷²:

Մեծ Եղեռնի հարյուրամյակի առիթով «Ջունտինա» հրատարակչատունը հրատարակեց «Pro Armenia. Հրեական ձայները Հայոց Ցեղասպանության վերաբերյալ» գիրքը: Այն ամփոփում է թուրքերի մարդասպան և կործանարար ցասմանն ականատես

⁷² Նույն տեղում, էջ 9:

չորս հրեաների վրդովված վկայությունները⁷³: Ինչպես նշում է Անտոնիա Արսլանը նախաբանում. «Յուրաքանչյուր ականատեսի վկայություն անվրեպ ճշտապահությամբ տալիս է միևնույն ողբերգական տեղեկությունները՝ տղամարդկանց սպանություն, կանանց, երեխաների և ծերերի արտաքսում դեպի ոչնչություն, գաղթի ճանապարհին անընդհատ հարձակումներ, բռնություններ և սարսափ, ազաի ու դաժան ոստիկաններ»⁷⁴: Գիրքն ընդգրկում է ջարդերից անմիջապես հետո ծնված անտիպ գրություններ: Մասնավորապես հետաքրքիր է հրեական հայտնի NILI լրտեսական կազմակերպության ղեկավար Ահարոն Ահարոնսոնի հետևյալ վկայությունը.

Շատ բարդ խնդիր է Լոնդոնում հանգիստ նստել և գրել հայերի ջարդերի մասին: Ոչ ոք, եթե Քիփլինգ կամ Մեյսֆիլդ չէ, չպետք է նման փորձ անի: Ջարդերն իրականացվել են այնպիսի լայն մասշտաբով, այնպիսի կատարյալ դաժանությամբ և շարունակվել այնքան երկար ժամանակ և այնպես կանոնավոր եղանակով (միակ գործը, որի մեջ թուրքերը կարծես թե ի վիճակի են լինելու կանոնավոր), որ որքան փորձում ես սանձել սեփական ոճը, որքան փորձում ես լինել չափավոր, այդուհանդերձ թվում ես չափազանցության հակված⁷⁵:

NILI կազմակերպությունը բաղկացած էր տասնիններորդ դարում Ռուսիայից Ավետյաց երկիր արտագաղթած ընտանիքների զավակներ մի քանի երիտասարդ հրեաներից, որոնք Պաղեստինում (ուստի՝ Օսմանյան կայսրությունում) հաստատված իրենց դիրքերից որոշել էին արժեքավոր ռազմավարական տեղեկություններ տրամադրել անգլիացի հետախույզներին ընդդեմ Օսմանյան կայսրության: Խումբն այս որոշման էր եկել նաև ազդված հայերի տեղահանություններից, որոնց անգոր ականատեսներն էին եղել

⁷³ F. Cortese, F. Berti. «Pro Armenia. Voci ebraiche sul genocidio armeno». Giuntina Editrice, Firenze, 2015.

⁷⁴ Նույն տեղում, էջ 12:

⁷⁵ Նույն տեղում, էջ 56:

գաղթի ճանապարհին և այնպիսի զգացողություն ունենին, որ այդ ամենից հետո հայերի նույն ճակատագիրը կարող է վիճակվել նաև հրեաներին: Գրքում ականատեսների վկայության կողքին նշմարվում է նաև Եղեռնի զոհ դարձած հայ ժողովրդի ցավի հանդեպ կարեկցանքի և եղբայրության զգացում:

Դաշտերը լքված են, գյուղերի ջրհորներից հայ աղջիկներն այլևս չեն լցնում իրենց սափորները. թուրքերն են անցել այնտեղից: [...] Հայեր, իմ եղբայրներ, մի հրեա է ձեզ հետ խոսում, ձեզ պես հետապնդված, անարգված մեկ այլ ազգի որդի: [...] Հայեր, իմ եղբայրներ, կառավարություններից մենք ոչինչ չենք կարող ակնկալել, մենք միայն մեր հոգիների տերն ենք... 1915 թ. նոյեմբերին Նյու Յորքից գրում է ականատեսներից մեկը՝ Ալեքսը, «Հայաստան» խորագրով իր հոդվածում:

Առավել հուզիչ է նրա քրոջ՝ Սառայի պատմությունը. աղջիկը չի գրում, տառապում է և գործում: 1915 թ. ամռանը՝ Կոստանդնուպոլսից տուն ճամփորդելիս, նա անցնում է ողջ Անատոլիան և իր աչքերով տեսնում, թե ինչ են արել հայերին: Այն աստիճան է ցնցվում Սառայի ներքին աշխարհը, որ նա տարիներ շարունակ տառապում է հոգեկան լուրջ խանգարումներից: Բայց երբ 1917 թ. սեպտեմբերին կհայտնաբերվի, կբանտարկվի ու կխոշտանգվի, Սառան ոչինչ չի բացահայտի իր խմբի անդամների գործունեությունից: Ինքնասպանությունից առաջ կսահմանափակվի՝ իրեն խոշտանգողներին անվանելով «վախկոտներ» ու «վայրի գազաններ», և կհաստատի իր հաղթանակը:

Դուք տանուլ եք տվել, փրկությունը մոտ է: Ես փրկել եմ իմ ժողովրդին, ես վրեժխնդիր եմ եղել հայերի արյան համար: Անիծված լինեք հավիտյան⁷⁶:

Իտալիայում թարգմանաբար հրատարակվել են նաև այլ պետություններում լույս տեսած՝ Եղեռնի թեմայով հուշագրություն-

⁷⁶ Նույն տեղում, էջ 14:

ներ, ինչպես նաև գեղարվեստական գրականություն, այդ թվում՝ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Լ. Զ. Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք», Է. Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը», Ֆ. Չեթինի «Հրանուշ, մեծ մայրս», Վ. Ոսկանյանի «Շշուկների մատյանը», Ք. Բոհջալյանի «Ավազե ամրոցի աղջիկները» և այլն⁷⁷:

⁷⁷ Franz Werfel, *I quaranta giorni del Mussa Dagh*, Mondadori, Milano, 1935; Leon Z. Surmelian, *Chiedo a voi, signore e signori*, Ed. Frassinelli, Segrate 1947; Gérard Chaliand, *Memoria della mia memoria*, Ed. Argo, Lecce, 2003; Arshavir Shiragian, *Condannato ad uccidere. Memorie di un patriota armeno*, Ed. Guerini e Associati, Milano, 2005; Fayez-El-Ghossein, *Il beduino misericordioso. Testimonianze di un arabo musulmano sullo sterminio degli armeni*, Ed. Guerini e Associati, Milano, 2005; Kemal Yalçın, *Con te sorride il mio cuore. Viaggio tra gli armeni nascosti della Turchia*, Ed. Lavoro, Roma, 2006; Edgar Hilsenrath, *La fiaba dell'ultimo pensiero*, Ed. Marcos y Marcos, Milano, 2006; Donald E. Miller e Lorna Tourian Miller, *Survivors. Il genocidio degli armeni raccontato da chi allora era bambino*, Ed. Guerini e Associati, Milano, 2007; Fethiye Çetin, *Heranush: mia nonna*, Ed. Alet, Padova, 2007; Philippe Videlier, *Notte turca*, Donzelli Editore, Roma, 2007; Margaret Ajermian Ahnert, *Le rose di Ester. Una madre racconta il genocidio armeno*, Ed. Rizzoli, Milano, 2008; Zabel Yessayan, *Nelle rovine*, Ed. peQuod, Ancona, 2008; David Kherdian (a cura di A. Arslan), *Lontano da casa*, Ed. Guerini e Associati, Milano, 2010; Matthew Spender, *Una storia armena. Vita di Arsile Gorky*, Barbès Editore, Firenze, 2010; Varuzhan Vosganian, *Il libro dei sussuri*, Keller, Rovereto, 2011. Chris Bohjalian, *Le ragazze del castello di sabbia*, ed. Elliot, Roma, 2013.

ԳԼՈՒԽ 2

Հայոց Ցեղասպանության գեղարվեստական գրականություն. Անտոնիա Արսլան

Հայոց Ցեղասպանության գեղարվեստական գրականության ստեղծման գործում առանցքային դեր ունեն ականատեսների վկայություններն ու հուշագրությունները: Վերջին տարիների մեր ուսումնասիրությունների արդյունքում հայտնի դարձավ, որ պատմական իրադարձությունը միշտ չէ, որ գրավոր արտահայտություն է գտնում ողբերգական եղելությունից անմիջապես հետո: Նախքան գրառվելը այն վերարտադրվում, «թարգմանվում է»⁷⁸ վերապրյալների մտքում՝ դառնալով հիշողություն: Այնուհետև՝ հաճախ միայն տասնամյակներ անց, ականատեսն ուժ է գտնում հաղթահարելու հոգեբանական արգելքները և թղթին հանձնելու հուշերը: Որոշ դեպքերում, սակայն, սահմանափակվում է բանավոր վկայություն տալով՝ այդ կերպ հիշողությունը վերածելով բանավոր պատմության, ա) որը կարող է գրի առնվել գիտնականների կողմից և դառնալ ուսումնասիրության նյութ⁷⁹, բ) որի վրա կարող է հիմնվել վերապրյալի սերունդը և հուշագրություն գրել⁸⁰, գ) որն ի վերջո կարող է գտնել իր արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ⁸¹:

Բնականաբար, այս անցումները պարտադիր չեն, և երբեմն կապը պատմական իրադարձությունից գրավոր վկայություն կարող է ուղիղ լինել⁸²:

Ականատեսների հուշերն առ այսօր անգնահատելի միջոց են

⁷⁸ S. Haroutyunian. «Echoes of the Armenian Genocide in Literature and Cinema». Annali di Ca' Foscari, Venezia, 2015.

⁷⁹ V. Svazlian. The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors. Gitutian, Yerevan, 2011.

⁸⁰ A. Tachdjian, op. cit., 2003, V. Gianighian, op. cit., 2014..

⁸¹ Ի թիվս այլոց, տե՛ս Վ. Ոսկանեան, Շշուկների մատյան, թարգմ.՝ Ս. Սելյան, Անտարես, Երևան, 2014, Բ. Բոհջալյան, Ավագե ամբոցի աղջիկները, թարգմ.՝ Ա. Արսենյան, Ծիծեռնակ, Երևան, 2014:

⁸² Տե՛ս Պետրոս Տոնապետեան (1922):

ոչ միայն հետազոտողների, այլև Յեղասպանության մասին գեղարվեստական երկեր գրողների համար, որոնք, հիմնվելով այդ հուշերի վրա, սահեցնում են եղելությունը պատմաբանների գրասեղաններից դեպի ժողովուրդը՝ նպաստելով պատմության, այս պարագայում՝ Մեծ Եղեռնի լուսաբանմանը, թեև շաղխված գեղարվեստական բազմազան երանգներով:

Ասվածի ցայտուն օրինակն են իտալահայ գրող Անտոնիա Արսլանի՝ Յեղասպանությանը նվիրված «Արտույտների ագարակը»⁸³, «Զմյուռնիայի ճանապարհը»⁸⁴, «Փայտյա մարգարիտների շրշյունը»⁸⁵ և «Մշո գիրքը»⁸⁶ վեպերը, որոնք ներառում են ինքնակենսագրություն ու կենսագրություն, պատմություն ու հիշողություն, փաստագրություն ու հորինվածք: Իր հարցազրույցներից մեկում հեղինակը նշում է. «Ես պատմություններս հյուսում եմ իրական դեպքերի շուրջ, որոնք հարստացնում եմ անձնական հուշերով և այլոց վկայություններով»⁸⁷:

Առաջին երեք վեպերի մեջ Ա.Արսլանն ընտանիքի պատմության միջոցով ներկայացնում է Եղեռն ապրած համայն հայության ճակատագիրը և կորուսյալ հայրենիքի հանդեպ տածած կսկծեցուցիչ կարոտը, իսկ «Մշո գիրքը» վեպում, որը գեղարվեստական երանգավորմամբ հյուսված է «Մշո ճառընտիրը» հայոց ամենամեծ ձեռագիր մատյանի փրկության պատմության շուրջ, հեղինակն անդրադառնում է մշակութային ցեղասպանությանը:

Անտոնիա Արսլանը պսակվել է գրական բարձրավարկ մրցանակներով, ինչպիսիք են Premio Berto, Premio Fregene, Premio

⁸³ A. Arslan. La Masseria delle Allodole. Rizzoli, Milano, 2004, «Արտույտների ագարակը», թարգմ.՝ Ս. Հարությունյան, Սահակ Պարթև, Երևան, 2007, 2-րդ հրատ., Երևան, Սահակ Պարթև, Զանգակ, 2012:

⁸⁴ A. Arslan. La strada di Smirne. Rizzoli, Milano, 2009. «Զմյուռնիայի ճանապարհը», թարգմ.՝ Ս. Հարությունյան, Երևան, Սահակ Պարթև, Զանգակ, 2012:

⁸⁵ A. Arslan. Il rumore delle perle di legno. Rizzoli, Milano, 2015.

⁸⁶ A. Arslan. Il libro di Mush. Skira, Milano, 2012. Պատրաստվում է վեպի հայերեն թարգմանությունը:

⁸⁷ A. Arslan. Il libro salvato dalle donne. www.letteratura.rai.it/articoli/antonia-arslan-il-libro-salvato-dalle-donne/13814/default.aspx.

Stresa di Narrativa, Premio Fenice–Europa, Premio P.E.N, Premio Manzoni, և շքանշաններով, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե շքանշան (2010), «Նարեկացի» Ոսկե շքանշան (UCLA, 2010): 2012 թվականին ՀՀ նախագահի կողմից Անտոնիա Արսլանին շնորհվեց Մովսես Խորենացի մեդալը՝ գրականության ասպարեզում ներդրած ավանդի և մեծագույն ձեռքբերումների համար:

Պաղովայի համալսարանն ավարտելուց, Համբուրգի և Գյոտինգենի համալսարաններում ուսանելուց հետո Անտոնիա Արսլանը որոշում է փոխել իր մասնագիտական հետազոտության դաշտը՝ անցնելով դեպի 19–20–րդ դարերի իտալական գրականության ոլորտը: Սկսում է Պաղովայի համալսարանում դասավանդել իտալական ժամանակակից գրականություն: Հեղինակ է ժողովրդական բանարվեստին, Իտալիայում հավելվածային գրականություն կոչված գրական գործերին, ինչպես նաև իտալուհի գրողների «ընկղմված համաստեղությանը» նվիրված ուսումնասիրությունների⁸⁸: Վերջին տարիներին, սակայն, Անտոնիան հետզհետե սկսում է ինքն իրեն գտնել որպես հայ, ինչն էլ արտացոլվում է նրա հրատարակությունների մեջ: Կ.Հ. Մծիկյանի և Ա.Հ. Սիրաքիի համագործակցությամբ թարգմանում է Դանիել Վարուժանի «Հացին երգը»⁸⁹ և «Ցորյանի ծովեր»⁹⁰ ժողովածուները, որոնք Իտալիայում արժանանում են արտակարգ ընդունելության, ունենում են մի շարք վերահրատարակություններ:

Հեղինակը Դանիել Վարուժանին անդրադարձել է նաև իր վեպերից մեկում, որտեղ գեղարվեստական երանգավորմամբ պատկերում է գրողի ձերբակալությունը.

⁸⁸ A. Arslan. Dame, droga e galline. Il romanzo popolare italiano fra Ottocento e Novecento. Padova, Cleup, 1977. Id., Dame, galline e regine. La scrittura femminile italiana fra '800 e '900, Guerini e Associati, Milano, 1999.

⁸⁹ D. Varujan (a cura di A. Arslan). Il Canto del Pane. Ed. Guerini e Associati, Milano, 1992 (2014 nuova ed.).

⁹⁰ D. Varujan (a cura di A. Arslan). Mari di grano e altre poesie armene. Paoline, Milano, 1995.

Կոստանդնուպոլիս. 1915 թվականի ապրիլի քսանչորսի երեկոն: Լայնածավալ, հավաքական ձերբակալությունը սկսված էր: Երեխաների և հղի կնոջ առջև քանաստեղծ Դանիել Վարուժանը խիզախություն հանդես բերեց և ժպտաց.

Ապահովության համար արված քայլ է: Պատերազմ կա: Միջազգային ուշադրության կենտրոնում ենք, չեն կարող այլևս կրկնել Կարմիր սուլթանի տարիների սարսափները (բայց մի չար տեսիլք խափանեց նրա տեսողությունը, և մի ներքին դող ցնցեց նրա մարմինը):

Կինն արագ ամուսնու պայուսակը պատրաստեց և հացի տակ թաքցրեց մի գդալ ու մի աման մրգանուշ:

Դրանց կարիքը չէք ունենա, ասաց ոստիկանության սպան, որ հրամաններ էր արձակում փոքր խմբին, միայն կարճ ժամանակով եք բացակայելու:

Բայց նրա բարեկիրթ ձայնից Վարուժանը հանկարծ զգաստացավ, նայեց նրա աչքերի մեջ, որտեղ և մահ կարդաց: Այդժամ պաղ հանդարտությամբ ողջագուրվեց կնոջ հետ, կարծես սովորական հրաժեշտ լինեք, արագ վերցրեց մի գիրք, գրիչ ու տետրակն այն քերթվածի, որն սկսել էր գրել:

Ազատ ժամեր կունենամ, վստահ եմ. ինձ հետ «Հացին երգն» եմ վերցնում:

Կինը նրան նայում էր փոքր-ինչ զայրացած: Հոգնություն էր զգում, երրորդ հղիությունը հանկարծ սկսեց իրեն զգալ տալ. թվում էր՝ միայնակ էր տանում այն իր ուսերին: Ինչո՞ւ էր ամուսինը հեռանում այդքան հնազանդորեն, հարցնում էր ինքն իրեն և ապա զգում էր նրա մարմնի բացակայությունն իր կողքին. ահա, արդեն հեռացավ, և օդն էլ այնքան ծանրացավ, կորցրեց բոլորը: Եվ երբեք էլ այն չի վերագտնի⁹¹:

Արսլանը ֆրանսերենից թարգմանում է նաև Կ. Մութաֆյանի «Հայոց Յեղասպանություն»⁹² գիրքը, Լ. Պիզանելլոյի հետ խմբագրում է «Հուշեր»⁹³ վկայությունների ժողովածուն, հրատարակում Վ. Տատրյանի «Հայոց Յեղասպանության պատմությունը»⁹⁴, ինչպես նաև Հ.Լ. Զեքիյանի հետ աշխատասիրում է Ժ. Տետեյանի «Հայոց Պատմության»⁹⁵ իտալերեն հրատարակությունը:

Անտոնիա Արսլանը հետզհետե վերագտնում է իր հայկական

⁹¹ Ա. Արսլան, 2007, էջ 81:

⁹² C. Mutafian. Metz Yeghèrn. Il genocidio degli Armeni. Ed. Guerini e Associati, Milano, 2001.

⁹³ A. Arslan, L.Pisanello, op. cit., 2001.

⁹⁴ V. Dadrian. Storia del genocidio armeno. Ed. Guerini e Associati, Milano, 2003.

⁹⁵ G. Dédéyan. Storia degli armeni. Ed. Guerini e Associati, Milano, 2002.

խոր և չբացահայտված ինքնությունը և գրում առաջին վեպը⁹⁶: Անկասկած, նշանակալից իրադարձություն էր Անտոնիա Արսլանի «Արտոյտների ագարակը» եռագրության հրատարակությունը ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակով, որի առաջին գիրքը դասվեց բեսթսելլերների կարգին, տասը տարվա մեջ ունեցավ երեսուներկու հրատարակություն, ինչպես նաև թարգմանության շնորհիվ հասեց Իտալիայի սահմանը՝ հասու դառնալով միջազգային ընթերցողին՝ Հայաստանից մինչև Հունաստան, Ամերիկայից մինչև Շվեդիա, Ճապոնիայից մինչև Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Սլովենիա, Ռումինիա, Հունգարիա, Իսպանիա և այլուր, Էկրանավորվեց հայտնի կինոբեմադրիչներ Տավիանի եղբայրների կողմից և 2007 թ. ներկայացվեց Բեռլինի միջազգային «Բեռլինալե» կինոփառատոնին՝ մրցույթից դուրս: Այս արտառոց հաջողությունը պայմանավորված է ոչ միայն վեպի գրական արժեքով, որն, անկասկած, մեծ է, այլ նաև այն հանգամանքով, որ վեպն ընդունվեց ընթերցողի և հանդիսատեսի կողմից՝ որպես Մեծ Եղեռնի զարհուրելի չարիքի կենդանի վկայություն:

Արսլանների պարագայում պահանջվեց երեք սերունդ, որպեսզի յուրացվեր պատմական ողբերգությունը, հաղթահարվեր աներևակայելի հոգեբանական խոչընդոտների մութ անդունդը և գրավոր մշակում տրվեր այն հիշողությանը,⁹⁷ որին Անտոնիա Արսլանը հաղորդակից էր դարձել Իտալիայում ապրող իր պապի՝ Երվանդ Արսլանյանի շնորհիվ, որը որդու՝ Քայել Արսլանի հետ քիթկոկորդ-ականջի մասնագիտության ասպարեզում մեծանուն, նորարար բժիշկ էր եվրոպական չափանիշներով:

«Արտոյտների ագարակը», գրում է Անտոնիա Արսլանը, ծնվեց այն բոլոր պատմությունների արդյունքում, որոնք լսել էի մանկությանս ընթացքում վերապրյալներից, զարմիկներիցս, հորս կամ պապիս այցելության եկած տարեց մարդ-

⁹⁶ A. Antonia, 2004, Ա. Արսլան, 2007:

⁹⁷ R. Bolletti (a cura di). Scrittura e Memoria. Edizioni Frenis Zero, Lecce, 2013, p. 6.

կանցից: Եվ այսպես, Յեղասպանության և վերապրյալ հայերի ողբերգության հետքերը դրոշմվեցին հոգուս և սրտիս մեջ: Ամբողջ կյանքում կրեցի այդ հետքերն առանց քաջություն ունենալու դրանք դուրս ցայտեցնելու կամ խոսելու դրանց մասին: [...] Վկայությունները կարևոր են, շարունակում է հեղինակը, բայց և կարևոր է հասկանալ, թե ինչպես են այս վկայությունները վերապրվել հաջորդ սերունդների կողմից, ովքեր, ի տարբերություն իրենց պապերի, խոսելու քաջություն են ունեցել, ինչպես՝ ես: Ոչինչ չէին պատմում, ո՛չ պապս, ո՛չ Անրիեթ հորաքույրը, որ Եղեռնի վերապրյալ էր և ապրում էր մեր տան դիմաց: Տարիների անցնելու հետ մեկտեղ հասկանում էի, որ այս լռությունը լի էր չսաված ինչ–որ բաներով... Կռահում էի, որ այն մոգական մի բան էր թաքցնում⁹⁸...

Մինչև որ Երվանդ պապը տասնամյակների լռությունից հետո մի օր որոշեց թոռանը բացել սրտում խոր թաղած գաղտնիքը, որը երբեք չէր ցանկացել կիսել որդիների հետ, որոնց համար «հին հայրենիքը ընդմիշտ արգելված կլիներ՝ փակված իր մշուշապատ հիշողության մեջ»⁹⁹:

Փոքրիկ Անտոնիան ծանր հիվանդ էր: Պապը, հայրն ու ազգականներից ոմանք, բժիշկներ լինելով հանդերձ, չէին կարողանում հասկանալ աղջկա քառասուն աստիճան ջերմության պատճառը: Խորհրդավոր տաքությունը օր օրի հալեցնում էր նրան, մինչև որ թափվեցին բոլոր մազերը... Անտոնիային փրկեց պենիցիլինը: Այդ ժամ 83–ամյա Երվանդ պապը որոշեց անձամբ զբաղվել թոռան ապաքինմամբ, քանի որ Անտոնիան շատ քմահաճ էր և, պապից բացի, ոչ ոքի չէր լսում: Գնացին դեպի Դոլոմիթները՝ դեպի Սուզին դի Մոսպիրոլո, որտեղ Fratelli Doglioni հյուրանոցում պապ ու թոռ մնացին մեկ ամիս: Այսպես է հիշում Անտոնիան այդ օրերը.

Առաջին իսկ օրից ինձ դաժան սննդակարգ նշանակեց. պետք է ապաքինվեի. վիճակս շատ վատ էր: Ստիպում էր նաև օրը տասներկու ժամ քնել: Բնականաբար, սկզբում փորձում էի խաբել նրան, բայց ինձ հսկում էր, մինչև որ կարողացավ լիովին սանձել: Իսկ ես սկսեցի նրա հանդեպ անսահման հիացմունքի զգացում տածել: Վերջապես, երբ ութ օր անց սկսեցի քնել 12 ժամ, ուտել և ընթերցել այն,

⁹⁸ A.Arslan. «Come e' nato questo romanzo». In R. Bolletti. op. cit., 2013, p. 24.

⁹⁹ Ա.Արսլան, 2007, էջ 155:

ինչ պապս էր հարմար գտնում, ինձ ասաց. «Քանի որ ենթարկվեցիր, արժանի ես պարզևատրման: Քեզ կպատմեն մորս՝ գեղեցիկ Իսկուհու պատմությունը, որը 19 տարեկանում մահացավ»¹⁰⁰:

Այս ընթացքում է, որ «աղջնակը», ինչպես վեպերում ինքն իրեն անվանում է Անտոնիան, առաջին անգամ հաղորդակից է դառնում կորուսյալ հայրենիքին:

Օգոստոսի խաղողը... Երվանդը հասուն տարիքում, երբ իր անսասան հեղինակությամբ հետևում էր աղջնակի ապաքինմանը, հիշում էր, որ դեռևս փոքր հասակից օգնում էր այգեկութի ժամանակ գարմիկներ Հովհաննեսին և Վահանին: Հիշում էր՝ ինչպես բլրալանջի այգուց երկուսով ուսերին դրած տուն էին բերում փայտից կախած հսկայական ողկույզներ: Սառն էր ու չոր այս հեղինակավոր պապիկը (բնական հեղինակություն, որ հմայում է ամենափոքրերին): Բայց աղջնակը կհիշեր Fratelli Doglioni ալպյան հյուրանոցի մագլցող թիթեռնածաղկի ստվար հովանու տակ այդ հեգանքի քողարկված հուզմունքը:

Սա իսկական խաղող չէ, գունատ է, համ չունի. իմ հեռավոր երկրում աճում էին հսկայական ողկույզներ, իսկ կաթն ու մեղրը հայրենի ափունքի համն ունեին: [...] Ոչ մի համ չի հասնի նրա համին, հորաքույր Մարիամի հետ մածուն էինք պատրաստում, և ես այնքան բարի էի, որ ինձ թույլ էր տալիս իրեն օգնել փախլավա թխելու:

Այսպես, աղջնակն առաջին անգամ համի քաղցր զգացումի, հեռավոր բուրի երագի միջոցով ոտք դրեց Կորուսյալ երկիր: Ճիշտ է, ճանաչում էր լոխումը, փախլավան, քուրաբիեն, շաքար-լոխումը, վիեննական կիֆֆելը, Արևելքի ու Արևմուտքի բոլոր քաղցրավենիքները, որ հորաքույր Անրիեթը բերում էր ամեն երեկո՝ կտրել-անցնելով ճանապարհը հավատարիմ Մարիամի հետ: Բայց պապիկը ուրիշ բան էլ ավելացրեց՝ համի ու հոտի կենդանի արձագանքը, իրական սնունդը, կարոտի սնունդը (մի երկրի հանդեպ, որն այլևս գոյություն չունեի, աքսորյալների շարքերի հանդեպ, թունոտ արևի տակ մեռնող մի ընտանիքի հանդեպ, Փոքր Ասիայի փոշոտ ճանապարհների ու արահետների երկայնքով սփռված անհայտ գերեզմանների հանդեպ... ինչպես նաև տառապանքի և ուրախության, վշտի ու մխիթարության կենդանի ու բուրումնավետ այն ամենի հանդեպ, որ անհետացավ նրանց հետ միասին)¹⁰¹:

¹⁰⁰ A. Arslan. «Come e' nato questo romanzo». In R. Bolletti. op. cit., 2013, p. 24.

¹⁰¹ Ա. Արսլան, 2007, էջ 48:

Հեղինակի մոտ դանդաղ հասունանում է վկայությունները վեպի տեսքով շարադրելու գաղափարը, վկայություններ, որոնք սկզբում լսեց պապից, ապա ծնողներից, ազգականներից: Լսել էր նաև պապիկի Սմբատ եղբոր դուստրերի՝ Արուսյակ և Նվարդ հորաքույրների պատմությունը, որոնց գաղթի ճանապարհին, տակավին դեռահաս, բռնաբարել էին, և որոնք իրենց կյանքը հետագայում շարունակեցին Միացյալ Նահանգներում. «Ջավակներ չունեցան: Նվարդը մեծ տարիքում ամուսնացավ ֆրեզնոյաբնակ մի գյուղատնտեսի հետ, իսկ Արուսյակը շարունակեց ապրել միայնակ. հողիվուդյան աստղերի համար զգեստներ էր կարում», գրում է Անտոնիա Արսլանը¹⁰²:

Եկավ հուշերը թղթին հանձնելու պահը.

Սկսեցի գրել օրը երեք էջ, քանի որ պատմությունն արդեն իմ ներսում էր. այն հասունացել էր ընտանեկան բանավոր վկայությունների, ինչպես նաև այլոց պատմությունների շնորհիվ: Ընթերցել էի նաև հրատարակված հուշագրություններ: Բայց գիրքը պետք է ծնվեր ոչ իբրև վկայություն. չէ՞ որ ես երրորդ սերունդն էի, այլ իբրև վեպ՝ վերապրող հայերի ու նրանց ողբերգության մասին: Մարդիկ սիրում են գեղարվեստական երկեր, նախ ընթերցում են, իսկ հետո փնտրում իսկական պատմությունը¹⁰³:

«Արտույտների ազարակը» եռագրության սկզբում նախքան ողբերգությանն անդրադառնալը հեղինակը նկարագրում է Երվանդ պապին, որը տասներեք տարեկանում հեռացել էր հայրական տնից՝ ուսանելու Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում:

Նրանց մայրը՝ Իսկուհին՝ արքայադստրիկը, վախճանվել էր նրան լույս աշխարհի բերելիս: Ապա պապիկի հայրը ամուսնացել էր «չար խորթ մոր հետ», որը նրան բազում զավակներ էր պարգևել: Երվանդ պապը նրան տասնել չէր կարող, ուստի տասներեք տարեկանում խնդրել էր հորը իրենց Փոքրիկ Քաղաքից գնալ Վենետիկ՝ Մուրատ-Ռափայելյան վարժարան՝ ուսումը շարունակելու, և հայրը

¹⁰² A. Arslan. «Come e' nato questo romanzo». In R. Bolletti. op. cit., 2013, p. 31.

¹⁰³ Նույն տեղում, էջ 35–36:

չէր մերժել¹⁰⁴: [...] Ծեր Համբարձումը չէր կարողանում մերժել զավակների ընտրությունը, որը միգուցե համազոր էր փրկության¹⁰⁵: Անբացատրելիորեն հպարտ ու մրցունակ նկարագրի տեր Երվանդն ականա հարգանք էր տաճում հոր նկատմամբ, որը՝ որպես նահապետ, տեղի էր տվել իր տասներեքամյա առաջնեկի ըմբոստ ցանկությանն ու թողել էր, որ հայրենիքից միայնակ հեռանար՝ հոգ տանելով նրան միայն մինչև տասնութ տարին լրանալը: Բայց նրանք այդպես էլ այլևս չտեսնվեցին¹⁰⁶:

Այդ ժամանակից ի վեր Երվանդն այլևս տուն չէր վերադարձել: Մուրատ–Ռափայելյան վարժարանում ուսումն ավարտելուց հետո սովորել էր Պաղովայի համալսարանում, ապա վերապատրաստվել Փարիզում, դարձել քիթ–կոկորդ–ականջի հանրահայտ բժիշկ ողջ Եվրոպայով մեկ: Ապրում էր Վենետիկից քիչ հեռու գտնվող Պաղովա քաղաքում իր ընտանիքի հետ: Կինը իտալացի կոմսուհի էր, երկու որդիներին կնքել էր յուրաքանչյուրին չորս հայահունչ անուններով. մեծին՝ Եղվարդ, Երվանդ, Արմենակ, Վարդան, իսկ փոքրին՝ Միքայել [Քայել], Անտոն, Արամ, Մարիամ: Իտալիան Երվանդի համար դարձել էր այն երկիրը, որ իրեն հյուրընկալել էր, հաջողություն ու հարգանք տվել:

Սակայն տուրք տալով արևելյան անվստահությանը՝ Երվանդն իրեն զգում էր իտալահպատակ և ոչ օսմանահպատակ: Իսկ հպատակը անձեռնմխելի իրավունքներ չուներ, ուստի ավելի լավ էր խուսափել քաղաքականությունից: Ազատ էր միայն իր նեղ շրջանակում, որն անտեսանելի էր, բայց շոշափելի. այստեղ նա գործի էր դնում իր հեղինակությունը, և վաճ նրան, ով այն խախտեր: Այդպես էր Երվանդի համար բժշկությունը, որտեղ բոլորն էին նրան հպատակ¹⁰⁷:

Այժմ՝ գրեթե քառասուն տարի անց, պատրաստվում է վերադառնալ տուն՝ դեպի Արտույտների Ազարակը, գրկախառնվելու եղբոր՝ Սմբատի, և մյուս հարազատների հետ:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 27:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 36:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 44–45:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 51:

Սմբատ հորեղբայրը եղբորից ավելի մեղմ էր, հարմարվող ու հանդարտ: Նա սիրում էր իր հանգիստ քաղաքը, իր անհոգ, թմբիրի մեջ թաղված գավառը, ընկերների հետ սուրճի գավաթի շուրջ շաղակրատելը, նարդու բուռն խաղերն ու որսի գնալը: Սովորել էր Կոստանդնուպոլսում՝ մի դեղագործի մոտ, սակայն տուն դառնալու մտադրությամբ: Համալսարանում լրագրեր էր ընթերցել, անդամագրվել մի կուսակցության, նույնպես երագել էր իր Հնամենի Հայրենիքի վերածնունդը, մի քիչ խանդավառվել, ապա հուսալքվել: Խորթ մոր հետ փոխգիջման էր գնացել: Զվարճանում էր՝ փոքրիկ եղբայրներին փաղաքշելով, քույրերի հյուսքերից քաշելով. մտադիր էր ամուսնանալ: [...] Հաճախ խոսում էին Փարիզի կամ Իտալիայի մասին, բարեկամ երկիր, որտեղ իր եղբայր Երվանդը հաջողության էր հասնում: Սակայն Սմբատը ցանկություն չունեւր մեկնելու, թեպետ խոստացել էր եղբորը այցելության գնալ. ամոթխած էր ու արևելցի: Նա ուրախ կլիներ, եթե եղբայրը վերադառնար, իր հետ բերեր ֆրանկ կնոջը, Երվարդ և Քայել որդիներին՝ իր մեծ ընտանիքի հետ ծանոթացնելու: Արժանապատիվ կերպով գնացել էր, արժանապատիվ կերպով էլ կգար ու կընդունվեր: Բայց Սմբատն իր պարզ սրտի խորքում վախենում էր, որ դա երբեք տեղի չունենար: Երվանդն ընդմիշտ հեռացել էր, և նրա որդիները, չնայած իրենց անուններին, չգիտեին պապերի լեզուն և կրթվում էին գերմանական կամ իտալական դպրոցներում: Անատոլիան նրանց համար հեռավոր մի հեքիաթ էր:

«Միգուցե, մտածում էր Սմբատը, մի օր որդիներիցս մեկը կարողանա գնալ եղբորս մոտ, և միգուցե կամաց–կամաց բոլորս էլ տեղափոխվենք և այլևս չվախենանք»: Բայց իրականում չէր ուզում: Ճիշտ է, շատերն էին մեկնում: Ամենավտանգավոր գոտիներից, առավել համարձակ երիտասարդները, գիտունները, արկածախնդիրները, նրանք, ովքեր խեղդվում էին կայսրության մեջ *էրմենի միլիթերին*¹⁰⁸ հատկացված նեղ սահմանների ներսում, շարունակական հոսքով անդադար մեկնում էին: Դեպի Եվրոպա, դեպի երագած մշակույթը՝ դառնալու բժիշկ, ատամնաբույժ, ճարտարապետ, գրող, կամ դեպի Ամերիկա՝ լրիվ նորանալու և ամեն ինչ մոռանալու: Բոստոնում ապրում էր խորթ եղբայրը՝ Ռուբենը, և բավականաչափ գոհ էր: Բայց Սմբատն իր պարզ հոգում զգում էր նրա մենությունը և եղբորն ուղարկեց մի գեղեցիկ փայտյա նարդի՝ փորագրությունները վրան, շուրջբոլորը հայաստառ արձանագրություններ, ճիշտ իր ունեցածի նման: Ինչ իմանար,

¹⁰⁸ Միլլեթը օսմանյան իրավակարգի հատուկ մի հաստատություն էր, որ ուներ միանգամայն թե՛ ազգային–էթնիկական և թե՛ կրոնական հարանվանական հիմք: Այսպես, Կայսրությունը ձանաչում էր, բացի հույն օրթոդոքս և հրեա միլլեթներից, երեք հայկական միլլեթ՝ հայ առաքելական, հայ կաթողիկե և հայ բողոքական:

որ մի օր իր երկու զավակների համար այդ նարդին՝ որպես խորտակված նավի բեկոր կամ սրբազան մասունք, հանդիսավոր ծիսական լուսանկարի հետ մեկտեղ դառնալու էր հոր կենդանի հիշատակի միակ վկայությունը¹⁰⁹:

1914 թվականի հոկտեմբեր ամիսն է: Երվանդը վերջնակա-նապես որոշում է գարնանը այցելել եղբորը: Լուրը տարածվում է ծննդավայրում, որտեղ պատրաստվում են բնակարանամուտի տոնին, և բոլորը՝ ազգական թե բարեկամ, հրավիրված են մաս կազմելու: Ագարակը ամբողջովին վերանորոգված է: Աշխատանքը լիակատար դարձնելու համար նույնիսկ Վիեննայից կես-ագևոր դաշնամուր են պատվիրել:

Դրոյի առանձնատանը Երվանդը խնամքով ժողովել էր այն ամենը, ինչ հարկավոր էր ճանապարհի համար՝ քարտեզներ, հեռադիտակներ, արևային ակնոցներ, մեքենայի գույնին համապատասխան թեթև վերնազգեստներ, կրկնակոշիկներ, ամեն տեսակի լապտերներ, ճանապարհորդական ջրամաններ, փոքրիկ դեղատուն՝ արյան շիճուկով, ասեղներով, եռացուցիչներով ու գոտիչներով, մույկեր, սոնապաններ (երկու զույգ էլ պատրաստել էր տվել դամասկոսյան կերպասից, իսկական խենթություն, և խնամքով թաքցրել գաղտնագրով բժշկական ճամպրուկի խորքում՝ երկակի հիմքի տակ, որտեղ գետեղել էր ավստրիական թալերներ, Վիկտորյա թագուհու և Կայզերի ոսկեդրամներ ու որոշ գոհարեղեն)¹¹⁰: Ընտանիքին իր հանդիսավոր այցելության համար Երվանդը հետևել էր արևելյան բարեկրթության կանոններին. շոպյություն անելն անհրաժեշտ էր, իսկ չափն անցնելը՝ մահացու վիրավորանք: Ուստի լոնդոնյան մի հայտնի վաճառատանը պատվիրեց մեծ թվով ոսկյա և արծաթյա փոքրիկ առարկաներ՝ տղամարդկանց ու պատանիների համար՝ սիգարկտրիչներ, կրակայրիչներ, ծխախոտատուփեր, բեղկտրիչներ՝ կանաչ ու ոսկյա փոքրիկ երկրաչափական արծնապակիներով, կանանց համար՝ դիմափոշու արծնապակյա ու ոսկյա տուփեր, կռունկի կամ արագիլի տեսքով փոքրիկ մկրատներ, երեկոյան պայուսակներ ու արծաթաթելով հյուսկեն պայուսակներ՝ ամուր քարե ճարմանդներով (եղեգնաքար, սաթ, ոսկեգմրուխտ, մոխրաքար, փիրուզ), աղջնակների համար էլ՝ ոսկյա զարդասեղներ ու փոքրիկ մատանիներ՝ Remember կամ Souvenir կապույտ արծնապակյա մա-

¹⁰⁹ Ա. Արսյան, 2007, էջ 27–30:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 88–89:

կագրությամբ: Հուշանվերները պատվիրել էր ավելի շատ, քան ընտանիքի անդամներն էին, որոնց ցուցակը Սմբատին գրել էր տվել. ով գիտե՝ քանի հոգի կլինեին հոր կամ ընտանիքի բարեկամները, որ ձանաչել էին իրեն այն հեռավոր, լուսավոր տարիներին: Երվանդը սկսում էր մտածել մանկության մասին, և սա նրան թուլացնում էր ու շփոթեցնում: Բայց միաժամանակ, հիշողությունների ու խնդությունների ինչ ծաղկերույլ, ինչ վաղեմի հանդարտություն էր ետ գալիս ու լցնում այն ամեհի դատարկությունը, որ միայն այժմ էր հայտնաբերում¹¹¹: [...] 1915 թ. Երվանդը դարձավ հիսուն տարեկան: Բավարարված էր ու... միայնակ: Մի այցելությունից մյուսի, մի վիրահատությունից մյուսի միջև անորոշ, պատահական, հեղիեղուկ ու տարտամ հուշեր էին խոնվում նրա մտքում: «Արդեն Իտալիայի քաղաքացի եմ, Օսմանյան կայսրությունում այլևս ոչ ոք ինձ չի կարող դիպչել», մտածում էր նա¹¹²:

Այդ պահերին նրան համակում էր մի անսահման խաղաղություն, և ամեն ինչ նրան հնարավոր էր թվում, կարծում էր, որ կինը կհամաձայնե՞ր վերադառնալ այնտեղ իր հետ, երբ ծերանան, որ որդիները կտվորեին իր հնագույն լեզուն, որ գոյություն կունենար հայ ժողովուրդը... «Միգուցե, մտորում էր Երվանդը, հենց պատերազմը կլինի պատեհ առիթը: Հավանաբար կհաղթեն գերմանացիները, իսկ հայերը կորովի մարտնչում են թե՛ ձակատում և թե՛ խորհրդարանում՝ սատարելով կառավարությանը: Մերոնք երիտթուրքերի հետ հեղափոխություն են արել, իսկ էնվերն անձամբ շնորհակալություն է հայտնել պատրիարքին՝ հայերի անկեղծության համար... և, բացի դրանից, Թալեաթը Ջոհրապի հետ թավլի է խաղում...»¹¹³: Իր հերթին Սմբատը «Թեթևակիորեն թերթում էր կոստանդնուպոլսյան լուրերով ողողված լրագիրը և խանդավառվում, որ այնտեղ՝ վերևում, հայերին սկսում էին հարգել, մինչև իսկ երեսփոխաններ ընտրել, իսկ գրող, երեսփոխան Գրիգոր Ջոհրապը ամեն շաբաթ թավլի էր խաղում Ներքին գործոց հզորագույն նախարար Թալեաթ փաշայի հետ»¹¹⁴: [...] Պատկերացնում էք, Ջոհրապը գնում է Թալեաթի տուն, նրան ընդունում են ընտանիքի անդամի նման, միասին թեյ են խմում»: Սմբատն ու նրա նմանները բառացիորեն չէին կարող հասկանալ, որ կարելի է խաբել, ապա սպանել հյուրին, որի հետ տանդ մեջ թեյ են ըմպում¹¹⁵:

¹¹¹ Նույն տեղում, էջ 89:

¹¹² Նույն տեղում, էջ 53:

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 30:

¹¹⁵ Նույն տեղում:

Երվանդի ընտանիքը դեմ էր այդ ուղևորությանը: Կինն իր բոլոր ազգականների հետ գործի էր անցել՝ խոչընդոտելու համար այդ ճանապարհորդությունը: Ամուսինը չոր պատասխանել էր, որ կմեկնի միայնակ, զավակների հետ՝ առավել տառապանք պատճառելով կոմսուհուն:

Որդիները զգում էին, որ Իտալիան պատրաստվում էր պատերազմի մեջ ներքաշվել, և ցավով մասնակցում էին հոր աստիճանական վերադարձին դեպի մութ անցյալ, դեպի ակունքներ, որի համար փոքր-ինչ ամաչում էին. հայրը խոսում էր առանց քերականական հոդերի, որը միանգամից մատնում էր նրա օտարական լինելը նույնիսկ անփորձ ականջի կամ բարյացակամ ունկնդրի համար: Արդյո՞ք կկարողանա Երվանդը մեկնել նախքան Ավստրո-Հունգարիայի սահմանների փակվելը: «Բայց արդյո՞ք կհասցնի, իրենք իրենց հարց էին տալիս բարկացած որդիները, որովհետև նրանք էլ պատրաստություն տեսնելու իրենց բաժինն ունեին: Եվ հետո, ինչպե՞ս է ստիպողաբար տանելու մեր այնքան փխրուն, զգայուն մորն այդ վայրի երկիրը»: Երվանդը չէր լսում և չէր տեսնում: Շարունակ գրում էր Սմբատին, բայց կնոջը՝ Թերեզային, և զավակներին չէր ասում, որ ծրագրել էր այնտեղ տուն գնել: «Կանխավձարը կտամ, իսկ մնացած գումարը կփոխանցեմ Իտալիայից», մտածում էր նա¹¹⁶:

Սակայն 1915 թ. մայիսն էր, Իտալիան ներքաշվել էր պատերազմի մեջ, իսկ երիտթուրքերի կուսակցությունը հետապնդում էր այն մեծ Թուրքիայի գաղափարը, որտեղ փոքրամասնությունների համար տեղ չկար:

Ջելալը [...] խանդավառությամբ հարել էր «Միություն և Առաջընթաց» կուսակցության ծրագրին՝ Թուրքիան արդիականացնել, դարձնել ժամանակակից, վերացնել սուլթանին: Ժամանակակից դարձնելու գաղափարի մեջ լռելյայն ամփոփված էր Թուրքիան՝ թուրքերի բացարձակ ձմարտությունը: Վերացնել ստորին ազգերին, որոնք արևմտյան թշնամու հետ միշտ դավեր էին հյուսում և

¹¹⁶ Նույն տեղում, էջ 90:

նպաստում Օսմանյան կայսրության մասնատմանը: Դուրս, դուրս քշել հայերին, հույներին, ասորիներին, սիրիացիներին՝ ստահակ խաժամուժին: Ամեն երկիր՝ իր ժողովրդին, ինչպես եվրոպական ազատագրական պատերազմներում: Եթե Հունաստանը հույներին էր, ինչո՞ւ Թուրքիան չպետք է լիներ միայն թուրքերինը: Ջելալի գլուխը լի էր այս գաղափարներով, ու նրա մտքով անգամ չէր անցնում, որ հայերն ու մյուս ազգերը Անատոլիայի հողում ապրել էին հազարամյակներ շարունակ, որ այն մշակել էին ու բերրիացրել, որ դա էր իրենց հայրենիքը¹¹⁷...

Ազարակում թենիսի դաշտը գրեթե վերջնական տեսք էր ստացել, սակայն ինչ–որ մեկն այլ որոշում էր ընդունել, և այդ հողի վրա էին վիճակված ընկնելու Սմբատի և նրա արու զավակների անդամատված մարմինները: Երվանդի երազանքը հոգս է ցնդում: Հեռավոր անցյալում կմնան Սմբատ եղբոր, Շուշանիկի և ամբողջ ընտանիքի՝ Իտալիայից ժամանող Երվանդին և նրա որդիներին ընդունելու՝ ամիսներ ձգվող պատրաստությունները: Փոխարենը՝ միայն մահ ու սարսափ: Երվանդը չէր կարող երևակայել, որ մոր մահը և հոր ամուսնությունը «Մադամ» Նվարդի հետ իր փրկության պատճառը կհանդիսանային:

[...] Եվ ծերանալով կտառապեր մի ահավոր ներքին կարոտից, որի մասին չէր կարող ոչ ոքի հետ խոսել իր մեջ սանձված քաղցրահունչ մայրենի լեզվով, առանց սիրալիր գրույցի թռռների հետ, և որպես մահամերձ՝ հարուստ ու հանցավոր, որ վերապրել էր¹¹⁸:

Նա երբեք չի կարողանա վերադառնալ իր ծննդավայրը, այլևս չի տեսնի իր հայկական ընտանիքը, քանի որ երիտթուրքերը կկոտորեն համարյա բոլորին: Այդ պահից սկսած՝ հայրենիքը Երվանդի համար հավետ ծածկվում է թանձր մշուշով, իսկ որդիների մեծանալուն պես նա անգամ փոխում է նրանց ազգանունը:

Անտոնիա Արսլանը ներկայացնում է իր պապի վարքագծի հակասականությունը. սկզբում նա, չցանկանալով ժխտել իր ծագումը,

¹¹⁷ Նույն տեղում, էջ 81–82:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 76–77:

յուրաքանչյուր երեխային կնքել է չորսական հայահունչ անուններով, բայց ավելի ուշ հանել է ազգանունից *յան* վերջավորությունը.

Իր որդիների համար հին հայրենիքը ընդմիշտ արգելված կլիներ՝ փակված իր մշուշապատ հիշողության մեջ, որն անհնար էր ջնջել, ինչպես մի նկար, ինչպես մի անուն: Իսկ 1924 թվականին իտալական կառավարությանը խնդրեց պաշտոնականորեն վերացնել ազգանվան երեք տառերից բաղկացած այնքան շփոթեցուցիչ այն *յան*-ը, որը միանշանակ մատնում էր հայկական ծագումը: Կարճված անունը կարող էր նաև թուրքի պատկանել¹¹⁹:

Հայոց Յեղասպանության առանձնահատկություններից մեկը կանանց և տղամարդկանց բաժին հասած ճակատագրերի տարբերությունն էր: Անտոնիա Արսլանը ցույց է տալիս, որ Յեղասպանության հետևանքների հիմնական բեռն ընկնում է անպաշտպան կանանց ուսերին, քանի որ տղամարդիկ այլևս չկային, նրանց վերացրել էին ամենասկզբում:

Տղամարդիկ չէին վերադառնում: Պառավներից մեկն ասաց, որ նրանց տեսել էին Ադի պահեստի՝ տարիներ ի վեր դատարկ մնացած շինության դռան առջև շարք կանգնած, դիմացը՝ սվինները հրացանների փողերին ամրացված զինվորներ: [...] Սահմուկեցուցիչ սարսափ էր տիրում ամբողջ թաղում, բայց ոչ ոք չգիտեր ինչ անել: Առանց իրենց այրերի մնացած, ծերերի ու երեխաների տազնապի ծանրությունից կռացած կանայք պատրաստ էին հավատալու ցանկացած բարի լուրի՝ տեղի չտալով դառը ճշմարտությանը, որը մեխված էր նրանց ուղեղում: Ահա թե ինչու կառավարության ծրագիրն անարգել կատարվեց՝ առանց ըմբոստության հանդիպելու այս հլու-հնազանդ, անրջալից ժողովրդի կողմից: Ուշ երեկոյան հայտնվեցին հերթական պահակախմբերը՝ մունետիկի ընկերակցությամբ, որը հայտարարեց, որ հայ ընտանիքներն իրենց տրամադրության տակ ունեին երեսուներկու ժամ՝ քաղաքից հեռանալու իրենց բոլոր անդամներով անխտիր, ընդ որում՝ թողնելով իրենց ողջ ունեցվածքը:

— Կառավարությունը բոլորիդ տեղափոխում է՝ ձեզ ավելի լավ պաշտպանելու համար: Ձեր տները, խանութները կվստահվեն բանակին:

Իսկ տղամարդիկ: Ո՛ր են տղամարդիկ, — բղավեց տազնապած կանանց մի խումբ և իսկույն գոջաց մունետիկի սպառնալից ձայներանգից:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 155:

—Դե՛ն, դե՛ն, հանգի՛ստ, հանգի՛ստ, նրանք ձեզ կմիանան քաղաքից դուրս, որովհետև եթե միասին լինեք, դուք՝ խորամանկ հայերո՞ղ, կփորձեք մեզ խաբել, թաքցնել ձեր փողը՝ մեր բոլորի հորը՝ քայմաքամին վստահելու փոխարեն¹²⁰:

Բայց հայերը չէին վերադառնում: Արդեն ուշ գիշեր էր, և ոչ ոք չէր մտածում քնելու մասին: Երեխաներին, նրանց կամքին հակառակ, անկողին դրեցին, բայց նրանք, բացի ամենափոքրերից, անմիջապես վեր կացան նորից լուռ, առանց արցունքի, որպեսզի մնային մայրիկների, տատիկների կողքին, որոնց սարսափ, հուսահատություն էր համակել: [...] Ազնիվը ձեռքն առավ տան դեկը: Նրանք այլևս ոչ ոքի չէին սպասում, նրանց այրերն այլևս չկային¹²¹:

Կանայք պետք է սկսեին իրենց ողիսականը, հարկադրական քայլքը, քաղցն ու ծարավը, ենթարկվեին ստորացումների ու վայրագությունների: Սակայն հայ կինը միշտ էլ ուժեղ է եղել: Հայ ժողովրդի պատմության մեջ հասարակական ու հայրենասիրական ասպարեզում կնոջ գործուն դերի օրինակներ շատ կան, չնայած այն բանին, որ ավանդաբար ընտանիքի ապրուստն ապահովել է տղամարդը, իսկ կինը զբաղվել է տան գործերով¹²²:

Դեպի ոչնչություն տանող իրենց քայլարշավի ժամանակ կանայք ու աղջիկները կկառչեին գոյությանը՝ վառ պահելով հույսի կրակը: Բայց Ազնիվը, Վերոնը, ուսուցչի դուստր Հայկանուշը, փոստատան ծառայող Վարդուհին և երկաթգծում աշխատողը համոզված էին, որ կկարողանային, և սրտի խորքում զգում էին հպարտության փոքր-ինչ զրգռիչ մղում: Նրանք, որ միշտ այնքան պաշտպանված էին եղել, ի վիճակի կլինեին ցույց տալու, որ կանայք ևս ուղեղ ունեն, և որ իրենց կիսջողվեր վերահսկել այդ արտակարգ իրավիճակը: Եվ հավասարության գաղափար

¹²⁰ Նույն տեղում, էջ 131–132:

¹²¹ Նույն տեղում, էջ 134:

¹²² Հին հայկական օրենսգրքերում ու իրավական կանոնադրություններում վկայություն կա այն մասին, որ հին ժամանակներում կինը համարվել է հասարակության լիիրավ անդամ՝ ունենալով ժառանգության, սեփականության և այլ իրավունքներ (օր.՝ Շահապիվանի օրենսգիրքը, Ք.ա. 443 թ.): Հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշեն, վավերագրելով հայերի ապստամբությունը Սասանյան Պարսկաստանի դեմ, գրում է նաև հայ կանանց արժանիքների մասին: Շատ հեղինակներ զուգահեռներ են անցկացնում մ. թ. 451 թ. Պարսկական կայսրության դեմ պայքար մղած հայերի և Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայ կանանց միջև (Rowe, 2003, 34–35):

րով խանդավառված՝ հանդիսավոր խոստացան, որ ճանապարհորդության ժամանակ բոլորն, իրոք, հավասար կլինենին, կենսամիջոցները՝ համընդհանուր¹²³:

Անշուշտ, կանայք ավելի խոցելի են, բայց Հայոց Ցեղասպանությանը նախորդած ջարդերը, որոնց ենթարկվել էին իրենց հայրենակիցները գրեթե քսան տարի առաջ, յուրատեսակ դաս էին նրանց համար՝ դիմակայելու սպառնացող բռնագաղթին ու եղեռնին: Ականատեսների վկայություններում ու հիշողություններում երևում է, որ տղամարդկանց առաջին խմբերին տանելուց հետո կանայք սկսում են գիտակցել, թե ինչ աղետաբեր ճակատագիր է սպասում հայերին¹²⁴: Ստորև նշված հատվածում Անտոնիա Արսլանը նկարագրում է վեպի հերոսուհու գործողությունները՝ կանխելու դեռևս չսկսված, բայց սպառնացող աղետը:

Շուշանիկն ուղեկցեց Իսմենին դեպի վերնահարկի իր ընդարձակ ամուսնական սենյակը: Այնտեղ բացեց ֆրանսիական ծակոտկեն արկղը, որտեղ պահում էր տասնութ տարի առաջ կրած հարսանեկան ձեռնոցը, որը շրջելով ձկույթի մասից դուրս հանեց Ֆաթիմայի ձեռքի տեսքով, մանր փիրուզով զարդանախշված փոքրիկ մի բանալի: Մորից՝ գունատ աղջնակ Հայկանուշից, որին երբեք չէր ձանաչել, ժառանգած մեծ հայելիով հսկա պահարանի ներսից, ներքին խոովքը զսպելով՝ Շուշանիկը հանեց մետաղյա մի տափակ արկղ, որն ասես զանձապահարան լիներ, որտեղ պահում էր ոսկու և գոհարեղենի իր անձնական հարստությունը: Լուռ, հաստատակամ, հաշվի չառնելով, որ առաջադեմ ամուսինն ու նրա ընկերները ծիծաղում էին վրան, Շուշանիկը չցանկացավ արժեթղթեր կամ դրամատնային հաշիվ ունենայ, այլ իր անձնական ամեն եկամուտ, ամեն նվեր, ամեն փոքրիկ վատակ վերածեց ոսկեղրամների և անգին քարերի և այժմ Իսմենի հետ մտածկոտ նայում էր իր փոքրիկ գանձին: Երկուսով խաչակնքեցին, ապա Շուշանիկը մեկ այլ պահոցից հանեց հասարակ կտավից հաստ տոպրակներ և գանձը երկու մասի բաժանեց: Իսմենին վստահեց առավել խոշոր տոպրակը:

¹²³ Նույն տեղում, էջ 160:

¹²⁴ S. Haroutyunian. "Women of the Armenian Genocide: From Eyewitness Accounts To Literary Echoes". In Women And Genocide: An Anthology. JoAnn DiGeorgio – Lutz, Donna Gosbee, (eds.), Women's Press, Canada, 2015.

«Իսկ հիմա գնա՛, Իսմենն, ասաց նա: Նայիր, լսիր, գննիր այն ամենն, ինչ կարող ես: Եթե մեզ հետ նման կերպ են վարվում, ապա հետո թերևս հարձակվեն նաև հույների վրա, բայց դու Իսմենեն ես, և ոչ ոք չի համարձակվի վատություն անել ողբասացին: Եթե առիթը ներկայանա, նախ և առաջ մտածիր երեխաներիս մասին: Ես լավ եմ ապրել»¹²⁵:

Կանայք ջանում էին միավորել ուժերը, հասկանալ, թե ինչ էր կատարվում, և գուցե կանխել անհայտը, փրկել այն ամենը, ինչ հնարավոր էր փրկել: Նրանք շատ արագ հասկացան, որ մեկընդմիջտ մենակ էին մնացել:

Կանանց արագաշարժ ձեռքերը կարում էին գաղտնի գրպաններ, խորհրդավոր տոպրակներ, որտեղ տեղ էին գտնում փայլուն քարերն ու շողշողուն ոսկեդրամները: Այլ ձեռքեր շաղախում էին, ընտրում, հավաքում ուտելիք ու հաց, կլորիկ խնձորներ, տանձի չիր, թուզ ու պաքսիմատներ: Բայց այս պատրաստության մեջ ոչ մի ուրախալի բան չկար, և երեխաներին չկարողացան խաբել. նրանք զգում էին սոսկում, սպառնալիք, մահ¹²⁶:

Գաղթի ժամանակ կանայք վճռական դեր են խաղացել՝ ոչ միայն անձնագրոհություն ցուցաբերելով հանուն իրենց երեխաների փրկության, այլև իրենց հայրենի հողի հիշողությունները պահպանելու հաստատակամությամբ: Նրանք ջանացել են փրկել այն, ինչ հնարավոր էր՝ պատմություններ, առարկաներ, լուսանկարներ:

Իսմենեն աղջիկներին տվել էր հագուստների տակ թաքցնելու ուտելիքի մի քանի տոպրակ, երկու լիքը ջրաման, մի քիչ դրամ ու ընտանեկան արժեքավոր լուսանկարների մի փաթեթ՝ Շուշանիկի շափյուղա աչքերով զարդատուփի հետ¹²⁷:

Կանանց հաստատամտության, զոհաբերության, ինչպես նաև այն մարդկանց շնորհիվ, ովքեր մերժում են դառնալ բռնության մեղսակիցը, մի շարք արկածախնդրություններից հետո Սմբատի

¹²⁵ Ա. Արսլան 2007, էջ 103:

¹²⁶ Նույն տեղում, էջ 132:

¹²⁷ Նույն տեղում, էջ 192:

երեք աղջիկներին ու աղջկա շորեր հագած Նուբարին կհաջողվի փրկվել և հասնել Իտալիա՝ Երվանդ հորեղբոր մոտ: Եվ հենց վերջինս էլ կերաշխսավորի նրանց ապագան ու կպահպանի մութ հիշողությունները:

Ընտանիք, հայրենիք կորցրած վերապրյալները ստիպված էին իրենց կյանքը նորից սկսել բացարձակապես օտար վայրերում՝ ծնունդ տալով հետցեղասպանական Սփյուռքին: Ստորև բերված հատվածում Ա. Արսլանը ներկայացնում է Հայոց Ցեղասպանությունից հետո առաջացած Հայկական Սփյուռքի պատկերը:

Անրիեթ հորաքույրը 1915 թվականի Ցեղասպանության վերապրողներից էր: Սփյուռքի արարած լինելով՝ այլևս մայրենի լեզու չունեիր: Շատ լեզուների էր տիրապետում՝ ներառյալ իր մայրենին՝ հայերենը, սակայն խոսում էր քարացած, վերամբարձ արտահայտություններով, օտարի պես: Անում էր արտառոց սխալներ և երբեք չէր ցանկանում պատմել իր ողջ մնալու պատմությունը: Մոռացել էր նույնիսկ իր տարիքը (երբ Իտալիա էին հասել, այնքան նվազ ու հյուծված տեսք էր ունեցել, որ իր տարիքից առնվազն երկու-երեք տարի փոքր էին գրանցել): Բայց ամեն երեկո մեր տուն ընթրիքի գալիս հետը բերում էր սկուտեղներով լի չոր թխվածք՝ ըստ ավստրիական նորույթի, խոշոր ամաններով տնական մածուն և փախլավա: Նրա ներկայությունը լցնում էր տունը տարտամ հիշողություններով: [...] Հորաքույրս միշտ կրկնում էր. «Երբ չարություն անեք և ինձ հոգնեցնեք, կգնամ Բելյուրթ՝ Արուսյակի մոտ, Հալեպ՝ Զարեհ հորեղբոր մոտ, Բոստոն՝ Ֆիլիպի և Միլդրիթի, Ֆրեզնո՝ քրոջս՝ Նվարդի, կամ Նյու Յորք՝ Անիի, կամ էլ Կոպակաբանա՝ զարմիկիս՝ Միշելի մոտ: Բայց նրա մոտ՝ ամենավերջում, քանի որ ասորու հետ է ամուսնացել»¹²⁸:

Եթե Մեծ Եղեռնի մասին գաղափար չունեցող օտարազգի ընթերցողը գնի վեպը որպես *բեսթսելլեր* և ընթերցի վերոհիշյալ հատվածը, միանգամայն բնական է, որ ինքն իրեն հարց տա, թե ինչպես կարող է մի մարդը՝ Անտոնիայի հորաքույրը, աշխարհով մեկ սփռված այդքան ազգականներ ունենալ: Պատասխանը կստանա վեպն ընթերցելուց հետո:

¹²⁸ Նույն տեղում, էջ 18–19:

Ա. Արսլանի վեպերում ականատես ենք լինում ընտանեկան հազարավոր ողբերգություններից մեկին: Տեսնում ենք նաև, թե ինչպես է գրական ժանրը դառնում հզոր միջոց՝ հրավիրելու օտարազգի ընթերցողի ուշադրությունը պատմական եղելության՝ այս պարագայում Հայոց Ցեղասպանության վրա: Վեպերում Արսլանը վերականգնում է ընտանիքի պատմությունը՝ միավորելով պատմական հետազոտությունը և երևակայությունը, «հյուսելով ճշմարտության և ճշմարտանմանի ուստայնը»¹²⁹:

Երբ Հայոց Ցեղասպանության գրականություն էի դասավանդում Կալիֆոռնիայի պետական համալսարանում (Ֆրեզնո), ուսանողներին առաջադրանք տվեցի հավաքական հիշողության ու վկայությունների վերաբերյալ՝ հիմնվելով Բ. Բրոդսկու այն մտքի վրա, որ «Մշակույթի առանցքային կողմնորոշումը դեպի ապագան ձեռք է բերվում միայն անցյալը ճանաչելով»¹³⁰: Ուսանողներից յուրաքանչյուրը պետք է մի փոքրիկ պատմություն գրեր այն մասին, թե ինչպես էին փրկվել իր նախնիները: Նրանց մեծ մասն ինձ ասաց. «Ես որոշ բաներ գիտեմ տատ ու պապիս ծնողների մասին, բայց ոչ մանրամասն, ինչ անեմ»: Ես սպասում էի այդ հարցին, ուստի նրանց խորհուրդ տվեցի բացը լրացնել երևակայության օգնությամբ և օգտվելով առիթից՝ հարցուփորձ անել ծնողներին, հարազատներին: Բրոդսկու վկայությամբ՝ «Թե՛ հոգեվերլուծության և թե՛ պատմության տեսանկյունից լիարժեքության երազանք փայփայել նշանակում է սկսել բացթողումներից»¹³¹: Հանձնարարությունը կատարելու համար նրանցից մի քանիսը կապ էին հաստատել այլ երկրներում ապրող ազգականների հետ, որպեսզի հետաքրքրվեին իրենց նախնիների մասին: Արդյունքում ունկնդիր եղանք ապշեցուցիչ պատմությունների¹³²:

¹²⁹ Նույն տեղում, էջ 256:

¹³⁰ B. Brodzki, cit., 2007, p. 113.

¹³¹ Նույն տեղում:

¹³² Այդ պատմությունների մի մասն արդեն հրատարակվել է Ֆրեզնոյում լույս տեսնող «Հայ

Մեկ այլ առաջադրանքի ժամանակ, որի հիմքում ընկած էր Սալման Ռաշդիի «թարգմանված մարդու»¹³³ գաղափարը, ուսանողները գրատախտակին նախ գրեցին իրենց նախնիների ծննդավայրերի՝ քաղաքների ու գյուղերի անվանումները: Հետո ավելացրին այն վայրերի անվանումները, որտեղով նրանք անցել էին ԱՄՆ հասնելու երկարատև ճանապարհին՝ ներառելով նաև սովորած լեզուները: Գրատախտակը պատվեց անձնանունների, տեղանունների, ժամանակների ու լեզուների միահյուսված գործվածքով: Հիշողությունը չափազանց թարմ էր թվում և նոր արժեք էր ստացել: Պարզվեց, որ դասընթացի մաս կազմող ուսանողների նախնիներն, ընդհանուր առմամբ, խոսել են տասնվեց լեզվով, այդ թվում՝ հայերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, թուրքերեն, իսպաներեն, *վայ, փեյե, ֆուլա* լեզուներով¹³⁴, ռուսերեն, գերմաներեն, ռումիներեն, բուլղարերեն, լատիներեն, հունարեն, քրդերեն: Այսպիսի առաջադրանքը օգնեց ուսանողներին պատկերացնելու նախնիների անցած աշխարհագրական ուղին, ինչպես նաև գիտակցելու իրենց անջնջելի կապը նախնիների հետ՝ որպես նրանց հիշողությունների կրողն ու շարունակողը:

Նմանապես, Անտոնիա Արսլանը, ստանձնելով իր ընտանիքի պատմությունը թղթին հանձնելու առաքելությունը, շարունակում է իր նախնիների ճամփորդությունը: Բազմաթիվ հրապարակային դասախոսություններից մեկի ժամանակ նա խոստովանեց. «Իմ անցյալն ինձ անհանգստացնում էր տարիներ շարունակ, ուստի մի առավոտ ես որոշեցի գրել՝ *Zio Sempad e' solo una leggenda, per noi: ma una leggenda su cui abbiamo tutti pianto*»¹³⁵: Սա վեպի առաջին նա-

շարժում» ամսագրում: Տե՛ս «Family History Project Excerpts», 2013:

¹³³ S. Rushdie. *Imaginary Homelands*. Granta Books, London, 1991, p. 17.

¹³⁴ Vai, Pele, Fula աֆրիկյան լեզուներ: Դասընթացին մասնակցող ուսանողուհիներից մեկը Լիբերիայից էր: Դասընթացից հետո նա մի հոդված գրեց իր տպավորությունների մասին, որը կարելի է ընթերցել ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականի հետևյալ կայքէջում. <http://en.hayernaysor.am/2013/06/page/4/>.

¹³⁵ Իտ.՝ Սմբատ հորեղբայր մեզ համար մի առասպել է: Մի առասպել, որի վրա բոլորս ենք արցունք թափել (Ա. Արսլան, 2007, էջ 27):

խաղասությունն է, և մի առիթով Անտոնիան ինձ ասաց, որ վեպի շատ հատվածներ են խմբագրվել, բայց այդ հատվածը մնացել է անփոփոխ:

Անտոնիա Արսլանն ազգականների միջոցով հաղորդակից է եղել ժամանակի և տարածության մեջ ընդհատված կամ անհետացած ընտանեկան պատմությունների: «Սկսեցի նաև արձագանքներ, ձայներ լսել, որոնք ինձ կանչում էին Անատոլիայի անապատից»,— գրում է նա¹³⁶: Առեղծվածային շփում է ունեցել նաև ընտանիքի այն անդամների հետ, որոնց երբեք չի ճանաչել, բայց նրանք «խոսել» են իր հետ, ինչպես նշում է իր երախտագիտության խոսքում.

Երախտապարտ եմ շատերին, սակայն առաջինը շնորհակալություն կհայտնեմ նրանց, ովքեր ուղղակի թե անուղղակի հաղորդակցվեցին ինձ հետ՝ Սմբատին ու Շուշանիկին, Իսմենեին ու Իսակին, մուրացկան Նազիմին ու Երվանդին՝ իր պիրանդելյան խնամված մորուքով: Ապա Ազնիվ ու Վերոն հորաքույրներին, որոնց այդպես էլ չեմ ճանաչել, ճստիկ-պստիկ Անրիեթին, որն ինձ շփացնում էր, առասպելական հորեղբայրներ Զարեհին ու Ռուբենին¹³⁷:

Անցյալի բացերը լրացնելու ջանքերում Արսլանի համար վերապրյալների վկայությունների, հուշագրությունների, փաստաթղթերի և այլ նյութերի կողքին մեծ դեր են խաղացել նաև լուսանկարները, որոնց հետ հեղինակը հաճախ երկխոսում է իր վեպերում՝ ձգտելով կամրջել իր ներկան ընտանիքի անցյալի հետ.

Հայր իմ, այժմ դու ինձ նայում ես 1921 թվականի մի լուսանկարից. շատ լուրջ, չնայած քերանիդ անկյուններում թրթռում է խինդը, և հպարտ, տասնյոթ տարեկանում դպրոցի ավարտական գերազանցության վկայական ստացած, գեղեցիկ փողկապ կապած մի պատանի, որի բարձր ճերմակ օձիքի վրա ոսկյա զարդասեղ է ամրացրած, մի ձեռքդ՝ հենած լուսանկարչի աթոռի թիկնակին, մյուսը՝ ազատ կողքիդ: Ա՛խ հայրս, քո ձեռքերը: Քո փոքրիկ, կլորիկ, թմբիկ ձեռքերը՝ քառակուսի եղունգներով ու փոքր-ինչ ծուռումուռ մատներով, որ ես ժառանգել եմ:

¹³⁶ Նույն տեղում, էջ 32:

¹³⁷ Նույն տեղում, էջ 252:

Ինչպե՞ս էիր խոսում քո տանը ապաստանած աքսորյալ, Անատոլիայից փախած զարմիկների հետ: Ինչ խոր, անբուժելի երկյուղով քեզ պաշարեցին նրանք, ինչպե՞ս կարողացան հենց միայն իրենց ներկայությամբ այդ թշվառ աղջիկները սասանել ապահով ծնված ու մեծացած, լավ առողջությամբ խոսող արևմուտքցի երիտասարդի անվտանգությունը: «Ինչ գործ ունեմ այս ձախորդների հետ», ինքդ քեզ հարցրած կլինես բարկությամբ ու խղճահարությամբ: Բայց նրանք այնտեղ էին, և նրանք չէին պատրաստվում գնալ՝ լցնելով Պաղովայի այդ գեղեցիկ տունը դժբախտության դառը շնչով: Դժվարամարս ու վայրենի աղջիկներ էին այս զարմուհիները, միշտ սոված-ծարավ, այնքան տարբեր նրբագեղ իտալուհիներից, Թերեզա մորդ ազնվական ընկերների դուստրերից: Ինչպե՞ս թաքցնել նրանց, ինչպե՞ս ներկայացնել: Մինչ այդ օր օրի քո և եղբորդ մեջ խորանում էր վաղեմի մեղքի այդ անբուժելի ցավը, որ ոչ մի դիմակ այլևս ի գորու չէր թաքցնելու արյան, հոր և անվան դրոշմը)¹³⁸:

Այսպիսով՝ լուսանկարը դառնում է մի բարդ ինքնադիմանկար, որը բացահայտում է հեղինակի եսը թե՛ իբրև ամբողջություն և թե՛ իբրև մասնատված իրականություն: Նույն ձևով, վեպերում տեղ գտած խմբակային լուսանկարների նկարագրություններով Անտոնիա Արսլանը փորձում է վերագտնել կապն աշխարհով մեկ սփռված իր հայ ազգականների հետ:

[...] Արուսյակ, Անրիեթ, Նուբար՝ երկու աղջնակներ ու մի տղա՝ աղջկա շորերով, այն բոլոր բախտավոր վերապրյալները, որ Հալեպից ճողոպրած՝ պիտի գային Արևմուտք... Այս երեխաներն այժմ ինձ են նայում մեկ տարի անց՝ 1916 թվականին, Հալեպում արված մի լուսանկարից, Իտալիա գալուց անմիջապես առաջ, իրենց մանկական տխուր աչքերով, որոնք կարծես խորհրդավոր գաղտնիք ունեն, խամրած են ու սառած մի շարք անպատասխան «ինչու»-ներից և սակայն երախտապարտ են քմահաճ բախտին, որը նրանց ողջ-առողջ տեղ էր հասցրել: Երեխաների հագին կա որբուկի կոկիկ հագուկապ: Բայց կարծես դրանք համագգեստներից կարված լաթեր լինեն, որոնք հիշեցնում են կալանավորների գծավոր շորերը: Ճակատի վրա կամարներ կապած թավ հոնքերով մուգ, արևելյան աչքեր, որոնք անարտահայտիչ հայացքով չորս անգամ վերարտադրում են վախը ապագայի, որ լինելու է անողորմ և մի գաղտնի հանցանքի թաքուն կորիզը)¹³⁹:

¹³⁸ Ա. Արսլան, 2012, էջ 61:

¹³⁹ Ա. Արսլան, 2007, էջ 33:

Լուսանկարներում պատկերված մարդկանց գրքի հերոսներ դարձնելով՝ տեսողական պատառիկները «դառնում են» ընտանեկան պատմության մի մասը և օգտագործվում հեղինակի կողմից՝ վերականգնելու իր կյանքի պատումը:

Բայց հենց այս կասկածամիտ, եվրոպացի Զարեհը կիրկի ընտանեկան ժառանգությունը՝ նկարներն ու եղբոր զավակներին. դրանք չորս հյուծված մարմնիկներ էին, մահամերձ թռչնակներ, ամբողջովին աչք դարձած, իրար միահյուսված փոքրիկ գանգեր, և ընտանեկան նկարների թանկագին փաթեթը՝ մի թավշյա կտորի մեջ կարված Սուրբ Գրիգոր Նարեկացու *Մատյանի* հետ, որը ձեռքից ձեռք էր անցել՝ մահացողներից փոխանցվելով վերապրողներին: Դրանք չոր ու ցամաք կմախքներ էին, հիշատակագրությունը մի կյանքի, որը եղել էր աշխույժ ու բեղուն, հյուրասիրություններով ու ուրախություններով առլեցուն¹⁴⁰...

Այս նկարները, ջարդի ու տեղահանության ընթացքում կանանց կողմից փրկված մի քանի առարկաների հետ, վերածվում են մասունքների, որոնք գրառված հիշողությունների ձևով դառնում են հեղինակի սեփականությունը: Հեղինակը նաև հանդես է գալիս որպես ընտանեկան հուշերի և դիվանի պահապան, իսկ վեպի արդյունքն Անտոնիա Արսլանի համար դառնում է ապաքինում, կատարսիս:

«ԱՐՏՈՒՅՏՆԵՐԻ ԿԳԱՐԱԿԸ» ՎԵՊԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցեղասպանության գեղարվեստական գրականության թարգմանությունը պահանջում է ոչ միայն լեզվական պատրաստվածություն, պատմության իմացություն, այլ նաև հոգեբանական խոչընդոտները հաղթահարելու կարողություն: Դա են վկայում թե՛ սույն գրքի հեղինակի անձնական փորձը և թե՛ զանազան թարգմանիչների հավաստումները: Ք. Բոհջալյանի «Ավագե ամրոցի աղջիկները» վեպի թարգմանիչ Արամ Արսենյանի հետ ունեցած զրույցի ժամանակ վերջինս ասաց.

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 38–39:

Մեծ Եղեռնի թեմայով գրված գրքի թարգմանությանը կամա թե ակամա յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում ցանկացած հայ թարգմանիչ՝ հայրենիքում թե օտար երկրում, քանզի սեփական փորձառության շնորհիվ խորությամբ ծանոթ է անմարդկային այդ արհավիրքին: Քրիս Բոհջալյանի «Ավագե ամրոցի աղջիկները» վեպը թարգմանելիս ասես լիովին թոթափել էի զգացմունքայնության ու հուզականության երբեմն նույնիսկ խանգարիչ դրսևորումները, քանի որ մինչ այդ արդեն թարգմանել էի ամերիկահայ մի շարք անգլիագիր հեղինակների նույն թեմային նվիրված ստեղծագործությունները՝ Նենսի Գրիգորյանի «Զաբել», Փիթեր Սուրյանի «Դարպաս», Փիթեր Նաջարյանի «Ուղևորություններ. վերջին հայը» վեպերը, բազմաթիվ պատմվածքներ, որ ամփոփվել են «Ժամանակակից ամերիկահայ պատմվածք» վերտառությամբ երեք ժողովածուներում, ինչպես նաև կանադացի ցեղասպանագետ և գրող Ալան Ուայթհորնի «Վերադարձ դեպի Հայաստան» երկլեզվյա բանաստեղծական ընտրանին: Բացի այդ, գուցե ինչ-որ նախախնամությամբ, գրեթե միաժամանակ թարգմանում էի ավստրալացի բանաստեղծ և արձակագիր Մարսելա Փոլեյնի «Աշխարհի եզրը» յուրօրինակ վեպը, որի գործողությունները սկսվում են 1900-ականներին Թուրքիայում և ավարտվում են 2000-ականներին Ավստրալիայում: Եվ քանի որ ինքս էլ գաղթականի թոռ եմ, ազգայնականի զավակ և խորությամբ ծանոթ եմ թե՛ ժամանակի պատմական իրադարձություններին, թե՛ պատմագրության մոտեցումներին, ինչպես նաև գրականության մեջ թեմայի լուսաբանման հիմնական միտումներին, ինձ այլևս հետաքրքրում էին հեղինակի վերաբերմունքը նյութին և թեմայի գեղարվեստական արծարծումը: Եթե մինչ այդ իմ թարգմանած վեպերում միախառնված էին Յեղասպանության վերաբերյալ փաստական նյութը (որոշ դեպքերում նաև մեջբերումների տեսքով) և վերապրածների ու նրանց հետնորդների կյանքի պատմությունը, ապա Մարսելա Փոլեյնի և, հատկապես, Քրիս Բոհջալյանի պարագայում փաստական նյութի շարադրումը փոխարինված էր իրական կյանքի գեղարվեստական պատումով և շարադրված այնպիսի վարպետությամբ, որ ընթերցողն իրեն մասնակից է զգում բոլոր իրադարձություններին, իսկ թարգմանիչը միայն վայելում է հեղինակի ու սեփական բառապաշարային, լեզվաոճական ու գեղագիտական ձեռքբերումները:

Առիթ եմ ունեցել զրուցելու նաև Հիլարի Քրիքի հետ: Վերջինս մի հատված է անգլերեն թարգմանել Արսլանի «Զմյուռնիայի ճանապարհը» վեպից, որն առայժմ ամբողջությամբ թարգմանված է միայն հայերենով:

Ես պատմաբան եմ,— ասաց նա,— ու իմ ուսումնասիրության ոլորտը Մերձավոր Արևելքն է, մասնավորապես 1890 թ. սկսած, քանի որ հետազոտում եմ նավթի քաղաքականությունը տարածաշրջանում: Որպես սոցիալական հարցերով զբաղվող պատմաբան՝ ես շատ հետաքրքրված եմ հասարակ մարդկանց կյանքով, և այս դեպքում տվյալ ժամանակաշրջանի գրականությունը, դրամատուրգիան, արվեստն ու երաժշտությունն արժեքավոր աղբյուր են: Նախքան թարգմանությունը սկսելը ես ուսումնասիրել եմ ակներև փաստերը, գործողությունները, գլխավոր հերոսներին: Պետք է հաշվի առնել, որ ծնվել եմ հետպատերազմյան Լոնդոնում, որի մեծ մասն ավերված էր, սնունդը քարտով էինք ստանում մինչև իմ վեց տարեկան դառնալը: Պատերազմի շունչը դեռ զգացվում էր. մայրս, որն ուսուցչուհի էր, ֆաշիստական Գերմանիայի կողմից Լոնդոնի ռմբակոծությունների ժամանակ գտնում ու հոգ էր տանում այն երեխաների մասին, որոնք փախել էին տարիանումներից ու վերադառնալով ամեն ինչ ամայացած էին գտել: Նա ինձ պատմել է իր հիշողությունները: Բացի այդ, ունեմ շատ ընկերներ, որոնք ստիպված են եղել փախչել քաղաքական հետապնդումներից, և, ընդհանրապես, վաղուց հետաքրքրվում ու զբաղվում եմ մարդու իրավունքների հարցերով: Տվյալ պարագայում մի դեպք չէր, այլ առաջին, երկրորդ, անգամ երրորդ սերնդի պատմությունների ու հիշողությունների միահյուսում:

Յուրաքանչյուր թարգմանություն հեղինակած գրքի նման ունի իր ստեղծման պատմությունը: Անտոնիա Արսլանի «Արտույտների ազարակը» վեպի թարգմանությունների մեծ մասն իրականացվել է ընդունված կարգով, այսինքն՝ հրատարակիչները որոշում են կայացրել ձեռնարկել գրքի հրատարակությունը: Մինչդեռ գրքի հունգարերեն հրատարակության հետ կապված մի պատմություն կա: Առաջին հայացքից աչքի է զարնում մի տարօրինակ փաստ. գիրքը տպվել է Ռումինիայում, ոչ թե Հունգարիայում: Գրքի գործակալ Քինգա Քալին տվեց հետևյալ բացատրությունը.

Ինչպես գիտեք, Հունգարիան դեռևս չի ընդունել Հայոց Ցեղասպանությունը: Այն հրատարակիչները, որոնց ես առաջարկեցի հրատարակել «Արտույտների ազարակը» վեպի հունգարերեն թարգմանությունը, պարզապես չարձագանքեցին: Ես որոշեցի դիմել Տրանսիլվանիայի (Ռումինիա) «Մենթոր» հունգարական հրատարակչությանը՝ ներկայացնելով նաև գիրքը Հունգարիայում գովազդելու ամբողջական ծրագիր, և նրանք ընդունեցին իմ առաջարկը:

«Մենթոր» հրատարակչության կողմից մեծ համարձակության դրսևորում էր անդրադառնալ մի թեմայի, որը Հունգարիայում դիտավորյալ անտեսվում էր: Այդուհանդերձ, գիրքը ոչ միայն հրատարակվեց, այլև Անտոնիա Արսլանի մասնակցությամբ շնորհանդեսներ կազմակերպվեցին թե՛ Հունգարիայում, թե՛ Ռումինիայում:

«Արտույտների ազարակը» վեպի հունգարերեն թարգմանության շրջանառությունը հունգարացիների շրջանում գերկարևոր է, քանի որ Հունգարիան դեռ պետք է ընդունի Հայոց Ցեղասպանությունը: Հունգարիան նաև այն պետությունն է, որտեղ 2004 թ. քսանվեցամյա լեյտենանտ Գուրգեն Մարգարյանը քնած ժամանակ մահացու կացնահարվեց ադրբեջանական բանակի լեյտենանտ Ռ. Սաֆարովի կողմից:

Հրատարակությունից որոշ ժամանակ անց, երբ գիտաժողովի էի մասնակցում Բուդապեշտում, կրկին հանդիպեցի Քինգա Քալիին: Իմ հարցին, թե որքանով է գրքի թարգմանությունը նպաստել Հունգարիայում մարդկանց տեղեկացված լինելուն, նա պատասխանեց.

Ընթերցողները խոստովանեցին, որ գիրքը կարդալուց հետո առաջին անգամ հասկացան, թե ինչ է Հայոց Ցեղասպանությունը: Նրանք գիտեին Հոլոքոստի մասին, բայց ոչ՝ Մեծ եղեռնի: Համենայնդեպս, երիտասարդ սերունդը դրա մասին գաղափար չունի: Ընկերներիցս մեկի մայրը զայրացավ ու արտասպեց՝ ասելով. «Ինչու՞ մարդիկ Հունգարիայում տեղեկացված չեն այս ամենի մասին, ինչո՞ւ այս պատմական եղելությունը չի լուսաբանվում դպրոցներում՝ պատմության դասերին:

Ավելի ուշ հնարավորություն ունեցա կապ հաստատելու նաև գրքի հունգարացի թարգմանիչ Քինգա Ջուլյա Քիրալիի հետ:

Անտոնիա Արսլանի «Արտույտների ազարակը» վեպը երբևէ կատարած իմ ամենացնցող թարգմանությունն է, ասաց նա: Երբ ես գիրքը ստացա Իտալիայից ու սկսեցի կարդալ, չէի պատկերացնում, որ ազգային այսպիսի զարհուրելի ճակատագիր կարող է գոյություն ունենալ: Վեպի մեկ քառորդը կարդալուց հետո ստիպված եղա նոր բազկաթոռ գնել, որը մինչ օրս անվանում եմ «Արտույտների

ազարակի աթոռ»: Ինձ անհրաժեշտ էր վեպը կարդալ այնպիսի դիրքով, որ զգոն լինեի մինչև վեպի ավարտը: Ես նույնպես հայկական արմատներ ունեմ, ընտանիքս Տրանսիլվանիա է եկել 17-րդ դարում, այդ պատճառով վեպն իմ ներսում արթնացրեց խոր քնած կարեկցանք տառապանքի ու դժբախտության նկատմամբ: Ես հնարավորինս ճիգեր էի գործադրում հաղթահարելու երկչոտությունս, որը խանգարում էր թարգմանելուն: Ինչպե՞ս պետք է թարգմանեի այն տառապանքները, որ կրել էր Սմբատի ընտանիքը, ինչպե՞ս պետք է այդ ահասարսուտ դեպքերը լավագույնս հասցնեի ընթերցողին: Ինչպե՞ս պատերին վերարտադրել հայերի արյունով նկարված «ճաղիկները»¹⁴¹: Արդյո՞ք իրավունք ունեի դա անելու: Արդյո՞ք դա չէր լինի Ցեղասպանության վերաիրագործում: Խնդիրը միայն բարոյագիտությանն ու գեղագիտությանը չէր վերաբերում, ոչ էլ զուտ գրականությանը: Մինչև հիմա հիշում եմ, թե ինչ ազդեցություն էր թողել ինձ վրա Նվարդի մահը: Ես այդ մասն էի ընտրել ունկնդիրների համար առաջին անգամ վեպից մի հատված կարդալու նպատակով, բայց չկարողացա: Ինձ պարուրեց ցավի, հուզմունքի, դժբախտության այնպիսի ալիք, որ ես սկսեցի լաց լինել: Դա իմ ուժերից վեր էր...:

Միանգամայն հասկանալի է հունգարացի թարգմանչի հուզականությունը: Ինքս էլ նույն ապրումներն եմ ունեցել հատկապես «Արտոյտների ազարակը» եռագրության առաջին հատորի թարգմանության ժամանակ:

Ամեն ինչ սկսվեց 2005 թվականին, երբ Երևանում ընթանում էին Հայ-իտալական բարեկամության օրերը: Փառատոնի շրջանակում նախատեսված էր նաև հանդիպում Անտոնիա Արսլանի հետ, որի «Արտոյտների ազարակը» վեպը նոր էր լույս տեսել Իտալիայում և արդեն սկսել էր վայելել մեծ հաջողություն: Հանդիպմանը մասնակցելու էին նաև Պաոլո և Վիտտորիո Տավիանինները, որոնք հաջորդ տարի սկսելու էին համանուն ֆիլմի նկարահանումները: Գտնվում էի Հայաստանում, որպեսզի Գիտությունների ազգային ակադեմիայում «Դանտեն հայ իրականության մեջ» թեմայով զեկուցում ներկայացնեի: Ինձ զանգահարեց Անտոնիան՝ խնդրելով թարգմանել գրքից մի քանի հատված՝ միջոցառման ժամանակ ընթերցելու համար: Անտոնիան Երևան ժամանեց Տավիանինների հետ, հանդիպումը մեծ շուքով տեղի ունեցավ Ազգային պատկե-

¹⁴¹ Ա. Արսլան, 2007, էջ 119:

րասրահում: Իտալիա վերադառնալուց հետո Անտոնիա Արսլանն ինձ առաջարկեց իրականացնել գրքի ամբողջական թարգմանությունը: Բնականաբար, սիրով ընդունեցի, բայց ժամկետները շատ հստակ էին. ֆիլմի նկարահանման ավարտին պետք է պատրաստ լինեիր նաև գրքի հայերեն թարգմանությունը: Ֆիլմը ներկայացվելու էր «Ոսկե Ծիրան» փառատոնի բացմանը, և Անտոնիան ցանկանում էր, որ այդ ժամանակ պատրաստ լինեիր նաև վեպի հայերեն տարբերակը: Ժամկետը կարճ էր՝ մեկ տարուց պակաս: Միանգամից ձեռնամուխ եղա «Արտոյտների ազգարակը» վեպի թարգմանությանը: Մեծ պատասխանատվություն էի զգում: Ծայրաստիճան ներգրավված էի պատմության մեջ նաև ողջ հույզերով, որը երբեմն խանգարում էր թարգմանելու գործընթացին: Հաճախ սկսեցի արթնանալ լուսաբացին՝ ժամը հինգին, քանի որ մի կողմից՝ գավակներս փոքր էին, և առավոտվա այդ մի քանի ժամը հարմար էր թարգմանության համար: Մյուս կողմից՝ ուզում էի պատմությունը ժամ առաջ հասու դարձնել հայ ընթերցողին: Երբ հասա գրքի այն հատվածին, որտեղ հեղինակը պատմում է ջարդերի մասին, թարգմանությունը կանգ առավ. անհնար էր շարունակել աշխատանքը: Ինչպե՞ս կարող էի մտածել բառերի կամ քերականական ձևերի ընտրության մասին, երբ բովանդակությունը պատմում էր հայ մանուկների ջարդը մոր աչքի առջև.

Կարոն ընկած էր՝ գեղեցիկ ժպիտը դաջված շուրթերին, փոքրիկ թաթիկներով պահելով բացված որովայնը: Լեսլին չորեքթաթ փորձեց մի կերպ պատսպարվել շողշողուն սպասադարանի տակ, սակայն ոտքերից դուրս քաշեցին ու ամբողջ թափով նետեցին դեպի պատը, ու նրա կլորիկ գլխիկը ձգմվեց հասած ձմերուկի պես՝ արյուն և ուղեղ շաղ տալով ծաղկային նուրբ նախշերի վրա: Ահա այսպես ծնվեցին հայոց Գողգոթայի արյան ծաղիկները¹⁴²...

Որոշեցի բաց թողնել վերոհիշյալ հատվածը, որին վերադարձա միայն վերջում, երբ ամբողջ գիրքն արդեն թարգմանված էր: Ինչևէ, ինձ հաջողվեց պահել խոստումս: 2007 թվականի հուլիսի

¹⁴² Նույն տեղում:

10-ին՝ «Ոսկե Ծիրան» փառատոնի բացման ժամանակ՝ Տավիանիների ֆիլմի ցուցադրությունից առաջ, Անտոնիա Արսլանը բեմից ուրախությամբ ազդարարեց, որ իր վեպը հասու է նաև հայ ընթերցողին: 2009 թվականի հոկտեմբերին հրատարակվեց եռագրության երկրորդ գիրքը՝ «La Strada di Smirne» վերնագրով, որը ևս թարգմանվեց հայերեն¹⁴³:

«ԱՐՏՈՒՅՏՆԵՐԻ ԱԳԱՐԱԿԸ» ԿԻՆՈԺԱՊԱՎԵՆԸ

Երբ իտալացի հայտնի ռեժիսորներ ու սցենարիստներ Տավիանի եղբայրները Անտոնիա Արսլանին առաջարկեցին «Արտույտների ազարակը» վեպի հիման վրա ֆիլմ նկարահանել, հեղինակն առաջարկություն ուներ նաև Հոլիվուդից: Սակայն Անտոնիան տեղյակ էր, որ Հոլիվուդում Հայոց Ցեղասպանության մասին կինոժապավեն նկարահանելու նախկինում արված փորձերը մի քանի անգամ արդեն սառեցվել էին: Նա գիտեր, որ 1934 թվականից սկսած՝ տասնամյակներ շարունակ, ականավոր ռեժիսորներն ու դերասանները ապարդյուն փորձեր էին արել նկարահանելու Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», որն, ըստ «Variety» հանդեսի, դարձել է Հոլիվուդի պատմության ամենաշատ «հետուառաջ եղած» կինոարտադրությունը: Նույնիսկ գիրք է գրվել վեպը ֆիլմի վերածելու ձախողված փորձերի մասին¹⁴⁴: Անտոնիա Արսլանը քաջատեղյակ էր այս ամենին, ուստի նախընտրեց ընդունել Տավիանիների առաջարկը:

Տավիանի եղբայրները հենց սկզբից հայտարարեցին, որ կինոնկարը հիմնվելու էր «Արտույտների ազարակը» վեպի վրա, բայց լինելու էր իրենց ազատ մեկնաբանությամբ: Նրանք նախատեսում էին որոշ բաներ փոփոխել՝ հարմարեցնելով գիրքը կինոնկարին: Եվ իս-

¹⁴³ Ա. Արսլան, Զմյուռնիայի ճանապարհը, թարգմ.՝ Ս. Հարությունյան, Զանգակ, Սահակ Պարթև, Երևան, 2012:

¹⁴⁴ E. Minasian, Musa Dagh. Cold Tree Press, Nashville, TN, 2007, P. Balakian. The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response. HarperCollins, New York, 2003, pp. 376–377.

կապես, նրանք մի կողմից կրճատեցին, մյուս կողմից հավելեցին գրքի մեջ բացակա դրվագներով: Սա միանգամայն բնական է, քանի որ մինչ գրքի յուրաքանչյուր ընթերցող ինքն է մտքում մեկնաբանում իրադարձությունները, պատկերացնում հերոսներին, ֆիլմում Տավիանիները պետք է ժանրային անցում կատարեին և հանրությանը ներկայացնեին իրենց ընկալումը: «Կինոնկարը չէր կարող հար և նման լինել վեպին: Անտոնիա Արսլանի վեպը միահյուսել ենք մեր երևակայության հետ», նշում են ռեժիսորները¹⁴⁵:

Տավիանի եղբայրները դերասանների հրաշալի խումբ հավաքեցին՝ Պազ Վեգա, Մորիս Բլայբթրո, Ալեսանդրո Պրեցիոզի, Անգելա Մոլինա, Արսինե Խանջյան, Մուհամմեդ Բաքրի, Չեքի Քարյո, Անդրե Դուսոլիե, Լաուրա Էֆրիկյան և այլք: Հարցազրույցներից մեկի ժամանակ ռեժիսորները հավաստեցին, որ ֆիլմի նկարահանումների ընթացքում դերասաններից ոմանց զգացմունքները տեղի են տվել: Նրանց վկայությամբ՝ կինոնկարն առաջին անգամ ամբողջությամբ դիտելուց հետո Թուրքիայում ծնված, հունական ու հրեական արմատներ ունեցող դերասան Չեքի Քարյոն սկսել է արտասվել: Հուզմունքը փոքր-ինչ թոթափելուց հետո նա ասել է, որ կինոնկարը դիտելիս ոչ միայն ականատես է դարձել ողբերգությանը, այլև տեսել է իր հրեա հորեղբորն ու պապին: Այսպիսով՝ դերասան Քարյոյի երևակայության մեջ խաչաձևվել էին Հայոց Ցեղասպանությունն ու Հրեից Հոլոքոստը¹⁴⁶: Այն հարցին, թե ինչու որոշեցին նկարահանել ֆիլմը, Վիտտորիո Տավիանին պատասխանում է.

Վերջին տարիների իրադարձությունները մեզ շատ էին անհանգստացնում իր-
րև հասարակության անդամ: Տեսնում էինք, որ աշխարհում ցեղասպանությունները
շարունակվում էին, ականատես էինք լինում, որ մի օր առաջ իրար հետ համերաշխ
ապրած երկու ժողովուրդներից մեկը կռվի էր դուրս գալիս մյուսի դեմ՝ բնաջնջե-
լու մարմաջով: Ավելի անտանելի բան չկա, քան պատերազմն իրար ճանաչողների
միջև: Ես և եղբայրս ուզում էինք ինչ-որ բան անել, որպեսզի ուշադրություն հրավի-

¹⁴⁵ «Մոռացված ցեղասպանություն» հարցազրույց Տավիանի եղբայրների հետ: <https://www.youtube.com/watch?v=-Pnyzq4kROA>.

¹⁴⁶ Նույն տեղում:

րեինք այն ամենի վրա, ինչ կատարվել էր, բայց միևնույն ժամանակ այնպիսի բան պետք է ստեղծեինք, որ դաս լիներ ներկա ժամանակաշրջանի համար: Այս պարապայում մեզ օգնության եկավ Անտոնիայի գիրքը, որից ներշնչվեցինք¹⁴⁷:

Կինոնկարը Իտալիայի, Իսպանիայի, Բուլղարիայի, Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի համատեղ արտադրություն է, և իսպանացի դերասանուհի Պազ Վեգան խաղում է գլխավոր հերոսուհու դերը: Կինոնկարի իսպաներեն անվանումն էլ հենց իր հերոսուհու անունով է՝ «El Destino de Nunik» «Նունիկի ճակատագիրը»: Կինոնկարի ցուցադրումից անմիջապես հետո հայերի մեծ մասը մտահոգված էր, որ ռեժիսորները Նունիկի սիրո երկու պատմություն էին ներկայացրել թուրք սպաների հանդեպ: Վերջիններիս դերը կատարում են իտալացի Ալեսանդրո Պրեցիոզին ու գերմանացի Մորիս Բլայբերուն:

Բանասեր, կինոգետ Արծվի Բախչինյանի հետ ունեցած «վեպ — կինոնկար» քննարկման ժամանակ վերջինս խոստովանեց.

Տավիանիների էկրանացումից, ինչպես Հայոց Ցեղասպանության ցանկացած գեղարվեստական դրսևորումից, հայերի սպասելիքները մեծ էին և, որպես օրենք, մնացին չարդարացված: Անշուշտ, պետք է երախտապարտ լինել կինոյի մեծ վարպետներին՝ մեր ժողովրդի ցավը, լայն հանրությանը ոչ բավարար կերպով ծանոթ պատմության այդ ողբերգությունը կինոյի միջոցով արծարծելու համար: Սակայն կինոգետի մեր համեստ կարծիքով՝ այն խիստ դասական ձևը, ոճը, լեզուն, որով ներկայացվել էր պատմությունը, առնվազն կես դարով ուշացած էր, ինչը բնավ չի կարելի ասել գրքի մասին: Պատկերվող ողբերգության շարժառիթները մնում են գրեթե չբացահայտված, ըստ կինոնկարի՝ կարելի է այն թուր պատկերացումը կազմել, թե այն եղել է բացառապես տնտեսական: Գլխավոր հերոսուհու վարքը ևս պատմական և հոգեբանական առումով ընդհանրական չէ 20-րդ դարի սկզբի արևմտահայ կնոջ համար ու դարձյալ սխալ պատկերացում կարող է առաջացնել, թե հայուհիները, Նունիկի պես, մի թուրքից մյուսի գիրկն էին նետվում, մինչդեռ կատարվել է ճիշտ հակառակը: Ֆիլմի գեղարվեստական մասը տուժում է երկխոսությունների ոչ առտնին բնույթից, ոչ մեծ բյուջեն ֆիլմը գերծ չի պահել այսօրվա կինեմատոգրաֆին այնքան անհարիր որոշ թատերայնությունից (օրինակ՝ գաղթի տեսարանում մարդկանց հանդերձանքը թվում է անհամոզիչ):

¹⁴⁷ Նույն տեղում:

Մինչդեռ կինոբեմադրիչները տալիս են այլ մեկնաբանություն.

Փորձել ենք ներկայացնել երկու թուրք կերպարների, որոնք առանձնանում են մնացածներից: Մեր կարծիքով՝ սրանք մարմնավորում են այսօրվա այն թուրքերին, որոնք համամիտ չեն իրենց պետության վարած ժխտողական քաղաքականության հետ», և որպես օրինակ Պատյո Տավիանին բերում է Հրանտ Դինքի սպանությունից հետո թուրք ժողովրդի ցույցը: «Մեզ մոտ, շարունակում է Պատյո Տավիանին, եղել է ֆաշիզմ, Գերմանիայում՝ նացիզմ, որոնք դատապարտվել են, ինչու՞ Թուրքիան հաշվի չի նստում իր պատմության այս մութ էջի հետ: Մենք հուսով ենք, որ սա կիրականանա¹⁴⁸:

Ըստ էության, երկու թուրքի կերպար կա նաև վեպում, որտեղ, սակայն, միանգամայն պատճառաբանված է հերոսուհու՝ Ազնիվի (Ֆիլմում՝ Նունիկ) վարքագիծը. անձնագրություն՝ հանուն եղբոր զավակների փրկության.

Իր խենթ ժպիտով, կոլոլված Զարեհի ուղարկած կարմիր մետաքսի մեջ, երթի հինգերորդ երեկոյին [Ազնիվը] տրվեց մի զապտիեի, որը մոտեցել էր նրանց փոքրիկ խմբին: Զինվորին հետամուտ էր եղել հենց ինքը՝ հասկացնել տալով, որ իրեն հարկավոր չէր բռնի ուժով տիրանալ, և մի փոքր էլ շողոքորթել էր նրան ժպիտով ու այն քնքուշ հնազանդությամբ, որով տղային ընդունել էր իր մեջ: Շոյված էր զապտիեի տղամարդկային հպարտությունը. այս հայուհիները, որ գերադասում էին ինքնասպան լինել, քան հանձնվել, այս հպարտ անհավատները, որ գիտեին գրել ու խաբկանք հյուսել... ահա այժմ թուրք զինվորը տիրել էր նրանցից մեկին, և թվում է՝ աղջիկն էլ էր ուրախ և լավ էլ սիրաբանում էր: Ուստի իր հացից բաժին հանեց նրան... Ազնիվը ոչինչ չէր խնդրում, միայն ժպտում էր: Եվ մահվան այդ հուսաբեկ աշխարհում նրա ժպիտը զինվորին թվում էր այդքան հոգսաշատ կյանքի միակ ուրախությունը, միակ հատուցումը: Նա գյուղում կին ուներ, բայց Ազնիվը նրան ասել էր, որ հավատափոխ կլիներ ու կամուսնանար նրա հետ ճանապարհորդության ավարտին (զինվորը չգիտեր, որ Ազնիվը չէր ուտում իր տված հացը. այն փոխանցում էր Շուշանիկին, Վերոնին ու երեխաներին. ու չէր տեսնում, որ Ազնիվի վարդ այտերը այժմ ջերմից էին փայլում)¹⁴⁹:

¹⁴⁸ «Մոռացված ցեղասպանություն» հարցազրույց Տավիանի եղբայրների հետ: <https://www.youtube.com/watch?v=-Pnyzq4kROA>.

¹⁴⁹ Ա. Արպան, 2012, էջ 171:

Բրիջվործրի պետական համալսարանի հաղորդակցության ֆակուլտետի դեկան, կինոքննադատ Արթուր Լիզիի հետ ունեցած գրույցի ժամանակ վերջինս ասաց.

Գրականության և կինոյի միջև այնքան էլ դյուրին չէ համեմատության եզրեր անցկացնել, քանի որ գործ ունենք երկու տարբեր ժանրերի հետ: Առաջին հայացքից, որպես արագ պատասխան, կարող ենք ասել, որ գիրքն ավելի լավն է, քան ֆիլմը: Սակայն գիտենք նաև, որ ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ հետզհետե նվազում է այդ «ավելի լավ» գիրքն ընթերցողների թիվը:

Անկասկած, Ա. Արսլանի «Արտույտների ազարակը» վեպն առավել հաջողված է, քան Տավիանիների համանուն ֆիլմը: Վեպը գրավում է ընթերցասեր հասարակությանը, ունի կուռ կառուցվածք, հերոսները նկարագրված են հասարակական և պատմական շրջանակի մեջ, փորձ է արված ներկայացնելու այն, ինչը բանականության համար դժվար է ըմբռնել. պատմությունը ներկայացված է ըստ արժանվոյն: Բայց... Բայց մենք չենք ապրում այնպիսի աշխարհում, որտեղ գեղարվեստական արժեքը հասարակական և մշակութային փոփոխության ըմբռնման վերջնական չափանիշն է: Մյուս կողմից՝ Տավիանիների «Արտույտների ազարակը» գերազանց ֆիլմ չէ: Բովանդակային տեսանկյունից պարզապես անհեթեթություն է աներևակայելին ռոմանտիկ ներկայացնելու միտումը:

Այդուհանդերձ, ֆիլմն իր դրական ներգործությունը կարող է ունենալ այն մարդկանց վրա, ովքեր երբեք չեն պրպտի պատմության գրքերը կամ ընթերցի գրականության գլուխգործոցներ, մինչդեռ կինոնկարի և գեղեցիկ դերասանների ուղեկցությամբ հնարավորություն կունենան ծանոթանալու պատմական եղելությանը:

Հայ կամ եղելությանը քաջածանոթ օտար դիտորդը կարող է քննադատական վերաբերմունք ունենալ կինոնկարի հանդեպ: Սակայն Հայոց Ցեղասպանության մասին գաղափար չունեցող մեկի մոտ ֆիլմը հետաքրքրություն է առաջացնում պատմությունը հետազոտելու համար: Սրա վառ ապացույցն են աշխարհի տարբեր համալսարաններում մեր բազում քննարկումների ընթացքում հայ և օտար ուսանողներից ստացած պատասխանները, որոնք առաջին անգամ ամփոփ ներկայացնում ենք ընթերցողի դատին: Դրանք հակասական են, բայց ուսանողները գրեթե միահամուռ

ընդունում են, որ ֆիլմի միջոցով ծանոթացան պատմական մի եղև-
լության, որից ոչինչ կամ գրեթե ոչինչ չգիտեին:

«ԱՐՏՈՒՅՏՆԵՐԻ ԱԳԱՐԱԿԸ». ՎԵՊԻՑ ՖԻԼՄ. ԿԱՐԾԻՔՆԵՐ

Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանի 2015 թվականի միջո-
ցառումները մեկնարկեցին հունվարի 7-ին Հայոց Ցեղասպանու-
թյանը նվիրված իմ հանրային դասախոսությամբ, որին, համալսա-
րանի ուսանողներից, դասախոսներից և հայ համայնքի անդամնե-
րից բացի, մասնակցեց նաև ԱՄՆ Մասսաչուսեթս նահանգի Բրիջ-
վորթի պետական համալսարանի հաղորդակցության ֆակուլ-
տետի դեկանն իր երեսուն ամերիկացի ուսանողների հետ: Բոլոր
ուսանողներին նախօրոք ուղարկել էի Հայոց Ցեղասպանությունը
լուսաբանող նյութեր, ինչպես նաև խորհուրդ էի տվել ընթերցել Ան-
տոնիա Արալանի «Արտոյտների ազարակը» վեպը և դիտել Տավիա-
նիների համանուն ֆիլմը՝ դասախոսության ավարտին քննարկմա-
նը մասնակցելու համար: Ի թիվս այլոց՝ ամփոփ ներկայացնում ենք
հատվածներ նաև նրանց արտահայտած կարծիքներից «Արտոյտ-
ների ազարակը» ֆիլմի վերաբերյալ:

«Ֆիլմում Հայոց Ցեղասպանության իրողությունը ներկայաց-
ված է սրտահույզ ձևով: Թուրքերի կողմից շարունակաբար ժխտված
Հայոց Ցեղասպանությանը քչերն են տեղյակ: Ես ինքս ոչինչ չգիտեի
Եղեռնի և այն մեծ թվով հայ տղամարդկանց, կանանց ու երեխանե-
րի կոտորածներին հանգեցրած դեպքերի մասին: Ինձ թվում է՝ այս
կարգի ֆիլմը շատ բան կարող է հաղորդել, որովհետև մենք կապ-
վում ենք հերոսների հետ, սկսում ենք ապրել նրանց կյանքով, մեզ
հուզում է նրանց ապագան: Այս ֆիլմում երկխոսություններին հեշտ է
հետևել, դրանք խճողված չեն քաղաքականությամբ: Առանց դրա էլ
ամեն ինչ հասկանալի էր ինձ համար, ասես պատմության դասա-
գիրք էի ընթերցում: Ինձ թվում է, որ Նունիկի ու թուրք զինվորի մի-
ջև հենց սկզբից բռնկված սերը նույնպես օգնեց ինձ հասկանալու

Ֆիլմը: Այս արգելված սերը շարժեց իմ հետաքրքրությունը, և ես անհամբեր սպասում էի, թե ինչ է լինելու հետո: Իհարկե, պատմական իրադարձության էկրանավորումը ենթադրում է որոշակի սահմանափակումներ: Մինչև վերջ չի հասկացվում, օրինակ, թե կանայք ինչքան պետք է հարկադրաբար քայլեն, կամ թե ուր են նրանց տանում: Թուրքերի կողմից հայերի բնաջնջումը բացատրվում է, բայց ոչ բոլոր պատճառներն են բացահայտվում: Համոզված եմ, որ Ցեղասպանության ետևում քաղաքական ուժեր են ու տարիների նախապատրաստություն, բայց ֆիլմում ցույց են տրված միայն այս ընտանիքի հետ կապված դեպքերը: Հերոսների վրա կենտրոնանալը օգնում է դիտողին հասկանալու ֆիլմն ու դառնալու այդ պատմության մի մասը: Այնուամենայնիվ, չէր խանգարի, որ որոշ հատվածներ կրճատվեին կամ փոխվեին՝ ֆիլմի ընթացքն ավելի սահուն դարձնելու համար: Կային տեսարաններ, որ դժվար էր նայել, ու ես երկար ժամանակ չէի կարողանում դրանք մոռանալ: Համենայնդեպս, կինոնկարը ինձ շատ բան տվեց գիտելիքի ու զգացմունքային առումով»¹⁵⁰:

«Երբ գրքի հիման վրա ֆիլմ է նկարահանվում, տարբեր հնարավորություններ կան վերարտադրելու գրքի բովանդակությունն ու առաջ քաշված գաղափարները: Որոշակի դեպքերում ֆիլմը դիտողների թիվը գերազանցում է գիրքն ընթերցողների թվին: Դժբախտաբար, կինոբեմադրիչների համար շատ դժվար է էկրանից հանդիսատեսին հասցնել գրքի բուն իմաստը՝ բնագրին հարազատ մնալով: Վտանգ կա, որ հանդիսատեսը ֆիլմն ընկալի բառացիորեն: Տավիանի եղբայրները զգալի աշխատանք են տարել թեմայի վերաբերյալ միջազգային զուգահեռներ անցկացնելու, ինչպես նաև հայ ընտանիքի կյանքն ու թուրքերի վայրագությունները ցուցադրելու համար: Կինոնկարում երևում են հայկական մշակույթի, ազգային ինքնության պահպանման կարևորությունը,

¹⁵⁰ Քայլի Բրենան, Մասաչուսեթս նահանգի Բրիջվորթրի պետական համալսարան (այսուհետ՝ Բրիջվորթր):

ինչպես նաև հայերի ու թուրքերի բարդ փոխհարաբերությունները (ներառյալ Նունիկի սիրավեպը): Իհարկե, կինոնկարը կշահեր, եթե այն առավել խորությամբ անդրադառնար հայերի կյանքին ու ցեղասպանության պատճառ հանդիսացող քաղաքական հարցերին: Այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանությունից անտեղյակ հանդիսատեսին Տավիանի եղբայրների ֆիլմը պատկերացում է տալիս 20-րդ դարի սկզբի ամենախոշոր ոճրագործություններից մեկի մասին»¹⁵¹:

«Գրքերի հիման վրա հաճախ է ֆիլմ նկարահանվում, սակայն այդ ընթացքում շատ արժեքավոր բաներ կորչում են: Հերոսներից մեկի՝ Սմբատի մասին ես ավելի շատ բան իմացա ֆիլմից հետո գիրքը կարդալով: Կարծում եմ, որ վեպն ընթերցողներին կօգնի ընդլայնելու իրենց գիտելիքները Հայոց Ցեղասպանության վերաբերյալ: Լավ կլիներ, որ կինոնկարում ավելի շատ խոսվեր հայերի հանդեպ թուրքերի ունեցած անբացատրելի ատելության մասին, քանի որ դա անչափ կարևոր է Եղեռնը հասկանալու համար»¹⁵²:

«Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը» ժապավենը համանուն գրքի հրաշալի էկրանավորումն է, որտեղ պատկերված են 1900-ականների սկզբին ներկայիս Թուրքիայի տարածքում իրականացված Հայոց Ցեղասպանության սարսափները: Ֆիլմը չի թաքցնում Թուրքիայում փոքրամասնություն կազմող հայերի նկատմամբ իրականացված եղեռնը: Պետք է ենթադրել, որ ֆիլմն արտացոլում է կոտորածի իրական պատկերը, և հանդիսատեսը ճիշտ պատկերացում է կազմում այն տառապանքների ու կորուստների մասին, որոնք բաժին են ընկել հայ ժողովրդին: Բանն այն է, որ երբ վեպը վերածվում է կինոնկարի, ապա այն դիտելիս չես ունենում նույն ապրումներն ու հույզերը, որոնք ծնվում են գիրքը կարդալիս: Անձնական տպավորություններն արդեն միջնորդա-

¹⁵¹ Սարա Փեք, Բրիջվորթըր:

¹⁵² Անայ Բայեզ, Բրիջվորթըր:

վորված են, ու հաճախ կինոնկարը նույնքան հաջող չի թվում: Այնուամենայնիվ, «Արտույտների ագարակը» ֆիլմում ցայտուն կերպով պատկերված են այն անասելի տանջանքները, որոնց ենթարկվել են տղամարդիկ, կանայք, երեխաները: Կինոնկարն, ամենայն հավանականությամբ, մեծապես նպաստել է հասարակությանը իրազեկ դարձնելու Հայոց Ցեղասպանությանը, որի մասին, ցավոք, քիչ բան է հայտնի, և որն ավելի հաճախ պետք է քննարկման առարկա դառնա»¹⁵³:

«Նախքան ֆիլմը դիտելը գաղափար չունեի Հայոց Ցեղասպանության մասին: Շատ տպավորիչ էր ֆիլմի ավարտը: Իմ կարծիքով՝ շատ ազդեցիկ էր, որ զինվորը, իր կամքին հակառակ, գլխատեց սիրած աղջկան: Այս ամենն ինձ համար շատ հետաքրքիր է, քանի որ ազգականներիցս մեկը ամուսնացած է հայի հետ, սակայն ես ոչինչ չգիտեի այդ դեպքերի մասին: Կարևոր է գրքի ու ֆիլմի տարբերությունները քննարկելը, քանի որ հաճախ կինոբեմադրիչներն ու արտադրողները, նպատակ ունենալով կինոնկարն ավելի ուշագրավ դարձնելու հանդիսատեսի համար, դեպքեր ու հերոսներ են ավելացնում: Լինում է և հակառակը՝ գրքում տեղ գտած կարևոր բաներ դուրս են մնում, քանի որ հնարավոր չէ իրականացնել դրանց էկրանավորումը: Ես իմ փորձից գիտեմ, որ եթե ֆիլմը նախնա գիրքը կարդալուց հետո, միշտ էլ գիրքն ես նախընտրում»¹⁵⁴:

«Վեպն էկրանավորելու երկու ուղի կա. կամ տեսնում եք հեղինակի գրածի հիասքանչ վերարտադրություն, կամ էլ ճիշտ հակառակը: Ընթերցողների մեծամասնությունը գերադասում է ֆիլմը դիտել գիրքը կարդալուց հետո և արդյունքում նախընտրում է գիրքը: Նրանք, ովքեր սկզբում նայում են ֆիլմը, բնականաբար, նախապատվությունը տալիս են ֆիլմին: Այսինքն՝ առաջինը միշտ գերադասելի է: Գիրքը նախընտրող մարդկանց մեծամասնություն-

¹⁵³ Ֆրանկի Լինդեն, Բրիջվորթեր:

¹⁵⁴ Վիկտորիա Վուդ, Բրիջվորթեր:

նը գտնում է, որ ֆիլմում շատ բան կորչում է: Նրանք ցանկանում են կինոյում տեսնել գրքում տեղ գտած բոլոր մանրամասները: Սակայն դա հնարավոր չէ, քանի որ ֆիլմը շատ ավելի երկար կլինի: Ուստի, որպես կանոն, կինոբեմադրիչները կրճատում են որոշ «անկարևոր» տեսարաններ: Կինոբեմադրիչն իրեն իրավունք է վերապահում փոխելու որոշակի երկխոսություններ, տեսարաններ, անգամ ֆիլմի վերջաբանը: Սա նույնպես սվիններով կրնդունվի գիրքը նախընտրողների կողմից: Մեկ ուրիշ խնդիր, որ ծագում է այս դեպքերում, այն է, որ ընթերցողներն արդեն ունեն իրենց պատկերացումները հերոսներից յուրաքանչյուրի մասին: Ուստի կինոբեմադրիչների կողմից ընտրված դերասանների կազմը կարող է սկզբից ևեթ պատճառ հանդիսանալ կինոնկարը չհավանելու համար: «Արտույտների ագարակը» ֆիլմում Հայոց Ցեղասպանությունն ու դրա պատճառած վիշտն ու տառապանքները իսկապես լավ են ներկայացված: Ֆիլմը հնարավորություն է տալիս ականատեսի աչքերով դիտելու ցավը, խոշտանգումներն ու սարսափները: Վերը նշվեց, որ վեպն էկրանավորելիս շատ տեսարաններ ու մանրամասներ կարող են կրճատվել: Այս ֆիլմը բացառություն չէ: Այնքան շատ են դրամատիկ, ողբերգական, մահվան տեսարանները, որ ստիպված պետք է կրճատեին, որ ֆիլմը երկու ժամից ավելի երկար չձգվեր: Նաև կարևոր է շեշտել այուժեի դրամատիզմը՝ հանդիսատեսին իսկապես հրապուրելու համար: Վեպն ավելի շատ պտտվում է ողբերգական իրադարձությունների շուրջը, մինչդեռ կինոնկարում շեշտը դրված է նաև սիրո ու սիրային տեսարանների վրա՝ այն, ինչ դուր է գալիս հանդիսատեսին: Օրինակ՝ «Տիտանիկ» ողբերգական պատմություն էր անխորտակելի նավի կործանման մասին, բայց որպեսզի վերջինս դառնար հաջող ֆիլմ, կինոբեմադրիչները հորինել էին գլխավոր հերոսների սիրո պատմությունը: Առանց այդ լիրիկական զեղումի կինոնկարն այդպիսի մեծ հաջողություն չէր ունենա»¹⁵⁵:

¹⁵⁵ Հոլլի ՄքԳովան, Բրիջվորթեր:

«Երբ վեպի հիման վրա ֆիլմ է նկարահանվում, չնայած ընդհանուր բովանդակությունը պահպանվում է, որոշ մանրամասներ հաճախ կան դուրս են մնում, կան ներկայացվում ենռավել թանձր գույներով: Սա վերաբերում է նաև «Արտույտների ազարակը» վեպի էկրանավորմանը: Անկասկած, ֆիլմը մեծապես ներկայացնում է Հայոց Ցեղասպանությունը, որի մասին ես ոչինչ չգիտեի: Ընդհանուր առմամբ, այն ինձ համար բացահայտեց պատմության այդ էջերը, և ես ինձ շրջապատող մարդկանց ու աշխարհին սկսեցի նայել ուրիշ աչքերով»¹⁵⁶:

«Ինձ միշտ հետաքրքրել են այն ֆիլմերը, որոնք հիմնված են վեպերի վրա: Ես սիրում եմ համեմատել ու հակադրել այն գաղափարները, որոնք փորձում են արտահայտել հեղինակն ու կինոբեմադրիչը: Սակայն գիրքն ընթերցելուց և կինոնկարը դիտելուց հետո համարյա միշտ նախընտրում եմ առաջինը: Ըստ իս՝ գրողներն ավելի խորությամբ են արտահայտում իրադարձությունները, կերպարները, նրանց արտաքինը, վարքն ու բարքը: Գիրքը կարդալը հնարավորություն է տալիս մասնակից դառնալու պատմությանը: Դրա առավելությունն այն է, որ ընթերցողն ինքն է մեկնաբանում այն ամենը, ինչ տեղի է ունենում այնտեղ, անկախ հեղինակի տեսակետից: Կինոնկարում, սակայն, կինոբեմադրիչը ցուցադրում է այն, ինչ ցանկանում է, որ տեսնի հանդիսատեսը, և վերջինս ընկալում է այն, ինչը նախատեսվում է կինոբեմադրիչի կողմից: Գիրքը հնարավորություն է տալիս գործի դնելու երևակայությունը, մինչդեռ ֆիլմում քեզ հրամցնում են արդեն պատրաստի տեսարաններ: Գիրք գրելը, ընթերցելը, ֆիլմ նկարելը կապված են մարդու կողմից որոշակի իրադարձության ընկալման հետ: Գրողը, ընթերցողն ու կինոբեմադրիչը չեն կարող նույն կարծիքը կամ վերաբերմունքն ունենալ որևէ դեպքի վերաբերյալ: Ինձ ավելի հոգեհարազատ է ընթերցանությունը, որովհետև հնա-

¹⁵⁶ Մարկո Թիբերիի, Բրիջվորք:

րավորություն է տալիս զարգացնելու իմ անձնական մտքերն ու զգացմունքները տվյալ թեմայի վերաբերյալ»¹⁵⁷:

«Հանրահայտ գրական երկերի հիման վրա շատ հաճախ են ֆիլմ նկարահանում: Եթե կինոբեմադրիչը համաձայնում է նկարահանել, դա ամենևին էլ չի նշանակում, որ նա ոչինչ չի փոխելու: Շատ կինոբեմադրիչներ անում են ամեն ինչ, որպեսզի պահպանվի գրական ստեղծագործության կուռ կառուցվածքը, բայց պատահում է, որ հարկ է լինում փոխելու այուժեն, հերոսներին, դեպքերը՝ բավարարելու ֆիլմարտադրության պահանջները: Չեմ կարծում, որ կարելի է կինոնկարն ու գրական երկը նույն ձևով դիտարկել, դրանք դեպքերը շարադրելու բոլորովին տարբեր ժանրեր են: Եվ այն, ինչ հնարավոր է վեպում, երբեմն անհնար է ցույց տալ էկրանին: Օրինակ՝ վեպի ծավալը կախված է հեղինակից: Հեղինակն ինքն է որոշում, թե ինչ ու ինչքան գրի՝ ամբողջացնելու համար իր ասելիքը: Կինոյում ամեն ինչ այլ է: Նախ՝ կինոբեմադրիչը պետք է ներկայացնի այուժեն մի քանի ժամվա ընթացքում: Ֆիլմը դիտելիս հանդիսատեսը պետք է հաշվի առնի վերոհիշյալ տարբերությունները: Նման օրինակ է «Շինդլերի ցուցակը» ֆիլմը: Այն հիմնված է ավստրալացի գրող Թոմաս Բենեալիի «Շինդլերի կամարը» գրքի վրա: Չնայած այն բանին, որ ֆիլմում շատ մանրամասներ բավականին ճշգրտորեն պահպանվել են, այնուհանդերձ կինոբեմադրիչները որոշ բաներ փոխել են: Այսպիսի փոփոխությունների օրինակ է նաև «Արտոյտների ազարակը» ֆիլմը: Ֆիլմի նպատակը Հայոց Ցեղասպանության սարսափների մասին տեղեկացնելն է: Ամենայն հավանականությամբ, գրքից շեղումներ կան, բայց, դրանով հանդերձ, այն հանդիսատեսին է հասցնում իր ասելիքը: Երկու ժամից քիչ պակաս տևող ֆիլմի ընթացքում ես ծանոթացա պատմական մի ժամանակահատվածի, որի մասին համարյա ոչինչ չգիտեի: Իմ մեջ ցանկություն առաջացավ ավելի շատ իմանալու Հայոց Ցեղասպանության մասին և լինելու հասարակության ավելի իրազեկ անդամ»¹⁵⁸:

¹⁵⁷ Սաշա Հեգգի, Բրիջվորդ:

¹⁵⁸ Լեան Լոուել, Բրիջվորդ:

«Ցանկացած վեպի էկրանավորում ունի իր դրական ու բացասական կողմերը: Դրականն այն է, որ գրքում շարադրված իրադարձությունները կյանք են առնում: Դա օգնում է սյուժեն ավելի հեշտ հասկանալու և վերապատմելու: Հանդիսատեսը կապվում է հերոսների հետ ու դառնում սրտացավ այն ամենի հանդեպ, ինչի միջով նրանք անցնում են՝ տեսնելով ու լսելով գլխավոր հերոսներին, նրանց պայքարին ականատես լինելով: Մյուս կողմից՝ վեպերում կա մանրամասներին վերաբերող խորաթափանցություն, որ հասու չէ ֆիլմերին: Երբեմն վեպերում շարադրված տեղեկություններն ու պատմական իրողությունները դուրս են մնում նկարահանման ժամանակ: Վեպերը գրավիչ են նաև նրանով, որ հնարավորություն են տալիս ընթերցողին երևակայության ուժով ավարտին հասցնելու հերոսների մասին իր պատկերացումները: Կարդալիս ընթերցողը ոչ մի մանրուք բաց չի թողնում: Ընթերցողների համար երբեմն դժվար է գիրքը կարդալուց հետո նայել կինոնկարը ու տեսնել, որ շատ մանրամասներ դուրս են մնացել: Այսպիսի դեպքերում հանդիսատեսն անբավարարության ու անավարտության զգացում է ունենում: Նմանապես, ֆիլմը ձախողված կհամարվի, եթե հերոսները էկրանին պատկերված չեն այնպես, ինչպես գրքում կամ ընթերցողի երևակայության մեջ: Ես այն կարծիքին եմ, որ երկուսն էլ ընդունելի են, բայց պետք է սկզբում ֆիլմը նայել: Այդ դեպքում ֆիլմը կարծես թե բացում է աչքերդ, իսկ գրքի ընթերցումը խորացնում է գիտելիքներդ ու ցանկություն առաջացնում ավելին իմանալու»¹⁵⁹:

«Գրքում շարադրվածը էկրանին վերարտադրելու դժվարությունների ու ժամանակի սղության պատճառով վեպերն ու ֆիլմերը հաճախ են իրարից տարբերվում: «Արտույտների ազարակը» ֆիլմում Հայոց Ցեղասպանությունը պատկերված է մի ընտանիքի միջոցով: Սա այն եզակի ֆիլմերից է, որ ցույց է տալիս ու ուսու-

¹⁵⁹ Քրիսթալ Քիանդեր, Բրիջվորթը:

ցանում է պատմության ամենագարհուրելի ժամանակահատվածի եղելությունները: Ֆիլմն անչափ կարևոր է ինձ նման մարդկանց համար, որոնք, նախքան այն դիտելը, շատ քիչ բան գիտեին Հայոց Ցեղասպանության մասին»¹⁶⁰:

«Ինձ համար այս ֆիլմը նայելը շատ կարևոր էր, որովհետև ես համարյա գաղափար չունեի Հայոց Ցեղասպանության մասին: Կարծում եմ՝ ֆիլմը կարևոր է նաև նրանով, որ վերջում պարզ է դառնում, որ հայ ժողովուրդը դեռ արդարացի գնահատական չի ստացել իր դեմ կատարված հանցագործությունների համար: Հաճախ լրատվական միջոցներն ամենահեշտ ուղին են՝ ուսուցանելու այն մարդկանց, որոնք պարզապես ժամանակ չունեն ուսումնասիրելու պատմությունն ու դարաշրջանները: Այնուամենայնիվ, գրքերի վրա հիմնված ֆիլմերը հարազատ չեն մնում գրքի բովանդակությանը»¹⁶¹:

«Տավիանիների «Արտույտների ագարակը» ֆիլմը յուրահատուկ տպավորություն թողեց ինձ վրա: Ես գիտեմ, որ վեպ կարդալիս հերոսներն ընթերցողին հոգեհարազատ են դառնում, քանի որ վերջինս ժամերով խորամուխ է լինում տեքստի ու հերոսների կյանքի մեջ: Ֆիլմը նայելու դեպքում հանդիսատեսին տրված է սահմանափակ ժամանակ, և հերոսների հետ կապը դժվարությամբ է ստեղծվում: Ընթերցողն իր երևակայությամբ ստեղծում է հերոսների արտաքինի ու նրանց շրջապատող միջավայրի պատկերներ: Ֆիլմ նկարահանելիս կինոբեմադրիչն ընտրում է դերասաններ ու դերասանուհիներ, որոնք մարմնավորում են գրքի հերոսներին, իսկ սա հաճախ հանգեցնում է հակասությունների: Իմ կարծիքով՝ վեպի էկրանավորումը հնարավորություն չի տալիս հանդիսատեսին հասցնելու պատմական իրադարձության ողջ էությունը, ինչը շատ հեշտ է գրական երկի դեպքում: Ինչ վերաբերում է «Արտույտ-

¹⁶⁰ Քոննոր Էմոնս, Բրիջվորթըր:

¹⁶¹ Էմիլի Բորգես, Բրիջվորթըր:

ների ազարակը» Ֆիլմին, ինձ համար անտանելի էին այնտեղ տեղ գտած այդքան շատ մահն ու հուսահատությունը: Ֆիլմը սկսվում է տան նահապետի մահով, որն էլ նախորոշում է Ֆիլմի հետագա մոայլ ընթացքը: Դեպքերի զարգացմանը զուգահեռ՝ ես մեծ համակրանքով էի լցվում Նունիկի հանդեպ (որն անհավանական արիություն է ցուցաբերում այդպիսի անօգնական իրավիճակում): Ես պատրաստ չէի տեսնել այդքան մահ, որովհետև առաջին անգամ էի լսում Հայոց Ցեղասպանության մասին: Ինձ թվում է, որ Ֆիլմը ստույգ է ներկայացրել թուրքերի վայրագություններն ու Հայոց Ցեղասպանության ողբերգական հետևանքները»¹⁶²:

«Երբ գիրքը Ֆիլմի է վերածվում, միշտ էլ ինչ–որ բան կորչում է: Գրքում անսահմանափակ ժամանակ կա ենթատեքստը վերհանելու, մանրամասների մեջ խորանալու, հերոսների կերպարներն ավարտուն դարձնելու համար: Եթե ինչ–որ բան դուրս է մնում, կարելի է բացը լրացնել գրքի բովանդակությունը մեկ այլ կողմից դիտարկելով: Կհնոն, իր հերթին, տարբեր զգայարանների միջոցով տրամադրություն է ստեղծում ու հրաշալի ներկայացնում տեսարանները: Այն նաև կարող է ներկայացնել գրքի գլխավոր թեմաները՝ վեր հանելով հիմնական գաղափարը առանց շատ գրքերին բնորոշ երկարաբանությունների: «Արտույտների ազարակը» վշտալի ու դաժան Ֆիլմ է, սակայն չի կենտրոնանում միայն ահասարսուռ տեսարանների վրա: Ֆիլմում ցույց են տրվում ոճրագործություններ, բայց հիմնականը հակամարտության մարդկային կողմն է՝ ընդհատված սիրավեպեր, թշնամություն հարևանների միջև, բռնագաղթի գրկանքներ: Ֆիլմը լցված չէ անտեղի տեսարաններով: Գլխավոր հերոսուհի Նունիկը շատ համակրելի է ու հրապուրիչ: Նա ուժեղ է ու անձնվեր, ալեկոծ հույզերով լեցուն և վերջում սեփական կյանքը զոհաբերում է հանուն իր ընտանիքի, որին փորձում էր պաշտպանել ողջ ճանապարհին: Այս ամենը միաժամանակ հերոսական է ու ողբերգական

¹⁶² Զորդան Գոմես, Բրիջվորքը:

և շատ արագ ավարտվում է: Ֆիլմում շփոթեցնողը հանկարծակի ու անսպասելի հիշողություններն են, որոնք ցույց են տալիս ընտանիքի տարբեր անդամների հետագա ճակատագիրը: Ինձ ամենաշատը դերասանների խաղը դուր եկավ: Այն հիմնավորված է մարդկային վարքագծով ու տրամաբանությամբ՝ գերծ ողբերգությանն ու մելոդրամային բնորոշ կաղապարներից: Ֆիլմը, ի տարբերություն հոլիվուդյան գերդրամատիզացված ողբերգական բնույթի ֆիլմերի, իրական է ու համոզիչ»¹⁶³:

«Մինչև ֆիլմը դիտելը ես գրեթե ոչինչ չգիտեի 1915 թ. Հայոց Ցեղասպանության մասին, ուստի որոշ երևույթներ ինձ անհասկանալի թվացին: Համոզված եմ, որ պետք է կարդալ գիրքը նախքան ֆիլմը դիտելը: Վեպը կարդալիս կարող ես խորանալ մանրամասների մեջ, մտքումդ ստեղծել տեղանքի, հագուստների, հերոսների արտաքինի քո պատկերացումները, մինչդեռ ֆիլմը դիտելիս տեսնում ես գրքի էկրանային մեկնաբանությունը, ու տեղ չի մնում երևակայության համար: Այնուամենայնիվ, Տավիանի եղբայրների ֆիլմը շատ օգնեց ինձ գաղափար կազմելու Ցեղասպանության մասին»¹⁶⁴:

«Անչափ դժվար է ֆիլմ նկարել այնպիսի վեպի հիման վրա, որի բովանդակությունը կազմված է բազմաթիվ բարդ ու խրթին մանրամասներից: Նույնիսկ այն դեպքում, երբ ֆիլմը ճիշտ արտացոլում է սյուժետային գիծն ու տեսարանները, հնարավոր չէ վերարտադրել վեպի բազմակողմանիությունը: Պարզ է, կինոարտադրությունը հզոր ուժ է, և երբ նոր կինոնկար է թողարկվում, բոլորը ուզում են այն անապաման դիտել, մինչդեռ նոր գիրքը քչերին է հետաքրքրում: Ինչ էլ լինի, ֆիլմը չի կարող գրքին համարժեք զգացմունքայնություն առաջացնել: Կորչում է նաև թեմատիկ ասելիքը, որովհետև շարադրանքը ֆիլմում չի պահպանվում: Ասելիքի են-

¹⁶³ Մայքլ Ջեյմսոն, Բրիջվորթը:

¹⁶⁴ Բորին Մաթիսոն, Բրիջվորթը:

թատեքստն ու պատմական անդրադարձը չեն կարող պահպանվել առանց ամբողջական պատումի ու երկխոսությունների: Գիրքը կարելի է կարդալ առանց շտապելու, վերընթերցելով նախորդ գլուխները, խորհրդածելով ու վերլուծելով կարդացածը: Բայց եթե կինոնկարը ներառի գրքի սյուժեի ու երկխոսությունների ամեն մի մանրամասն, կլինի շատ ձգձգված ու երկար, իսկ դա հանդիսատեսին կձանձրացնի: Ֆիլմը ենթադրում է սահմանափակ ժամանակ, որով և պայմանավորված են կրճատումները: Գրքերից ստացած խոր տպավորությունը երկար է մնում հիշողությանս մեջ, նույնը չեմ կարող ասել ֆիլմերի մասին: Ֆիլմերի ազդեցությունը առօրյա կյանքում հետզհետե աղոտանում է»¹⁶⁵:

«Մինչև «Արտույտների ագարակը» ֆիլմը դիտելը ես իրականում ոչինչ չգիտեի Հայոց Ցեղասպանության մասին: Երբ երեխա էի, լսել էի միայն Հոլոքոստի մասին: Ֆիլմը դիտելուց հետո ես ավելի շատ կարդացի Մեծ Եղեռնի մասին և զարհուրեցի այն մտքից, որ Հայոց Ցեղասպանությունը նախորդել է Հոլոքոստին: Սա նշանակում է, որ մենք թույլ ենք տվել, որ պատմությունը կրկնվի, ու հիմա էլ նույնը շարունակում ենք»¹⁶⁶:

«Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը», շատ այլ ֆիլմերի նման, ունի երկու հիմնական առանձնահատկություն. այն համապատասխանում է գեղարվեստական ու շուկայական որոշակի պահանջների: Այն վեպի չկադապարված էկրանավորումն է ու նպատակ ունի ծանոթացնելու պատմական իրողություններին: Ամենակարևորն այն է, որ ֆիլմի նպատակը ոչ թե պատմական փաստի հիշեցումն է, այլ ցուցադրումն իր ողջ անողորոշամբ: Պատմական եղելությունը բացահայտելու այս մտադրությամբ է պայմանավորված կինոբեմադրիչների մոտեցումը ֆիլմին: Կապը ֆիլմի ու դիտողի միջև ստեղծվում է բռնագաղթի ու հերոսների հոգեվարքային իրավիճակների ամենադաժան տեսարաններում:

¹⁶⁵ Ջեյք Ֆրուսի, Բրիջվորթըր:

¹⁶⁶ Բաթյան Լա Սերրա, Բրիջվորթըր:

Սա առաջացնում է կարեկցանքի, մերձավորության զգացողություններ զոհերի նկատմամբ, և ամենակարևորն այն է, որ ցույց են տրվում փաստերը: Մինչ եղելությանը քաջատեղյակ հանդիսատեսի համար պատմական իրողությունը ներկայացված է ոչ լիարժեք կերպով (նաև այն պատճառով, որ հնարավոր չէ էկրանին ցույց տալ Հայոց Ցեղասպանության ողջ ծավալն ու սարսափները), այնուամենայնիվ ֆիլմը չի կորցնում Մեծ Եղեռնին անտեղյակ մարդկանց (ցավոք, դրանց թիվը դեռևս շատ է) իրազեկ դարձնելու իր առաքելությունը: Այս առումով, պետք է ընդունել, որ «Արտույտների ագարակը» ֆիլմը, թեև ոչ լիարժեք, կատարում է պատմական եղելության լուսաբանման իր ստանձնած դերը»¹⁶⁷:

«Կինոնկարի մեջ արված փոփոխությունը, որն ինձ դուր չի գալիս, Նունիկի երկրորդ սիրավեպն է հայ կանանց քարավանը դեպի Սիրիայի անապատն ուղեկցող թուրք զինվորի հետ: Տպավորությունն այնպիսին է, որ Նունիկը տառապում է «Սթոքհոլմյան» սինդրոմով, քանի որ սիրահարվում է միայն թուրք զինվորների: Այս փոփոխությունն անհասկանալի է, եթե հաշվի չառնենք սիրային կինոնկարների սիրահարներին բավականություն պատճառելը: Կարծես թե դա արվում է թուրք հանդիսատեսին սիրաշահելու համար. մեր առջև ցեղասպանության կարեկից թուրք մասնակից է, որին մենք պետք է խղճանք, քանի որ նա իրականում չի ցանկանում մասնակցել այդ ամենին: Միգուցե նրա կերպարն ավելացվել է, որպեսզի թուրք հանդիսատեսն իրեն պական մեղավոր զգա: Ակնհայտ է, որ այս ժապավենը դիտող թուրք հանդիսատեսների թիվը շատ քիչ կլինի կամ ընդհանրապես չի լինի, և այս կերպարի առկայությունն ուղղակի տարօրինակ է: Երկու հերոսների էությունը նույնն է, այն է՝ համակրելի թշնամի ու սիրահար, և այուժեի տեսանկյունից ավելի տրամաբանական կլիներ միացնել այս կերպարները: Երկրորդ թուրք զինվորը լավագույն դեպքում դիտվում է ավելորդ և առաջացնում բազում անառողջ զգացողություններ: Այդուհանդերձ, անկախ քննադատությունից, թե՛ գիրքը,

¹⁶⁷ Մարիաննա Վիանելլո, Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարան:

թե՛ կինոնկարը յուրովի նպաստում են Հայոց Ցեղասպանությանը իրազեկ դարձնելուն»¹⁶⁸:

«Ա. Արսլանի «Արտույտների ազարակը» վեպն ու Տավիանիների համանուն ֆիլմը իրենց ուրույն տպավորությունն են թողնում ընթերցողի ու հանդիսատեսի վրա և պետք է ոչ թե համեմատվեն, այլ ընկալվեն որպես երկու առանձին գործ: Գիրքը հնարավորություն է տալիս ընթերցողին երկար ճամփորդելու Արսլանյան ընտանիքի հետ: Ֆիլմն ավելի կարճ է, բայց գրավում է իր կինեմատոգրաֆին բնորոշ առանձնահատկություններով ու սյուժետային հավելյալ գծով, ինչպիսին է Նունիկի սիրավեպը: Ֆիլմում փորձ է արված հայ-թուրքական հակամարտությունները ներկայացնելու մեղմացրած, օրինակ՝ բարի թուրքերի տարբեր կերպարներով, ինչպիսիք են Էգոն ու Ֆերզանը: Խորությամբ չեն անդրադարձել նաև գրքի մի քանի կարևոր, օրինակ՝ Երվանդի (ֆիլմում՝ Ասատուր) հայկական ինքնության հետ կապված խնդիրներին: Գիրքն ավելի համապարփակ է, ու երբ կարդում ես հերոսների մասին, ծանոթանում ես նրանց մտքերին, պահվածքին, գործողություններին, կապվում ես նրանց հետ: Շատերին դուր չի գալիս, երբ վեպի հիման վրա ֆիլմ են նկարահանում, բայց կարծում եմ, որ ֆիլմը հասանելի է բազում հանդիսատեսների, որոնք, դիտելով այն, ցանկություն կունենան գրականություն կարդալու և ավելին իմանալու: Չէ՛ որ կինոբեմադրիչները ֆիլմը ստեղծել են ոչ միայն հայ հանդիսատեսի համար, այլև նպատակ են ունեցել գրավելու այլազգի հանդիսատեսի ուշադրությունը և նրանց ցույց տալու Հայոց Ցեղասպանությունը»¹⁶⁹:

«Ես միանշանակ գերադասել եմ «Արտույտների ազարակը» վեպը: Ֆիլմի ողջ ընթացքում զգացվում է բեմադրիչների ազդեցությունը: Գրքում ամեն ինչ որոշում է միայն հեղինակը՝ Անտոնիա

¹⁶⁸ Սուրեն Հովհաննիսյան, Կալիֆոռնիայի պետական համալսարան, Ֆրեզնո (այսուհետ՝ Ֆրեզնո):

¹⁶⁹ Մարինե Վարդանյան, Կալիֆոռնիայի պետական համալսարան (Ֆրեզնո):

Արվանը, դրանով իսկ պայմանավորելով ընթերցողի անձնական վերաբերմունքը հերոսների նկատմամբ: Եղել են շատ դեպքեր, երբ նախ կարդացել եմ գիրքը, հետո նայել ֆիլմը կամ հակառակը: Սակայն այս դեպքում ամեն ինչ ուրիշ էր: Չնայած ֆիլմը հնարավորինս հոգեհարազատ է մնացել վեպին, այնուամենայնիվ շատ բաներ, որոնց վրա հեղինակը ցանկացել է ուշադրություն հրավիրել, կամ ընդհանրապես դուրս են մնացել, կամ էլ բավականաչափ լուսաբանված չեն: Հասկանալի է, որ գրքի համեմատ կինոնկարը սահմանափակ հնարավորություններ ունի: Ոչ մի ֆիլմ չի կարող երկու ժամվա ընթացքում ընդգրկել վեպի բոլոր մանրամասները, բայց և այնպես կարելի էր ցույց տալ գրքի որոշ հերոսների հարաբերությունները: Չեմ կարող ասել, որ ֆիլմը չհավանեցի, բայց գիրքը կարդալուց ու հեղինակի իրական նպատակը հասկանալուց հետո չեմ կարող համեմատել գիրքն ու ֆիլմը: Ֆիլմը կարծես չի համապատասխանում գրքին: Միգուցե եթե գիրքը սկզբում կարդացած չլինեի, ֆիլմն ինձ ավելի դուր գար: Բայց ուրախ եմ, որ սկզբում գիրքն եմ կարդացել, որովհետև գիտեմ՝ ֆիլմից ինչ է դուրս մնացել կամ ավելացել: Գիրքը կարդալիս ու ֆիլմը դիտելիս երկու բացարձակապես տարբեր զգացողություն ես ունենում»¹⁷⁰:

«Գիրքը օգնեց ինձ հասկանալու, թե ինչ տառապանքների միջով են անցել մարդիկ եղեռնի ժամանակ: Ֆիլմում շատ մանրամասներ բացակայում են: Վեպում հերոսներին ու եղեռնին վերաբերող ահասարսուռ տեսարանների նկարագրությունը շատ պատկերավոր է, հանգամանալից ու համոզիչ: Ֆիլմում այս տեսարանները թռուցիկ են ներկայացված: Օրինակ՝ գրքում տղամարդկանց կոտորելու տեսարաններին զուգահեռ նկարագրվում է, թե ինչպես են կանայք արձագանքում, ինչ քայլերի են դիմում: Իմ կարծիքով՝ այդպիսի տեսարանները անհրաժեշտ էր ֆիլմում ներկայացնել ավելի մանրամասն, ու դա ավելի խոր տպավորություն կթողներ այն մարդկանց վրա, որոնք չգիտեն Հայոց Ցեղասպանության մա-

¹⁷⁰ Արամ Հաճյան, Ֆրեզնո:

սին: Ինչ վերաբերում է հերոսներին, ապա նրանք համահունչ են գրքի կերպարներին, շատ լավ են մտածված հազուատները՝ համապատասխան յուրաքանչյուր տեսարանին ու իրավիճակին, անթերի է շարքը: Ինձ համար դժվար էր դիտել ֆիլմի երկրորդ մասը, որտեղ ցուցադրվում են կանանց անասելի տառապանքներն ու պայքարը զոյատևելու համար, այնպիսի տպավորություն էր, կարծես ես նրանց հետ մասնակցում էի այդ ամենին: Գիրքն ինձ ավելի դուր եկավ, թեպետ «Արտույտների ագարակը» գերազանց ֆիլմ է»¹⁷¹:

